

ՉԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԻ

Գլխավոր տեղեկություն

Տիպ Չեկույց

Ակտի տիպ Հիմնական ակտ (22.11.2002-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր ՀՀԱԳԼՊՏ 2004.06.11/2(10)

Ընդունող մարմին Հայաստանի Հանրապետություն

Ընդունման ամսաթիվ 22.11.2002

Ստորագրման ամսաթիվ 22.11.2002

Հայաստանի անդամակցության

Բնօրինակը՝ անգլերեն

Աշխատանքային խումբ

2 Ե Կ ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԵԱԳԻՆ ԽՍԲԻ

1. Ներածություն

1. Ներկայացուցիչների խորհուրդը 1993թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած իր ժողովի ընթացքում ստեղծեց աշխատանքային խումբ՝ քննարկելու Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ-1947) 32-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության անդամակցության դիմումը, ինչպես նաև ներկայացնելու խորհրդին հանձնարարականներ, որոնք կարող են ընդգրկվել անդամակցության արձանագրությունում: 1995թ. հունվարի 31-ին Հայաստանի Կառավարությունը (WT/L/25) գրությամբ դիմեց Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) անդամակցելու համար՝ համաձայն ԱՀԿ հիմնադիր Համաձայնագրի 12-րդ հոդվածի դրույթների: Հետևելով Հայաստանի դիմումին և հաշվի առնելով 1995թ. հունվարի 31-ին Գլխավոր խորհրդի ընդունած Որոշումը (WT/GC/M/1), ՄԱԳՀ-1947-ին Հայաստանի անդամակցության Աշխատանքային խումբը վերափոխվել է ԱՀԿ անդամակցության Աշխատանքային խմբի: Աշխատանքային խմբի իրավասության շրջանակները ընդգրկված են նաև WT/L/25 փաստաթղթում:

2. Աշխատանքային խումբը հանդիպում է ունեցել 1996թ. հունվարի 24-ին և սեպտեմբերի 23-24-ին, 1997թ. մայիսի 14-ին, 1999թ. հունիսի 24-ին և 2002թ. նոյեմբերի 21-ին՝ նորին մեծություն պրն. Դ. Կեյնյոսի (Ավստրալիա) Նախագահությամբ:

Տեղեկություններ

3. Աշխատանքային խումբը, որպես քննարկման հիմք, իր առջև ուներ Հայաստանի արտաքին առևտրի վարչակարգի հուշագիրը (WT/ACC/ARM/1) և ԱՀԿ անդամների կողմից վերջինիս վերաբերյալ ներկայացրած հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ Հայաստանի իրավասու մարմինների կողմից ներկայացված պատասխանները (WT/ACC/ARM/2 and Corr.1; WT/ACC/ARM/5; և WT/ACC/ARM/8): Ի լրումն նշվածի, Հայաստանի ներկայացուցիչը աշխատանքային խմբին ներկայացրեց հետևյալ նյութերը.

- Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգիրքը, 2001թ. հունվարի 1,
- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 40, 13 փետրվարի 1993թ., «ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման լրացուցիչ միջոցառումների մասին»,
- 1995թ. փետրվարի 21-ի ՀՀ Կենտրոնական Բանկի խորհրդի N 31 որոշում «Բանկերի և դրանց մասնաճյուղերի ու գործակալությունների և Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ու գործակալությունների ստեղծման, գրանցման, լիցենզավորման ու գործունեության դադարեցման կանոնակարգման վերաբերյալ»,
- 1994թ. դեկտեմբերի 10-ի «Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
- «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը,
- 1994թ. նոյեմբերի 30-ի «Ալցիգային հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
- «Գրավի մասին» ՀՀ օրենքը,
- «Ձեռնարկությունների և մասնավոր ձեռներեցների սնանկացման մասին» օրենքը, 15 հունիսի 1995թ.,
- 1994թ. դեկտեմբերի 19-ի «Կորպորացիոն հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը, 9 դեկտեմբերի 1999թ.,
- «Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը, 9 դեկտեմբերի 1999թ.,
- «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը, 21 օգոստոսի 1993թ.,
- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, 8 փետրվարի 1995թ.,
- «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը, 27 ապրիլի 1994թ.,
- «Պետական հողային ստուգումների մասին» ՀՀ օրենքը,
- «Գյուղացիական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսության մասին» ՀՀ օրենքը, 22 հունվարի 1991թ.,
- Հողային օրենսգիրքը, 29 հունվարի 1991թ.,
- Գյուղացիական և կոլեկտիվ գյուղացիական տնտեսությունների սեփականության մեջ գտնվող հողամասերի առավելագույն չափերի մասին Գերագույն խորհրդի որոշումը,
- ՀՀ կառավարության 1994թ. դեկտեմբերի 16-ի N 581 որոշումը «Հայաստանի Հանրապետությունում առողիտորական գործունեության ժամանակավոր կանոնադրությունը հաստատելու մասին»,
- 1995թ. հունվարի 17-ի ՀՀ կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներմուծման և արտահանման լիցենզավորման կարգի մասին»,
- 1995թ. փետրվարի 8-ի ՀՀ կառավարության որոշում N 67 «Հայաստանի Հանրապետության 1995թ. պետական գնումների կարգի մասին»,
- 1995թ. օգոստոսի 19-ի ՀՀ կառավարության որոշում N 4 «Ապրանքային և սպասարկման նշանների ժամանակավոր կանոնակարգը հաստատելու մասին»,
- 1994թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության որոշում N 606 «Ալցիգային հարկի դրույքաչափերի մասին»,
- 1994թ. փետրվարի 23-ի ՀՀ կառավարության որոշում N 88 «Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների արտահանման և ներմուծման վերաբերյալ վիճակագրական հաշվետվության ներկայացման կարգի մասին»,
- 1991թ. մարտի 5-ի Նախարարների խորհրդի որոշում N 161 «Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին»,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 1995թ. դեկտեմբերի 29-ի որոշում N124 «Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներմուծման և արտահանման ոչ տարիֆային կարգավորման մասին»,

- Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հայտարարությունը ԱՄՀ Համաձայնագրի 8-րդ հոդվածին միանալու մասին,
- 1996թ. հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության օրենքը «ՀՀ Կենտրոնական բանկի մասին»,
- 1996թ. հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»,
- 1996թ. հունիսի 10-ի Հայաստանի Հանրապետության օրենքը «Բանկերի սնանկացման մասին»,
- «Պետական սեփականության ձեռնարկությունների և անավարտ կառույցների մասնավորեցման և ապագայնացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
- «Հայաստանի Հանրապետության տարածքում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մասին» Հայաստանի Հանրապետության 1995թ. N 415 կառավարության որոշման Ցանկ 2.
- 1996թ. փետրվարի 27-ի Հայաստանի Հանրապետության Էլեկտրոնային Նախարարի հրամանը «ՀՀ-ում սև և գունավոր մետաղների ջարդոնների նվազագույն գների մասին»,
- 1996թ. հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանը «Հայաստանի Հանրապետություն դեղամիջոցների ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից արտահանման վերաբերյալ թույլտվություն տրամադրելու մասին»,
- 1996թ. հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի հրամանը «Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում (վտանգված տեսակների ցանկում) ընդգրկված վայրի կենդանիների և բույսերի արտահանման վերաբերյալ եզրակացությունների կայացման մասին»,
- 1996թ. հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և սննդի նախարարի հրամանը «Բույսերի պաշտպանության համար կյուբերի` Հայաստանի Հանրապետություն ներմուծման վերաբերյալ եզրակացությունների կայացման մասին»,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանը «Դեղագործական գործունեության կանոնակարգման և դեղամիջոցների ու բժշկական միջոցների որակի ապահովման մասին»,
- «ՀՀ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1996-1997 թվականների ծրագրի մասին» 1996 թ. մարտի 20-ի ՀՀ օրենքը,
- «Մաքսավճարների որոշման մասին 1993թ. դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 615 որոշման Հավելված N 1-ում փոփոխություն կատարելու մասին» 1996թ. մայիսի 1-ի ՀՀ կառավարության որոշումը,
- «Մաքսավճարի մասին» 1998թ. դեկտեմբերի 30-ի ՀՀ օրենքը,
- «Ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների սահմանման» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը,
- Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը, 5 մայիսի 1998թ.,
- Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 20 հունվարի 1998թ.,
- Քրեական դատավարության օրենսգիրք, 20 հունվարի 1998թ.,
- «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքը, 12 մայիսի 1997թ.,
- 1997թ. մայիսի 12-ի «Ապրանքային ու սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը,
- «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը, 21 օգոստոսի 1993թ.,
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 27 մայիսի 1996թ.,
- «Գաղտնի տեղեկությունների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Սեփեցիոն նվաճումների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը.,
- «Ինտեգրալ միկրոսխեմաների, տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 3 փետրվարի 1998թ.,
- ԱՀԿ ՄՍԱԿ Համաձայնագրին համապատասխան «ՀՀ արտոնագրերի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «ՀՀ-ում արտադրանքի և ծառայությունների պարտադիր սերտիֆիկացման մասին» ՀՀ կառավարության 1998թ. հունվարի 16-ի թիվ 15 որոշումը,
- Հայաստանի Հանրապետությունում պարտադիր սերտիֆիկացման ենթակա սերտիֆիկացված արտադրանքի իրացման (ծառայությունների մատուցման) և գովազդի ժամանակ համապատասխանության սերտիֆիկատների կիրառման» կարգը,
- «Հայաստանի Հանրապետությունում պարտադիր սերտիֆիկացման աշխատանքների համար վճարման» կարգ, 16 հունվարի 1998թ.,
- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 171 «Ագրարային կանոնները հաստատելու մասին», 11 մարտի 1998թ.,
- Հայաստանի Հանրապետությունում միջատների, գյուղատնտեսական մշակաբույսերի, անտառի ու զարդային բույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի նպատակով օգտագործման համար թույլատրված թունավոր և կենսաբանական միջոցների ցանկը,
- Հայաստանի Հանրապետությունում կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ցանկը,
- Կարանտինային բույսերի, սննդամթերքի, սերմերի ու բույսերի տնկիների ցանկը կարանտինային պաշտպանության նպատակներով,
- «Ագրարային պետական տեսչությունների մասին» ՀՀ օրենքը, 15 մայիսի 1996թ.,
- «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների, սահմանային անասնաբուժական վերահսկողության կայանների և բույսերի պետական կարանտինային ծառայությունների միջև համագործակցության մասին», 27 հունվարի 1998թ. Կանոնակարգ,
- Հայաստանի Հանրապետության օրենքը «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին», 20 մարտի 2000թ.,
- Հայաստանի Հանրապետության օրենքը «Անասնաբուժության մասին», 26 հոկտեմբերի 1999թ.,
- Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 26 «Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին» ու «ՀՀ-ում չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների առանձին հոդվածների կիրարկումն ապահովող միջոցառումների մասին, 20 հունվարի 1998թ.,
- Հայաստանի Հանրապետության կառավարության N 26 որոշմամբ «Օտարվող ապրանքների քանակի պետական չափագիտական վերահսկողության պահպանման» կարգը,
- 2000թ. հունվարի 11-ի կառավարության որոշում N 9 «Տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման և կիրառման կարգը հաստատելու մասին»,
- «Հարկերի մասին» ՀՀ օրենք` ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997թ. ապրիլի 14-ին,
- «Ալցիգային հարկի մասին» ՀՀ օրենքը,

- «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը,
- 2000 թ. դեկտեմբերի 31-ի ՀՀ կառավարության որոշում N 913,
- «Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, 2000թ. դեկտեմբերի 26,
- «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հնակազնագցման (հակադեմաֆիսգային) և փոխհատուցման միջոցառումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Դեղերի մասին» ՀՀ օրենքը (1998 թ. հոկտեմբերի 27),
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (2001թ. մայիսի 30),
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը (2001թ. ապրիլի 26),
- ՀՀ կառավարության 2000թ. մայիսի 12-ի թիվ 239 որոշում և փոփոխություններ,
- ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 20-ի թիվ 581 որոշում,
- «ՀՀ Մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Ակցիզային հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Ներածական հայտարարություններ

4. Ներածական հայտարարության մեջ Հայաստանի ներկայացուցիչը հայտնել է, որ 1991թ. նախկին Խորհրդային Միությունից անկախության հռչակումից ի վեր, չնայած քաղաքական և տնտեսական մեծ դժվարությունների, Հայաստանը վճռական կերպով հետամուտ է եղել տնտեսության ազատականացմանը՝ ղեկավարվելով ժողովրդավարության և ազատ շուկայական տնտեսակարգի սկզբունքներով: Տնտեսական անկումն արտահայտվել է արտադրության կտրուկ անկումով, նվազող եկամուտներով և առևտրային հոսքերով, էլեկտրաէներգիայի խիստ պակասով և սննդամթերքի ու այլ սպառողական ապրանքների սակավությամբ: Չնայած այս անբարենպաստ պայմաններին, Կառավարությունը հաստատուն կերպով իրագործել է տնտեսական բարեփոխումների ծրագիրը՝ շեշտը դնելով ազատականացման, կայունացման և տնտեսական վերակառուցման վրա: Անկախություն հռչակելուց հետո գյուղատնտեսական հողերի մեծ մասը մասնավորեցվել է և հետագայում սեփականաշնորհումը տարածվել է տնտեսության այլ բնագավառների վրա: Տնտեսության ապամենաշնորհումը և ապականակարգումը վերացրեցին մասնավոր հատվածի գործունեությանը խոչընդոտող արգելքները բոլոր տնտեսական բնագավառներում, բացառությամբ մի քանիսի: Գնային վերահսկողություն միայն կիրառվել է սահմանափակ թվով կարևորություն ունեցող ապրանքների և ծառայությունների նկատմամբ՝ հետագայում աստիճանաբար հանելով նաև դրանք: Արտասահմանյան ներդրումները խրախուսվել են:

5. Այնուհետև նա ավելացրեց, որ մակրոտնտեսական առումով, Կառավարության առաջնահերթ խնդիր է հանդիսացել կայունացման քաղաքականությունը՝ բյուջեի ծանր դրության պայմաններում դրամի արժեզրկման գործընթացի կանգնեցումը և կայուն փոխարժեքի պահպանումը: Կառավարությանը հաջողվել է իջեցնել դրամի արժեզրկումը մեկ նիշի մակարդակի՝ 1993թ. վերջում գերակայող եռանիշ մակարդակից: 1997թ. վերջի դրությամբ դրամի տարեկան արժեզրկումը կազմում էր 21.9 տոկոս, 1998թ. համար՝ 2.9 տոկոս, 1999թ. համար՝ 6 տոկոս, 2000թ. համար՝ 0.8 տոկոս, և 2001թ. համար՝ 2.9 տոկոս: Կառավարությունը նպատակաուղղվել էր ապահովելու առողջ և կայուն մակրոտնտեսական միջավայր՝ տնտեսության հետագա աճի և զարգացման նպատակով: Համաշխարհային տնտեսության մեջ լիակատար ինտեգրացումը և Հայաստանի տնտեսական հարաբերությունների շարունակական զարգացումները մյուս երկրների հետ եղել են Կառավարության բարեփոխումների կենտրոնական հիմնակետերը: Հայաստանի Կառավարությունը հավատում է, որ այս նպատակներին կարելի է հասնել բաց տնտեսական քաղաքականությամբ՝ ընդգծելով միջազգային համեմատական առավելությունները: Դա էր պատճառը, որ Հայաստանի Կառավարությունն առաջնային էր համարում ԱՀԿ-ին անդամակցելը և ցանկանում էր բանակցություններ վարել այդ հարցը հնարավորինս արագ լուծելու ուղղությամբ:

6. Աշխատանքային խումբը ողջունեց ԱՀԿ հիմնադիր Համաձայնագրին միանալու Հայաստանի դիմումը: Աշխատանքային խմբի որոշ անդամներ նշեցին, որ չնայած ներքին և արտաքին դժվարություններին, բարեփոխումների և առևտրի ազատականացման առնչությամբ Հայաստանը ունեցել է եական առաջընթաց՝ ապահովելով տնտեսական աճը: Այդ անդամներն արտահայտեցին Հայաստանին աջակցելու իրենց ցանկությունը, բազմալողմ առևտրային համակարգում ներդաշնակեցման գործում, նշելով բանակցություններ վարելու իրենց պատրաստակամությունը:

2. Տնտեսություն, տնտեսական քաղաքականություն և արտաքին առևտուր

Արտարժույթի փոխանակում և վճարումներ

7. Ի պատասխան Հայաստանի արտարժույթի փոխանակման պահուստների և դրամի փոխակերպելիության վերաբերյալ Աշխատանքային խմբի անդամների հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հարորդեց, որ համախառն պաշտոնական պահուստները 2000թ. վերջին կազմել են 330 միլիոն ԱՄՆ դոլար, փակվելով ներմուծումների մոտավորապես 4 ամիսը: Համախառն պաշտոնական պահուստները աճել են 1994թ. 0.7 ամսվա ներմուծումների ընդգրկումից մինչև 2.3 ամսվա՝ 1996թ., 2.7 ամսվա՝ 1997թ. և 3 ամսվա՝ 1998 թ.: 1997 թ. մայիսի 29-ին Հայաստանն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի /ԱՄՀ/ Համաձայնագրի 8-րդ հոդվածը և դրա Բաժին 2-ից, 3-ից և 4-ից հետևող պարտավորությունները՝ ձեռնպահ մնալու վճարումների ու փոխանցումների վրա սահմանափակումներ դնելուց և խտրական արժույթային միջոցառումներից, կամ արժույթային բազմակի գործառնություններից՝ առանց ԱՄՀ-ի թույլտվության: Համաձայն «Արտարժույթի կանոնակարգման և վերահսկման իրականացման մասին» N 141 բանաձևի, չկան սահմանափակումներ ընթացիկ հաշիվների գործարքների նկատմամբ: Ֆիզիկական և իրավաբանական անձանց թույլ է տրվել գործել որպես արտարժույթի գործարքառուներ՝ Կենտրոնական բանկից արտոնագիր ստանալուց հետո: Որպես արտարժույթի օրվա փոխարժեք Հայաստանի Կենտրոնական բանկը (ՀԿԲ) սահմանել է արտարժույթի շուկայի նախորդ օրվա առ ու վաճառքի միջնակետը (արտարժույթի շուկային մասնակիցներ են համարվում նրանք, որոնք գործում են արժեթղթերի ոչ բորսայական շուկայում, ֆոնդային բորսայում, արտարժույթի առևտրի

գրասենյակներում և այլն): Արտարժույթի գործարքառուները (ներառյալ՝ բանկերը) ազատ են սահմանելու իրենց սեփական փոխարժեքները գործարքների համար: Ոչ տեղական բանկերը կարող են լիազորված լինել մասնակցելու արտարժույթի առևտրի տեղական շուկայում՝ տեղական բանկերի համար սահմանված պայմաններին հավասար պայմաններով: Իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Հայաստանում մշտական և ոչ մշտական բնակվող, կարող են բացել և պահել իրենց ընթացիկ հաշիվները օտարերկրյա բանկերում առանց որևէ սահմանափակումների: Հայաստանում մշտապես բնակվող անձինք կարող են կատարել կապիտալի տեղաշարժի հետ կապված գործարքներ առանց որևէ սահմանափակումների, եթե այնպես հատկորոշված չէ ՀԿԲ-ի կողմից: Հայաստանում ոչ մշտական բնակվող անձինք կարող են կատարել կապիտալի տեղաշարժի հետ կապված գործարքներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի»: Ակրանքափոխադրման վրա հիմնված բոլոր երկկողմ հաշվանցման կարգավորումները վերացվել են:

Եկամտահարկ

8. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 1998թ. հունվարի 1-ին, եկամտահարկը որոշվում է հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հարկատուի ունեցած ընդհանուր եկամտի հիման վրա: Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտից կարող են կատարվել հետևյալ նվազեցումները՝ նվազեցվող եկամուտ, անձնական նվազեցումներ և ծախսեր: Համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 20000 դրամի չափով: Եկամտահարկի դրույքաչափերը հետևյալն են՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև 80,000 դրամ	հարկվող եկամտի 10 տոկոսը
80,000 դրամից ավելի	8,000 դրամին գումարած 80,000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև 960,000 դրամ	հարկվող եկամտի 10 տոկոսը
960,000 դրամից ավելի	96,000 դրամին գումարած 960,000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

Այնուհետև նա ավելացրեց, որ ռոյալթիների և գույքի վարձակալության տալու եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Հետևյալ վճարումների տեսակները ազատված են եկամտահարկից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության վճարները, զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ վճարները, վճարվող այլմեոսները, արյուն կամ կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացած գումարները, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները:

Հողի հարկ

9. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ հողի հարկը կիրառվում է հողի սեփականատերերի և պետական սեփականություն հանդիսացող հող օգտագործողների նկատմամբ: Հողի հարկը սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված տարեկան վճարի ձևով: Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով, իսկ ոչ գյուղատնտեսական օգտագործման հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է տվյալ հողատեսակի կադաստրային գնահատման արժեքի 1 տոկոսի չափով (բնակավայրերից դուրս՝ 0.5 տոկոս): Բույսերի մշակումը խրախուսելու նպատակով հողի հարկից ազատվում են նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները: Անբարենպաստ գյուղատնտեսական պայմանների դեպքում Կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնությամբ, կարող է հարկային որոշակի արտոնություններ շնորհել որոշ հարկատուների կամ հարկատուների խմբերի համար: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին ներկայացված «Հողի հարկի մասին» օրենքի նոր նախագծում ընդգծված է հարկի սեփականության բնույթը և պարզեցված են հարկի հաշվարկման եղանակները: Մասնավորապես, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողակտորների համար հարկի չափը կհաշվարկվի իրենց արժեքի հիման վրա, և այդ արժեքը կորոշվի համաձայն նույն օրենքի:

Շահութահարկ

10. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ «Շահութահարկի մասին» ՀՀ նոր օրենքը, որն ուժի մեջ է մտել 1998թ. հունվարի 1-ին, սահմանում է շահութահարկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար: Ռեզիդենտների համար շահութահարկը գանձվում է Հայաստանում և նրա սահմաններից դուրս ստացված հարկվող շահույթից: Ոչ ռեզիդենտների համար շահութահարկը գանձվում է հայաստանյան աղբյուրներից ստացված հարկվող շահույթից: Ռեզիդենտների համար շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Ոչ ռեզիդենտների համար հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
- ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները, և
- Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները:

Ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից շահութահարկ գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

Եկամտի տեսակը	Շահութահարկի չափը

Ապահովագրական հատուցումներ, վերապահովագրման վճարներ, փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5 տոկոս
Շահաբաժիններ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից), ինչպես նաև այլ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ	10 տոկոս

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները ազատվում են շահութահարկի վճարումից: Սկսած 1998թ. հունվարի 1-ից, կանոնադրական կապիտալում 500 միլիոն դրամը գերազանցող օտարերկրյա ներդրումներով Հայաստանի ռեզիդենտին թույլ է տրվել նվազեցնել շահութահարկի գումարը հետևյալ չափերով՝

Ռեզիդենտի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափաքանակը լրանալու տարեթիվը	Օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի շահութահարկի նվազեցման չափը՝ ըստ տարիների	
	100 տոկոսով	50 տոկոսով
1998	1999 և 2000թ.	2001-2008թ. ներառյալ
1999	2000 և 2001թ.	2002-2009թ. ներառյալ
2000	2001 և 2002թ.	2003-2008թ. ներառյալ
2001	2002 և 2003թ.	2004-2007թ. ներառյալ
2002	2003 և 2004թ.	2005-2006թ. ներառյալ
2003	2004 և 2005թ.	
2004	2005 և 2006թ.	
2005	2006 և 2007թ.	
2006	2007 և 2008թ.	
2007	2008 և 2009թ.	

Եթե հարկատուն դադարեցնում է իր գործունեությունը հարկերի նվազեցման ժամկետի ընթացքում, ապա շահութահարկի գումարը հաշվարկվում է լրիվ չափով՝ տնտեսական գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար:

Պարզեցված հարկ

11. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ համաձայն «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2000թ. հուլիսի 5-ին, պարզեցված հարկը փոխարինել է ԱՎՀ-ին և շահութահարկին կամ եկամտահարկին (ըստ կիրառության)՝ ձեռնարկատիրական գործունեության համար: Հայաստանյան կամ օտարերկրյա բոլոր ձեռներեցները հավասարապես հարկվում են: Իրավաբանական անձանց համար պարզեցված հարկը փոխարինում է ԱՎՀ-ին և (կամ) շահութահարկին: Անհատ ձեռներեցների համար պարզեցված հարկը փոխարինում է ԱՎՀ-ին և (կամ) եկամտահարկին: Արտոնությունները ԱՎՀ-ի և շահութահարկի կամ եկամտահարկի գծով փոխանցվել են պարզեցված հարկի հարկատուների համար: Իրավաբանական անձիք և անհատ ձեռներեցները ենթակա են հարկման, եթե նախորդ հաշվետու տարվա ընթացքում ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱՎՀ-ի) չի գերազանցել 30 միլիոն դրամը: Այս սահմանափակումը չի տարածվում խանութների, կրպակների (մանրածախ առևտրով զբաղվող խանութներ, փողոցային առևտրի կետեր, ռեստորաններ, բարեր և այլն) միջոցով առևտրային գործունեության և հանրային սննդի ոլորտում գործունեության վրա: Հետևաբար, պարզեցված հարկը կիրառելի է նրանց նկատմամբ՝ անկախ շրջանառության ընդհանուր գումարից: Այնուհետև նա նշել է, որ իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցները, որոնց նկատմամբ պարզեցված հարկ է կիրառվել է 2001թ., կազմել է ՀՆԱ-ի 0.8 տոկոսը: Պարզեցված հարկը չի կիրառվում հետևյալ հարկատուների նկատմամբ՝

- ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների,
 - համապատասխան տարվա հունվարի 1-ի դրությամբ 100 հազար դրամը գերազանցող չվճարված պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժեր և տուգանքներ) ունեցող հարկատուները,
 - վարկային և ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, առևտրորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցողները,
 - ենթադրվող հարկատուները՝ «ենթադրվող վճարումների մասին» օրենքի սահմանումների ներքո,
 - «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքներից մնացորդ ապրանքներ ունեցող հարկատուները (ներմուծման պահին ԱՎՀ-ի հարկմանը ոչ ենթակա և նախորդ տարվա ընթացքում չվճարված), որոնց արժեքը գերազանցում է 1 միլիոն դրամը,
 - այն կազմակերպությունները, որոնք դադարել են դիտարկվել որպես այդպիսիք նախքան այդ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,
 - գյուղատնտեսական արտադրանքներ արտադրողները:
- Այնուհետև նա ավելացրեց, որ պարզեցված հարկի հիմք է հանդիսանում հաշվետու եռամսյակի ընթացքում հարկատուների կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը:
- Այլ առևտրային գործունեության համար հարկը որոշվում է իրացման շրջանառության հիման վրա՝ համաձայն հետևյալ տոկոսադրույքների.
- 8 տոկոս՝ 30 միլիոն դրամից ցածր ծավալի համար,
 - 13 տոկոս՝ 30 միլիոն դրամից բարձր ծավալի համար:
- Խանութներում և կրպակներում հարկը հաշվարկվում է իրացման շրջանառության նկատմամբ հետևյալ դրույքաչափերով՝
- ա) մինչև 30 միլիոն դրամ ծավալի համար՝ 5 տոկոս,
 - բ) 30 միլիոն դրամը գերազանցող ծավալի համար՝ 7 տոկոս:

Գույքահարկ

12. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ գույքահարկը հանդիսանում է ուղղակի հարկ, որը կիրառվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող շինությունների և փոխադրամիջոցների նկատմամբ: Ծինությունների նկատմամբ կիրառվող հարկի հաշվարկը կատարվում է հիմնվելով դրանց արժեքի վրա (որը որոշվում է համաձայն Գույքի մասին օրենքի): Փոխադրամիջոցների վրա դրվող հարկը որոշվում է հիմնվելով դրանց շարժիչի հզորության և փոխադրամիջոցի տարիքի վրա: Ծինությունների վերագնահատումը կատարվում է երեք տարին մեկ անգամ: Եթե բնակելի շինության արժեքը 3 միլիոն դրամից պակաս է, այն ազատվում է գույքահարկից: Եթե բնակելի շինությունն ունի 3 միլիոն դրամից ավելի արժեք, հարկի դրույքաչափերը որոշվում են համաձայն սանդղակի՝ տատանվելով 0.1-0.8 տոկոսի տիրույթում:

13. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի, հասարակական և արտադրական նշանակության շինությունների նկատմամբ կիրառվող հարկը սահմանվել է որպես դրանց արժեքի 0.6 տոկոս:

Շարժիչային տրանսպորտային փոխադրամիջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

մինչև տասը նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան (շարժիչի հզորությունը) է՝

- 120 ձիաուժից/ 88 կիլովատից պակաս՝ 200 դրամ մեկ ձիաուժին/ 272 դրամ մեկ կիլովատին,
- 120-250 ձիաուժ/ 88-184 կիլովատ՝ 300 դրամ յուրաքանչյուր ձիաուժի դիմաց կամ 408 դրամ՝ յուրաքանչյուր կիլովատի համար, տասը և ավելի նստատեղ ունեցող ուղևորային փոխադրամիջոցների համար, եթե հարկի հիմքը (շարժիչի հզորությունը) հետևյալն է՝
- 200 ձիաուժից/147 կիլովատից պակաս՝ 100 դրամ յուրաքանչյուր ձիաուժի համար/ 136 դրամ մեկ կիլովատին,
- 200 ձիաուժից /147 կիլովատից ավելի՝ 200 դրամ մեկ ձիաուժի համար/ 272 դրամ մեկ կիլովատին,

Պետական սեփականություն և սեփականաշնորհում

14. Ի պատասխան պետական սեփականությանը պատկանող միջոցների սեփականաշնորհման վերաբերյալ հարցումների, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ սեփականաշնորհման գործընթացը Հայաստանում սկսվել է 1991թ., երբ Կառավարության N 335 որոշումը թույլ տվեց սեփականաշնորհել փոքր ձեռնարկությունները՝ կոմունալ ծառայությունների, հասարակական սննդի, առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում: 1992թ. ընդունված «Ձեռնարկությունների և անավարտ շինությունների սեփականաշնորհման և ապագայնացման մասին» ՀՀ օրենքը իրավական հիմք էր ամբողջ հետագա սեփականաշնորհման գործընթացի համար: Այնուհետև նա ավելացրեց, որ մինչև 2002թ. հունվարի 1-ը Հայաստանի Կառավարությունը ընկերությունների սեփականաշնորհման վերաբերյալ ընդունել է 2067 որոշում (ներառյալ 170 որոշում ձեռնարկությունների լուծարման վերաբերյալ): Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է օրենքներ Հայաստանի Հանրապետությունում Սեփականաշնորհման ծրագրի վերաբերյալ:

15. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանում սեփականաշնորհման գործընթացի սկզբից ի վեր իրականացվել են Ազգային ժողովի կողմից ընդունված հինգ սեփականաշնորհման ծրագրեր: Առաջին երկու սեփականաշնորհման ծրագրերը ընդգրկել են համապատասխանաբար 1994-1995թթ.: Դրանց հետևել է 1996-1997թթ. և 1998-2000թթ. սեփականաշնորհման ծրագրերի ընդունումը: Այդ սեփականաշնորհման ծրագրերը ընդգրկել են արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի բնագավառների ընկերությունների մեծ մասը, ինչպես նաև բոլոր «փոքր ձեռնարկությունները» (կոմունալ ծառայությունների, հասարակական սննդի, առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում) և անավարտ շինարարությունները: Պետական գույքի 2001-2003թթ. սեփականաշնորհման ներկայիս ծրագիրն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2001թ. հուլիսի 27-ին: Այն ընդգրկում է բոլոր ձեռնարկությունները, որոնց սեփականաշնորհումը նախատեսված էր կատարել նախորդ ծրագրերի ընթացքում: Այնուհետև նա նշեց, որ օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք ազատ են մասնակցելու ցանկացած պետական միջոցի սեփականաշնորհմանը:

16. Ի պատասխան տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ լրացուցիչ պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ մինչև 2002թ. հունվարի 1-ը սեփականաշնորհվել են 1643 միջին և խոշոր ձեռնարկություններ: Դրանցից 1081-ը սեփականաշնորհվել է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության միջոցով, 62-ը՝ բաժնետոմսերի աճուրդների միջոցով, 134-ը գնվել է աշխատողների կողմից, 102-ը՝ մրցույթների միջոցով, 20-ը՝ աճուրդների միջոցով և 377-ը՝ ուղիղ վաճառքի միջոցով, որոնցից 200-ը՝ վարձակալներին: Սեփականաշնորհման հիմնական ձևն է հանդիսացել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը (սեփականաշնորհված ձեռնարկությունների 65.8 տոկոսը): Ձախողվել է 36 ընկերության սեփականաշնորհումը, որոնք էլ լուծարվել են, ընդհանուր առմամբ ձախողվել է 367 ձեռնարկության սեփականաշնորհում՝ հիմնականում բարձր գների, վատ գործարար հեռանկարների և ծանր պարտքերի պատճառով: Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ 2001թ. ՀՆԱ 80% պատկանել է մասնավոր ոլորտին, 20%՝ պետական ոլորտին: Վերջին տարիներին պետական ոլորտի մասնաբաժինը նվազում է և այդ գործընթացը շարունակվում է: Հայաստանի ներկայացուցիչը նաև նշեց, որ 2001թ. պետական ոլորտի մասնաբաժինը կազմել է արտահանման դեպքում՝ 8,4%, ներմուծման՝ 5,7%:

17. Ի պատասխան՝ օտարերկրացիներին վաճառված սեփականաշնորհված ձեռնարկությունների մասին տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ լրացուցիչ պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ հետևյալ ձեռնարկություններն են սեփականաշնորհվել միջազգային մրցույթների միջոցով՝ «Արմենթեյ» ՊԶ, Երևանի կոնյակի գործարանը, «Արմենիա» և «Ամի» հյուրանոցները (որոնց սեփականաշնորհման ընթացքում ներկա է գտնվել միջազգային միջնորդ): Ակնկալվում է պետական էլեկտրամատակարարման, արտադրման ու բաշխման ցանցի, «Նաիրիտ» գիտահետազոտական միավորման, ինչպես նաև «Հայկական Ավիաուղիներ» ընկերության սեփականաշնորհումը կամ կառավարման իրավունքների փոխանցումը: Էներգետիկայի ոլորտում արդեն տասնմեկ հիդրոէլեկտրակայան է սեփականաշնորհվել, որոնցից երկուսը գնվել են օտարերկրյա անձանց կողմից: Սեփականաշնորհվել է Հայաստանի գազի բաշխման ցանցը, որի արդյունքում կազմավորվել է «ՀայՌուսԳազվորդ» ՓԲԸ-ն: 2001թ. սեփականաշնորհվել են «Ալմաստ» ՓԲԸ-ն, «Սապֆիր» ԲԸ, «Տրանզիտոր» և «Հրազդան Ցեմենտ» ռազմավարական ձեռնարկությունները, որոնցից մեկը՝ օտարերկրյա իրավաբանական անձի:

18. Ի պատասխան տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ լրացուցիչ պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ սկսած 1999թ. սեփականաշնորհումը Հայաստանում կենտրոնացել է ռազմավարական ներդրողներ ներգրավելու վրա, ինչպես նաև՝ սեփականաշնորհված ձեռնարկություններում առանձին փոքր բաժնետիրությունները խրախուսելու վրա: Կառավարությունը շարունակում է ուղիներ որոնել նոր աշխատատեղեր ստեղծելու և սեփականաշնորհված ձեռնարկություններում սոցիալական ծրագրերը զարգացնելու ուղղությամբ: Դրանց հասնելու նպատակով, բաժնետոմսերը սեփականաշնորհվել են մրցույթի միջոցով, որի պայմաններում արտացոլվել են տարբեր զարգացման գործոններ, ինչպես նաև գինը:

19. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցադրեցին, թե արդյոք բացառվել է որևէ ոլորտ սեփականաշնորհման գործընթացից: Ի պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն «2001-2003 թթ. սեփականաշնորհման ծրագրի», հետևյալ ոլորտների ձեռնարկությունները ենթակա չեն սեփականաշնորհման.

- քաղաքացիական պաշտպանության և զորահավաքներ անցկացնող հաստատությունները, զինվորական կազմավորումները,
 - դրամահատման, պետական շքանշանների, կնիքների և դրոշմակնիքների արտադրման ձեռնարկությունները,
 - հիմնական հետազոտական հաստատությունները,
 - երկրաբանական, քարտեզագրական, գեոդեզիական, հիդրոդերևույթաբանական ձեռնարկությունները, շրջակա միջավայրի և բնական պաշարների պայմանների և պաշտպանության վրա հսկողություն իրականացնող ձեռնարկությունները,
 - պետական ռազմավարական պահուստները և պահեստները,
 - սանիտարա-համաճարակային ծառայություններ տրամադրող ձեռնարկությունները,
 - ստանդարտացման և չափագիտական ծառայությունները,
 - երկաթուղիները, հասարակական մայրուղիները, երևանի մետրոն, երկաթուղու և օդային երթևեկության անվտանգության ծառայությունները, բանակային ավտոշարայունները,
 - ռադիոակտիվ նյութեր (և դրանց համար սարքավորումներ) արտադրող ձեռնարկությունները, ինչպես նաև այս բնագավառում հետազոտական և շինարարական գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունները,
 - ուղղիչ տները և ուղղիչ աշխատանքային հաստատությունները,
 - Հայաստանի Հանրապետության միջնակարգ ուսումնական հաստատությունները:
- Այսուհետև նա ավելացրեց, որ չեն սեփականաշնորհվելու ընդհանուր առմամբ սեփականաշնորհման ենթակա այն միավորները, որոնք գտնվում են.
- ճարտարագիտական-տեխնիկական շենքերում, տրանսպորտային կառույցում (կամուրջներ, գետնանցումներ, նկուղներ, ստորգետնյա կառույցներ և այլն) կամ այնպիսի գոտիներում, ինչպիսիք են երկաթուղիները, սոցիալական ոլորտի միավորները (դպրոցներ, ինստիտուտներ, մշակութային շինություններ և այլն),
 - պաշտպանական և անվտանգության բնույթի շինություններում:
- Նա նշեց, որ սեփականաշնորհման չենթարկվող ձեռնարկությունները կազմում են ՀՆԱ-ի ընդամենը 8%-ը:

Աղյուսակ 1 (ա) 1994-2002 թթ. ընթացքում սեփականաշնորհված ձեռնարկությունները

Սեփականաշնորհման տեսակը	Սեփականաշնորհված		Աղյուսակային մասնաբաժնի արժեքը	Գրավոր տեսչության համարներ	Քաղաքացիական ծառայության համարներ	Մշակույթ	Կրթություն	Ցուցանիշային համակարգ	Պետական գործընկերություն	Առողջապահություն	Փոխադրված կամ փոխադրված	Այլ	Չսեփականաշնորհված	
	Ընդամենը	2001 թ. ընթացքում											Ընդամենը	2001 թ. ընթացքում
Իրիդիում	377	48	144	67	40	17	8	24	25	15	5	32	17	13
Բուրձնի և քարածուխ	200	10	81	29	30	11	7	9	1	8	1	23		3
Միջոց	102	21	20	24	18		9	9	15	1		6	14	136
Անուր	20	1	9	10				1					4	18
Արտադրողական	62	26	27	0			1				2			3
Արտադրողական ընդհանուր	1081	20	395	344	186	30	15	40	14	1	30	20	43	196
Մասնավորապես լուծված	1							1						1
Նոր արտադրողական ընդհանուր	1643	90	594	472	250	47	32	82	54	17	37	58	78	367
Ընդամենը	1377	26	25	29	37	-	3	0	17	8	1	11		
Կառավարական	48	21	12	7	8		1	2	13	1				5
Անվտանգության ընթացքում գտնվող	52	17	10	8	24		1	4				1	4	
Անվտանգության վերաբերյալ դատարանի որոշում	40	25	9	7	23		1	4				1	1	
Անվտանգության վերաբերյալ դատարանի որոշում բացակայություն	0	2	1	1	1									3
Կառավարական ձեռնարկություններ	30	13	3	14	7		1		2	7				2

Աղյուսակ 1 (բ) Մինչև 1999 թ. սեփականաշնորհված փոքր ձեռնարկությունների թիվը

	Կատարված գնահատում	Սեփականաշնորհված 1994-1999 թթ.	Աճուրդների միջոցով սեփականաշնորհված	Վաճառքի ենթակա աճուրդի միջոցով
Փոքր ձեռնարկություն	8308	9391	286	7

Աղյուսակ 1 (գ) Հանրագումարային սեփականաշնորհում

	Վճարված (հազար դրամ) Հանրագումար	որոնցից՝ հավաստագրերով	դրամով
Միջին և մեծ ձեռնարկություններ	105 321 836,2	39 766 020,0	65 555 816,2
Անվարտ կառույց	524 912,4	176 180,0	348 732,4
Փոքր ձեռնարկություններ	27 161 321,8	23 856 460,0	3 304 8 61,8
Հանրագումար	133 008 070,4	63 798 660,0	69 209 410,4

Համաձայն՝ 2001թ. ի վեր «Սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների, վերոնշյալ աղյուսակի նկատմամբ կիրառվում են հետևյալ փոփոխությունները՝

1. «Միջազգային մրցույթներ» սեփականաշնորհման եղանակը դադարեցվել է, քանի որ բոլոր ակնկալվող գնորդները կարող են մասնակցել մրցույթին, այնպես որ բոլոր տեսակի մրցույթները ներկայացված են միատեղ:
2. Բաժնետոմսերի փակ բաշխումը հանդիսանում էր ուղիղ վաճառքի միջոցով սեփականաշնորհման եղանակներից մեկը, այնպես որ բաժնետիրական կապիտալների փակ բաշխման միջոցով սեփականաշնորհման վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված են ուղիղ վաճառքի վերաբերյալ տեղեկությունների մեջ:
3. Միջոցների վաճառքը վարձակալների հանդիսանում էր ուղիղ վաճառքի միջոցով սեփականաշնորհման եղանակներից մեկը, այնպես որ վարձակալներին միջոցների վաճառքի միջոցով սեփականաշնորհման

վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված են ուղիղ վաճառքի վերաբերյալ տեղեկությունների մեջ:

4. Չնայած օրենքը նախատեսում է սեփականաշնորհում արժեթղթերի աճուրդի միջոցով, այն ներկայումս գործածությունից դուրս է՝ անարդյունավետության պատճառով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ որոշ ձեռնարկություններ սեփականաշնորհվել են այս եղանակով, տվյալներն ընդգրկված են աղյուսակում:

5. Ներկայումս ուժի մեջ մտած «Սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է սեփականաշնորհված ձեռնարկության թողարկման միջոցով:

6. Ընկերությունների կազմալուծումը այժմ օգտագործվում է ավելի հաճախ, այնպես որ դա ներկայացված է աղյուսակում ավելի մանրամասն ձևով:

20. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ Հայաստանում դեռ մտահոգություններ կան սեփականաշնորհման ծրագրի առնչությամբ, մասնավորապես՝ սեփականաշնորհման համընդհանուր գաղափարի կապակցությամբ և մրցույթների նկատմամբ երաշխավորագրերի գերադասելիության կապակցությամբ: Ինչպես և որոշ այլ անցումային տնտեսություններում, ապացուցվել է, որ սեփականաշնորհումից ակնկալվող արագ դրական արդյունքները եղել են գերազանցատված: Ներկայումս գերակայում է ավելի իրատեսական մոտեցում, որն ուղղված է սեփականաշնորհումից ստացվող դրամական շահույթն առավելագույնի հասցնելուն: Պարզ է, որ կարող են անցնել շատ տարիներ, մինչև որ սեփականաշնորհված ձեռնարկությանը կհաջողի իրապես շահութաբեր դառնալ, և այդ ժամանակամիջոցի ընթացքում ձեռնարկության սեփականատերերը կարող են մի քանի անգամ փոխվել: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ այս բոլոր հանգամանքները հաշվի առնելուց հետո, Կառավարությունը վերջերս ընդունել է ավելի գործնական մոտեցում: Ներկայումս սեփականաշնորհման պետական քաղաքականության հիմնական նպատակներից է՝ կառավարման համապատասխան բարեփոխումների հետ մեկտեղ փորձել առավելագույնի հասցնել ձեռնարկության սեփականաշնորհումից ստացվող դրամական հասույթները:

21. Այնուհետև նա նշեց, որ այս մոտեցումը վերջերս հանգեցրել է նրան, որ ուշադրությունը կենտրոնացել է մրցութային եղանակի վրա: Երբ հնարավոր է, ձեռնարկությունները վաճառվում են ռազմավարական, երկարաժամկետ ներդրողներին: Դա այնուհետև աջակցություն է հանդիսանում Կառավարության նպատակների իրականացմանը՝ կապված աշխատատեղերի ստեղծման և շարունակական սոցիալական բարեփոխումների հետ: Այս կապակցությամբ, Պետական սեփականությունն հանդիսացող միջոցների սեփականաշնորհման մասին նոր օրենքը հնարավորություն է տալիս առանձին ձեռնարկություններ սեփականաշնորհելիս գործել առավել ճկուն՝ ինչպես սեփականաշնորհման ձևի, այնպես էլ վճարման պայմանների ընտրության տեսանկյուններից: Կառավարությունը նաև սկսել է այն ձեռնարկությունների լուծարման գործընթացը, որոնք նախկինում ներկայացվել էին սեփականաշնորհման, և որոնց սեփականաշնորհումը ձախողվել էր: Այնուհետև նա նշեց, որ ապահովվել է սեփականաշնորհված ձեռնարկությունների վերաբերյալ տեղեկությունների բազաների կազմակերպությունը և սեփականաշնորհված ձեռնարկությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հեշտությամբ հասանելի է ՉԼՍ-ում և հատուկ ինտերնետային էջում (www.privatization.am):

22. Ի պատասխան՝ գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման վերաբերյալ հարցի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ սեփականաշնորհվել է գյուղատնտեսական հողերի համարյա 70 տոկոսը: Հողի նկատմամբ սեփականության իրավունքը դարձել է ազատ կերպով փոխանցելի: Փոքր բաժնետու կազմող հողերը, որոնք դեռ գտնվում են պետության ձեռքում, հանդիսանում են պահուստային հողեր և գյուղատնտեսական աջակցության որոշակի գործողությունների համար օգտագործվող հողեր, ինչպես նկարագրված է ստորև կետ 157-159-ում: Չկա պետության ձեռքում գտնվող գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման ժամանակացույց:

23. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ լիակատար թափանցիկությունը ապահովվելու և ԱՀԿ անդամներին Հայաստանի տնտեսական և առևտրային ռեժիմի բարեփոխման գործընթացում առաջընթացի մասին տեղյակ պահելու համար, Հայաստանը, այլ տեղեկատվությանը զուգահեռ, ԱՀԿ անդամներին կներկայացնի տարեկան զեկույցներ սեփականաշնորհման ծրագրի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև իր տնտեսական բարեփոխումներին վերաբերող այլ հարցերի վերաբերյալ, որոնք համահունչ են ԱՀԿ համաձայնագրով իր ստանձնած պարտավորություններին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Ներդրումային ռեժիմ

24. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 1994թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը կարգավորում է Հայաստանում օտարերկրյա ներդրումների ռեժիմը: Օրենքը նախատեսված էր օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար և տալիս էր երաշխիքներ ընդդեմ ազգայնացման՝ պահանջելով, որ սեփականագրվում տեղի ունենա միայն դատական կարգով: Այդպիսի դեպքում լրիվ փոխհատուցում է վճարվում: Այնուհետև նա նշեց, որ օտարերկրյա ներդրողները պաշտպանված են Կառավարության անհրաժեշտ գործողությունների արդյունք հանդիսացող վկաներից, կամ Կառավարության անհարկի գործողություններից (համաձայն օրենքի համապատասխան հոդվածի): Օրենքը ներդրողներին երաշխավորում է նաև շահույթները և միջոցները ազատ կերպով արտահանելու իրավունք: Այն դեպքում, երբ օտարերկրյա ներդրումների մասին օրենսդրությունը փոփոխությունների ենթարկվի ներդրումը կատարելուց հետո, ներդրողին իրավունք է տրվում հինգ տարի ժամկետով ազատվելու ցանկացած պակաս նպաստավոր դրույթներից: Հայաստանի ներկայացուցիչը այնուհետև նշեց, որ ներդրումների մասին նոր օրենքի քննարկումը դադարեցված է: Դրա հիմնական պատճառն այն է, որ գոյություն ունեցող օրենքը համապատասխանում է ներկայիս տնտեսական իրավիճակին, ուստի օտարերկրյա ներդրողների գործողությունները կարգավորող նոր օրենսդրության անհրաժեշտությունը չկա:

25. Հայաստանի ներկայացուցիչը վերհիշեց «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի նկարագրությունը, որը բերված է 10-րդ կետում: Այնուհետև նա ավելացրեց, որ N124 որոշումը հստակ սահմանում է, որ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման միասնական համակարգը տարածվում է Հայաստանի ձանրապետության բոլոր տնտեսական կազմավորումների վրա՝ անկախ սեփականության ձևից և գրանցման վայրից: Այն թույլ է տալիս օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին նույնպես օգտվել տեղական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններին հասանելի որոշակի անմաքս ռեժիմի առավելությունից:

26. Ի պատասխան լրացուցիչ հարցերի, նա այնուհետև նշեց, որ օտարերկրյա ներդրողները ազատ են ընտրելու իրենց սեփական ապահովագրողներին: Արտասահմանյան ներդրողների նկատմամբ չկա ոչ մի պահանջ որոշակի քանակությամբ ապրանք արտահանելու վերաբերյալ: Կառավարությունը մտադիր չէ մտցնելու որևէ այդպիսի պահանջ: Այնուհետև նա նշեց, որ օտարերկրյա ներդրողները արժանանում են լիիրավ ազգային մոտեցման: Ներդրումների վրա դրվող սահմանափակումները կիրառվում են այնպիսի հիմունքներով, որ խտրականություն չդրվի ազգային և օտարերկրյա ներդրողների միջև, թեև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է, որ Հայաստանի քաղաքացի չհանդիսացող անձինք հողի սեփականության իրավունք չունեն, բայց և այնպես Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքը օտարերկրյա քաղաքացիներին, իրավաբանական անձանց, այլ տնտեսական կազմավորումներին և միջազգային

կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության տարածքում հող վարձակալելու հնարավորություն է տալիս: Հայաստանի Քաղաքացիական օրենսգրքը թույլ է տալիս պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որոշում կայացնել հասարակական սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալու մասին, կամ մասնավոր կամ կոլեկտիվ սեփականատերերին՝ կողմերի միջև փոխադարձ պայմանագրի հիման վրա վարձակալության տալ իրենց հողերը:

Գնագոյացման քաղաքականություն

27. Ի պատասխան գնային բարեփոխումների առաջընթացի մասին նոր տեղեկությունների վերաբերյալ հարցումների, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ սկսած 1995թ. գների վրա Կառավարության կողմից առաջադրված հսկողության համարյա բոլոր դեպքերը վերացվել են: Դեռ կարգավորման ենթակա տեղական գներից են հանդիսանում միայն ոռոգման (Կառավարության որոշում N 240, մարտ 2002), քաղաքային էլեկտրատրանսպորտի, էլեկտրաէներգիայի, տաք ջրի, գազի, ջեռուցման (հանձնարարվել է Էներգետիկայի հանձնաժողովին՝ հաստատված 2001թ. մարտի 7-ի Էներգետիկայի մասին օրենքով), կոյուղու համակարգի ծառայությունների, աղբահանման և հեռախոսային ծառայության սակագները (1998թ. հոկտեմբերի 28-ի Կառավարության որոշում N 658 և 1999թ. նոյեմբերի 26-ի Կառավարության որոշում N 717): Այս սակագները դեռ ենթակա են կարգավորման, քանի որ պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները հանդիսանում են բացառիկ կամ գերիշխող մատակարարներ բնագավառներում, կամ, ինչպես հեռախոսային ծառայության դեպքում է, մասնավոր մատակարարին շնորհված է բացառիկ իրավունքներ ծառայությունների մատուցման հարցում: Բոլոր կարգավորվող գները պարբերաբար ճշգրտվում են՝ իրական արժեքը արտահայտելու համար: Հայաստանում ըստ սպառողների տեսակների սակագնային խտրականություն չի իրականացվում: Գազի և էլեկտրաէներգիայի սակագները տեղական և արդյունաբերական սպառողների համար նույնն են և կախված են օգտագործվող գազի կամ էլեկտրաէներգիայի լարումից: Բենզինի գները ազատ են և ենթակա չեն պետական վերահսկողության: Համաձայն ՀՀ օրենսդրության, գազի և էլեկտրաէներգիայի գները սահմանում է անկախ Էներգետիկ հանձնաժողովը: Էներգետիկ հանձնաժողովի կողմից 1998թ. նոյեմբերի 11-ին N 50 որոշմամբ սահմանվել են հետևյալ սակագները՝

- 35 կվ-ից բարձր լարում օգտագործողները՝ 16 դրամ 1կվ-ի համար,
 - 6 կվ-ից բարձր լարում օգտագործողները՝ 20 դրամ 1կվ-ի համար,
 - 0,38 կվ-ից բարձր լարում օգտագործողները՝ 25 դրամ 1կվ-ի համար:
- Բնական գազի համար 1999թ. նոյեմբերի 29-ի N 34 որոշմամբ սահմանվել են՝
- 10000 մ³ ավել ամսական օգտագործողների համար՝ 51000 դրամ 1000մ³-ի համար,
 - 10000 մ³ պակաս ամսական օգտագործողների համար՝ 46500 դրամ 1000 մ³-ի համար:

28. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ հացի, քաղաքային էլեկտրատրանսպորտի ու աղբահանման, ջրի ու կոյուղու համար տրվող լրավճարները հանվել են: Կենտրոնացված ջեռուցման և տաք ջրի լրավճարները (միակ մնացած սպառողական լրավճարները) վերանայվում են: Տնային տնտեսությունների կենտրոնացված ջեռուցման դեպքում տրվող լրավճարները, որոնք հիմնականում տրամադրվում են կարիքավոր խմբերին, պետք է վերաձևակերպվեն որպես սոցիալական օժանդակության համընդհանուր հարցի մի մաս:

29. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ ապրանքների և ծառայությունների վրա գնային հսկողությունը Հայաստանում հանվել է, բացառությամբ այն դեպքերի, որոնք թվարկված են սույն Ձեկույցի կետ 27-ում և 28-ում, և որ այդպիսի հսկողությունը հետագայում կիրառելու դեպքում Հայաստանը կդեկլարվի ՄԱԳՀ-1994-ի 3-րդ հոդվածով: Նա նույնպես հաստատեց, որ կետ 27-ում և 28-ում թվարկված ապրանքներն ու ծառայությունները իրապարակվել են Կառավարության պաշտոնաթերթում և հետագայում կառավարության կողմից գնային հսկողության ենթակա ապրանքների ցանկում փոփոխություններ կատարելու դեպքերը նույնպես կիրառարակվեն պաշտոնական թերթում: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունների վերաբերյալ:

3. Ապրանքների, ծառայությունների արտաքին առևտրի վրա ազդող քաղաքականության ձևավորման և իրագործման շրջանակները

Գործադիր, օրենսդիր և դատական իշխանություններ. ԱՀԿ-ին վերաբերող հարցերի կառավարում

30. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Ազգային ժողովը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդիրը, որը կազմված է 131 պատգամավորներից: Ազգային ժողովի իրավասությունները ավարտվում են իր ընտրության չորրորդ տարվա հունիսին՝ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը: Ազգային ժողովի անդամները և Կառավարությունը լիազորված են Ազգային ժողովի ընդունված ներկայացնելու օրենքները: Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ ընտրում է Նախագահի իր իրավասությունների ամբողջ ժամանակահատվածի համար: Նախագահը վարում է Նիստերը, կառավարում է Ազգային ժողովի նյութական ու ֆինանսական միջոցները և ապահովում է դրա ընթացիկ խնդիրների կատարումը: ՀՀ օրենքները ընդունվում են Ազգային ժողովի կողմից: ՀՀ Նախագահը քսամեկօրյա ժամկետում ստորագրում և իրապարակում է դրանք, որոնք ուժի մեջ են մտնում միայն դրանից հետո, եթե այլ ամսաթիվ Նախատեսված չէ համապատասխան օրենքով: Այս ընթացակարգը կիրառվում է բոլոր օրենսդրական փոփոխությունների առնչությամբ, ներառյալ նրանց, որ վերաբերում են հարկերի և սակագների սահմանմանը կամ փոփոխմանը: Հանրապետության Նախագահը ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նախագահը իրամասնագրեր և կարգադրություններ է իրապարակում, որոնք ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նախագահի իրամասնագրերն ու կարգադրությունները չեն կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին:

31. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ Կառավարությունը իրականացնում է գործադիր իշխանությունը և կազմված է վարչապետից ու նախարարներից: Հանրապետության Նախագահը նշանակում և ազատում է վարչապետին, ինչպես նաև վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին: Կառավարության որոշումները ստորագրվում են վարչապետի կողմից, և հաստատվում Նախագահի կողմից: Վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում նախարարների գործունեությունը: Վարչապետը ընդունում է որոշումներ: Կառավարության գործունեության կարգով սահմանված դեպքերում վարչապետի որոշումները ստորագրում են նաև դրանք իրագործող նախարարները:

32. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Արդարադատությունն իրականացնելիս դատավորները անկախ են իրենց գործողություններում և պատասխանատու են միայն օրենքի առաջ: Դատական մարմինների անկախության երաշխավորն է Հանրապետության Նախագահը: Նա գլխավորում է արդարադատության խորհուրդը: Արդարադատության

Նախարարը և գլխավոր դատախազը արդարադատության խորհրդի փոխնախագահներն են: Ընդհանուր իրավասության դատարաններ են՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Սահմանադրական դատարանը կազմված է ինը անդամից, որոնցից հինգը նշանակվում են Ազգային ժողովի կողմից, իսկ չորսը՝ Հանրապետության Նախագահի կողմից: Սահմանադրական դատարանը որոշումներ է ընդունում: Այդ որոշումները վերջնական են, ենթակա չեն բողոքարկման և ուժի մեջ են մտնում հրավարական պահից: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանը պետք է որոշի ԱՀԿ հիմնադիր Համաձայնագրի և ԱՀԿ այլ Համաձայնագրերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, նախքան դրանց Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը: Եթե միջազգային պայմանագրերը սահմանում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

33. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչն ասաց, որ համաձայն 1999թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի (փոփոխված 2001թ. սեպտեմբերին) բոլոր տնտեսական վեճերը (անկախ այն բանից՝ վեճի կողմերը ֆիզիկական թե՛ իրավաբանական անձինք են) պետք է առաջին հերթին հանձնվեն տնտեսական դատարանի իրավագործությանը: Տնտեսական դատարանի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի: Հայաստանի օրենսդրությունը չի ենթադրում տարբերակված մոտեցում ԱԳՀ և ոչ ԱԳՀ իրավաբանական անձանց նկատմամբ: Որպես ընթացող դատական և իրավական բարեփոխումների արդյունք, պատրաստվել և ընդունվել են մի շարք նոր օրենսդրական ակտեր: Մասնավորապես, պահանջվում է, որ տնտեսական դատական վեճերը ընթանան համաձայն Քաղաքացիական դատավարության և Քրեական դատավարության նոր օրենսգրքերի, որոնք ուժի մեջ են մտել համապատասխանաբար 1999թ. հունվարի 1-ին և հունվարի 12-ին: Տնտեսական խնդիրներից տարբեր այլ հարցերի դեպքում վարչական գործողության դատական վերանայումը կարող է ձեռք բերվել ընդհանուր լիազորության դատարանների միջոցով մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և մաքսային խնդիրների ոլորտներում: Տնտեսական դատարանը լիազորված է վերանայելու ԱՀԿ-ի դրույթների ընդգրկված բոլոր այլ ոլորտներում կայացված վարչական որոշումները, ներառյալ՝ հակազնազցումային որոշումները, երաշխիքային և փոխհատուցման մաքսատուրքերի հետ կապված հետաքննությունները: Առաջին ատյանի դատարանը լիազորված է վերանայելու վարչական որոշումները այն դեպքերում, երբ քաղաքացիների միջև առկա են տարաձայնություններ: Հայաստանի ներկայացուցիչը հայտնեց, որ, համաձայն Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի, վարչական որոշումները կարող են բողոքարկվել վարչական մարմնի ներսում գտնվող ավելի բարձր իրավասու մարմնին, որից հետո կարող է բողոք ներկայացվել դատարան:

34. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցության օրվանից սկսած Հայաստանի օրենքները հնարավորություն կընձեռեն բողոքարկել ԱՀԿ դրույթներին ենթակա հարցերի վերաբերյալ վարչական վճիռները անկախ ատյաններին՝ ԱՀԿ դրույթներին համահունչ, ներառյալ՝ ՄԱԳՀ-1994-ի 10-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորության վերաբերյալ:

35. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ որպես կառավարության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանք, ստեղծվել է Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը: Նոր նախարարությանը առաջնային նախապատվություն է տրվել՝ ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի վրա ազդող քաղաքականության շատ հարցերում: Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է և ֆինանսական քաղաքականության համար, սակայն սակագների վերաբերյալ որոշումները ընդունվում են Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հետ մեկտեղ: Կենտրոնական բանկը պատասխանատու է դրամական քաղաքականության, տարադրամի փոխարժեքի և բանկային համակարգի համար: Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կազմում գտնվող Մտավոր սեփականության գործակալությունը պատասխանատու է արդյունաբերական գույքի պաշտպանության և հեղինակային իրավունքի պաշտպանության համար:

36. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ խորհրդարանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ներառյալ ԱՀԿ համաձայնագիրը, գերակայում են Հայաստանում ներպետական օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ: Նա հաղորդեց, որ ապրանքների և ծառայությունների առևտրի վրա ազդող քաղաքականության հարցերում, ներառյալ՝ դրամական օժանդակության և հարկման, կառավարությունը պահպանում է լիիրավ իրավասությունը: Տեղական վարչական մարմինները իրավազոր կամ իրավասու չեն կենտրոնական իրավասու մարմիններից անկախ կերպով Հայաստանում ապրանքների և ծառայությունների վրա կանոնակարգումներ կամ հարկեր սահմանելու ԱՀԿ Համաձայնագրի դրույթներով ընդգրկված հարցերում: Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցելու գործընթացի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած պարտավորությունները, ներառյալ՝ ԱՀԿ Համաձայնագիրը և Հայաստանի անդամակցության զեկույցը, ենթակա են կատարման՝ միանման կերպով Հայաստանի Հանրապետության ամբողջ մաքսային տարածքում, ներառյալ՝ սահմանային առևտրում ընդգրկված շրջաններում կամ սահմանային երթևեկության «հատուկ տնտեսական գոտիներում» և այլ գոտիներում, ուր հաստատված են հատուկ կարգեր սակագների, հարկերի և կանոնակարգերի համար: Այնուհետև նա հաստատեց, որ սկսած Հայաստանի ԱՀԿ անդամակցության օրվանից՝ ՀՀ կառավարությունը կվերացնի կամ չեղյալ կհամարի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքում ձեռնարկված միջոցները, որոնք հակասում են ԱՀԿ Համաձայնագրին, անմիջապես այդ մասին տեղեկացվելուց հետո առանց շահագրգիռ կողմերից պահանջելու նախապես դիմել դատարան: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

37. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ, Հայաստանի կառավարության կողմից ԱՀԿ անդամակցության արձանագրությունը ստորագրելուց հետո, ԱՀԿ բոլոր համաձայնագրերը ներկայացվելու են Հայաստանի սահմանադրական դատարանի՝ քննարկման համար: Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցությունը կստանա իրավական ուժ՝ Ազգային ժողովի կողմից ԱՀԿ բոլոր համաձայնագրերի վավերացումից հետո: Նա հաստատեց, որ Ազգային ժողովի կողմից ընդունված միջազգային դաշնագրերն ու համաձայնագրերը, ներառյալ՝ ԱՀԿ Համաձայնագրերը, գերակայում են Հայաստանում ներպետական օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ: Այս դրույթների կիրառման համար անհրաժեշտ բոլոր օրենքները և օրենսդրական կանոնակարգերը ընդունված կլինեն մինչև դրա վավերացումը, ինչպես դա նախատեսված է Անդամակցության արձանագրությունում: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

4. Ապրանքների առևտրի վրա ազդող քաղաքականությունը

Բանակցություններ շուկայի մատչելիության վերաբերյալ

38. Հայաստանը սկսել է բանակցություններ Աշխատանքային խմբի շահագրգիռ անդամների հետ ապրանքների շուկա մատչելիության վերաբերյալ: Այս բանակցությունների արդյունք հանդիսացող Կոնցեսիաների և պարտավորությունների ժամանակացույցը բերված է Հայաստանի անդամակցության արձանագրության Հավելվածի Լրացում 1-ում:

Գրանցման պահանջներ

Ներմուծման և արտահանման իրավունքներ (առևտրի իրավունքներ)

39. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ մարդու, կենդանիների ու բույսերի առողջությունը և շրջակա միջավայրը պաշտպանելու համար անհրաժեշտ որոշ բացառություններով հանդերձ, Հայաստանի արտաքին առևտրի նախկին պետական մենաշնորհը վերացվել է 1989թ., և փոխարինվել է այդ գործունեությունը վարելու համար գրանցման պահանջով: Առևտրով (ներառյալ՝ ներմուծմամբ) զբաղվող ձեռնարկություններից կամ անհատ ձեռներեցներից պահանջվում էր գրանցվել ձեռնարկությունների պետական ռեգիստրում:

40. Այնուհետև նա հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի /1992թ. հունվարի 4-ի/ հրամանագիրը՝ վերնագրված Արտաքին տնտեսական գործունեության մասին, նախատեսում էր, որ գրանցված և Հայաստանի տարածքում գործող բոլոր ձեռնարկություններին կամ դրանց մասնաճյուղերին, դուստր ձեռնարկություններին և դրանց ներկայացուցչություններին, անկախ դրանց պատկանելությունից, իրավունք է տրվում վարելու արտաքին տնտեսական գործունեություն առանց որևէ լրացուցիչ գրանցման պահանջների: Ընկերությունների կազմավորումը և գրանցումը կարգավորող օրենսդրությունը բաղկացած է հետևյալից՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք (1999թ.), «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք (1994թ.), «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (1997թ.): Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների պետական գրանցումը, ինչպես նաև գրանցման ընթացքում տրամադրված տեղեկությունների օգտագործման ընթացակարգը և պայմանները սահմանված են 2001թ. ապրիլի 26-ի «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում: Լրացուցիչ դրույթներ կարելի է գտնել Քաղաքացիական օրենսգրքում, իսկ օտարերկրյա ներդրողների համար՝ «Օտարերկրյա ներդրումների մասին. ՀՀ օրենքում:

41. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ առանց պետական գրանցման: Ֆիզիկական անձանց թույլատրված է առանց գրանցման Հայաստան ներմուծել անձնական օգտագործման սահմանափակ քանակությամբ առարկաներ, իսկ դրանց վերավաճառքի համար պահանջվում է անհատ ձեռներեցի գրանցում: Հայաստանում գրանցում չի պահանջվում այն ձեռնարկությունների համար, որոնք գործում են որպես Հայաստանից արտահանողներ՝ գտնվելով նրա տարածքից դուրս: Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (26 ապրիլի 2001թ.) ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցան գրանցման ընթացակարգերի զգալի բարելավումներ:

42. Այնուհետև նա նշեց, որ գործունեության որոշ տեսակների համար պահանջվում է լիցենզիա: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (2001թ. մայիսի 30) թվարկում է լիցենզավորմանը ենթակա գործունեության տեսակները: Լիցենզիաների տեսակներն են՝ «պարզ» ընթացակարգով տրված լիցենզիաներ, «բարդ» ընթացակարգով տրված լիցենզիաներ: Պարզ լիցենզիայի համար պահանջվում է ներկայացնել լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմում, իրավաբանական անձի կանոնադրության պատճենը և պետական գրանցման հավաստագրի պատճենը, պետական գրանցման հավաստագրի պատճենը (անհատ ձեռներեցի համար) և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր: Բարդ լիցենզիա ձեռք բերելու համար դիմորդը պետք է ներկայացնի՝ պարզ լիցենզիայի համար պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև անձի մասնագիտական որակավորումը հավաստող փաստաթղթեր (ըստ անհրաժեշտության): Պարզ լիցենզիան պետք է տրամադրվի ամբողջական փաստաթղթերը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում: Բարդ լիցենզիան պետք է տրամադրվի 30 օրվա ընթացքում՝ լիցենզավորման հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:

43. Իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների պետական գրանցումը կատարվում է Պետական ռեգիստրի կողմից, որը գործում է Արդարադատության նախարարության կազմում: Պետական ռեգիստրը բաղկացած է Կենտրոնական մարմնից և շրջանային բաժանմունքներից: «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, իրավաբանական անձի տեղակայման վայրի Պետական ռեգիստրի շրջանային ենթաբաժանմունքը պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝ հիմնադրի դիմումը, իրավաբանական անձի հիմնադրման վերաբերյալ հիմնադիրների ժողովի արձանագրությունը (ստորագրված նախագահողի և քարտուղարի կողմից), ժողովի կողմից հաստատված կանոնադրության երկու պատճենները և պետական վճարման ստացականը: Օտարերկրյա հիմնադիրներ ունեցող իրավաբանական անձանցից նույնպես պահանջվում է ներկայացնել տվյալ երկրի առևտրային գրանցման գրքից (կամ օտարերկրյա ներդրողի իրավական կարգավիճակը հաստատող համարժեք փաստաթղթեր) քաղվածք և հիմնադրման փաստաթղթեր (կամ համապատասխան քաղվածքներ)՝ թարգմանված հայերեն և հաստատված:

44. Այնուհետև նա նշեց, որ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում Պետական ռեգիստրի շրջանային ենթաբաժանմունքից պահանջվում է ավարտել իրավաբանական անձի պետական գրանցումը: Անհատ ձեռներեցների պետական գրանցումը պահանջվում է կատարել երկու օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում օգտագործվում է իրավաբանական անձանց պետական գրանցման ծածկագրերի միասնական համակարգ: Պետական միասնական ռեգիստրը պարունակում է տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների մասին, և այն պահվում է Պետական ռեգիստրի Կենտրոնական մարմնի կողմից, որն այն թարմացնում է ոչ պակաս, քան 10 օրը մեկ անգամ: Պետական միասնական ռեգիստրի տեղեկությունները բաց են ընդհանուր հասարակության համար:

45. Այնուհետև նա նշեց, որ փոփոխված կանոնադրության պետական գրանցումը ստանալու համար Պետական ռեգիստրի շրջանային ենթաբաժանմունքը պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝ դիմում, կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը, ինչպես նաև փոփոխություններով և լրացումներով վերաձևակերպված կանոնադրությունը, կանոնադրության փոփոխություններն ու լրացումները, պետական վճարման ստացականը: Հիմնադիր փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն և ուղղում, կամ պետական գրանցման կողմից հաստատված տվյալների փոփոխություն նույնպես ենթակա են պետական գրանցման: Վերակազմավորման տարբեր տեսակներով պայմանավորված Պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը սահմանված են Օրենքի 23-րդ հոդվածում:

46. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝ դիմում, հիմնադիրների որոշումը, տեղեկացը հարկային և սոցիալական ապահովության մարմիններից, կնիքով վավերացված համապատասխան փաստաթուղթ, պետական գրանցման հավաստագիր:

47. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ արտաքին առևտրի նախկին պետական մենաշնորհը

Հայաստանում վերացվել է, օտարերկրյա և սեփական անձանց ու ձեռնարկությունների համար Հայաստանի Հանրապետություն և Կապիտալի ծառայություններ սերմունքներ և արտահանելու իրավունքի սահմանափակումներ չկան՝ բացառությամբ ԱՀԿ Համաձայնագրերում նախատեսվածների, իրենց գրանցված գործունեությունների ոլորտում անձանց և ընկերությունների ներմուծման և արտահանման հնարավորությունները չեն սահմանափակվում, ընկերությունների գրանցման չափանիշները Հայաստանում ենթակա են ընդհանուր կիրառման և պաշտոնապես հրապարակվում ու ընդհանուր մատչելիություն ունեն առևտրականների համար: Նա նաև հաստատեց, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցության օրվանից սկսած Հայաստանը կապահովի, որպեսզի ապրանքների առևտրին վերաբերող իր բոլոր օրենքներն ու կանոնակարգումները և այդ գործունեության վրա դրվող բոլոր վճարումները, տուրքերը կամ հարկերը ամբողջովին համապատասխանեն ԱՀԿ պարտավորություններին, ներառյալ՝ ՄԱԳՀ-1994-ի 8-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետին, 11-րդ հոդվածի 1-ին կետին և 3-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ կետերին, և որ այդ օրենքներն ու կանոնակարգումները իրագործվեն այդ պարտավորություններին համահունչ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

Մաքսային սակագներ

48. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Խորհրդարանի կողմից 1993թ. օգոստոսին ընդունված «Մաքսային սակագնի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է շրջանակներ սահմանելու սակագների և մաքսային հարցերի առնչությամբ: Կառավարության կողմից 1993թ. դեկտեմբերին հրապարակված N 615 որոշումը մտցրել է նոր մաքսավճարներ, որոնք հետագայում ձևափոխվել են 1994թ. մայիսին ընդունված N 224 Կառավարության որոշմամբ և 1995թ. հունվարին ընդունված Կառավարության N 39 որոշմամբ: 1995թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պահաջում է, որ սակագների փոփոխությունները ընդունվեն Ազգային ժողովի կողմից: Ազգային ժողովի կողմից 1997թ. ապրիլին ընդունված «Մաքսատուրքի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը մտցրել է մաքսավճարների նոր ցանկ: «Մաքսային սակագնի մասին» ՀՀ օրենքի ուղղումը ավարտին է հասցվել 1997թ. սեպտեմբերին՝ «Մաքսային սակագնի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների մասին. ՀՀ օրենքի միջոցով: 1998թ. դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքը: «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքը ընդգրկում է հետևյալ բաժինները՝ մաքսավճարները և դրանց տեսակները, մաքսային գնահատում և մաքսային սակագների դրույքաչափեր: Այսպիսով կատարվել է Հայաստանի Հանրապետության «Մաքսային սակագնի մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության «Մաքսային սակագնի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի միավորում: Օրենքը գտնվում է լիակատար համապատասխանության մեջ ԱՀԿ համապատասխան դրույթների հետ: Հայաստանը օգտագործում է Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգը սկսած 1991թ-ից: 2000թ. Ազգային ժողովը ընդունել է Հայաստանի Հանրապետության նոր Մաքսային օրենսգիրքը, որը ներառում է «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքի դրույթները, ներառյալ՝ մաքսավճարների դրույթները: Մաքսային օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2001 թ. հունվարի 1-ին:

49. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ մաքսային սակագները արտահայտված են արժույթային միավորներով և գանձվում են ԱՄՆ (արժեք, ապահովագրում, ծավալ) արժեքներից, բացառությամբ՝ ծխախոտային ապրանքներից: 2001թ. մարտի 31-ի «Ծխախոտային ապրանքներից կատարվող հաստատուն ծախքերի մասին» օրենքը նախատեսում է, որ ծխախոտային ապրանքների վրա դրվող մաքսավճարները գանձվեն հաստատուն չափով: Այս օրենքը պայման է դնում, որ ծխախոտային ապրանքների ներմուծումը ենթակա է որոշակի դրույքաչափի, որը բաղկացած է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և մաքսավճարներից, համաձայն հետևյալ դրույքաչափերի.

Աղյուսակ 2

Ծածկագիր	Ապրանքների հակիրճ նկարագրություն	Հաստատուն ծախքերի քանակը (ԱՄՆ\$ 1000 հատի համար) ներմուծված ապրանքների համար	Հաստատուն ծախքերի քանակը (ԱՄՆ\$ 1000 հատի համար) տեղական արտադրության ապրանքների համար
2402 10 001	Սիգարետներ	3000	2200
2402 100 09	Սիգարետներ	30	22
2402 20 900	Ֆիլտրով սիգարետներ	11	8
2402 20 910	Առանց ֆիլտրի սիգարետներ	6	3.5

Այնուհետև նա ավելացրեց, որ տարբերությունը ներմուծված ապրանքների հաստատուն դրույքաչափերի և տեղական արտադրության ապրանքների դրույքաչափերի միջև ներկայացնում է մաքսավճարը՝ սակագների դրույքաչափերի արժույթային առնչության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պարտավորության շրջանակներում, որը բերված է ստորև.

Աղյուսակ 3

Ծածկագիր	Ապրանքների հակիրճ նկարագրություն	Ներմուծումների միջին արժեքը 2001 թ. ընթացքում (1000 հատի համար) ԱՄՆ\$	Հատուկ մաքսավճար (դրույքը՝ 1000 հատի համար) ԱՄՆ\$	Համարժեք արժույթային մաքսավճարի դրույք %
2402 10 001	Սիգարետներ	5750	800	13.9
2402 100 09	Սիգարետներ	65	8	12.3
2402 20 900	Ֆիլտրով սիգարետներ	27	3	11.5
2402 20 910	Առանց ֆիլտրի սիգարետներ	27	2.5	9.3

50. Ի պատասխան՝ ներմուծումներից գանձվող որևէ այլ առանձնահատուկ մաքսավճարների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջներին, նա նշեց, որ 2000թ. դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքում փոփոխությունների մասին օրենքը սահմանում է մաքսավճարներ սպիրտի և ոգելից խմիչքների համար: Աշխատանքային խմբի որոշ անդամներ մտահոգություն արտահայտեցին, որ կիրառվող առանձնահատուկ դրույքաչափերը կարող են գերազանցել սահմանային արժույթային դրույքը: Ի

պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ անդամակցությունից հետո Առևտրի և տնտեսական գարգացման նախարարությունը պարբերաբար կստուգի առանձնահատուկ դրույքաչափերը՝ ներմուծման միջին արժեքների համեմատությամբ՝ ապահովելով, որ այդ դրույքաչափերը չգերազանցեն սահմանային արժույթային համարժեք դրույքը: Ի պատասխան տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ պահանջների, նա տրամադրեց հետևյալ այդուսակը.

Աղյուսակ 4

Ծածկագիր	Ապրանքի նկարագրություն	Թափման միավոր	Մաքսավճարի չափը (դրամ)	Մաքսավճարի միջինը (դրամ մեկ լիտրին)	Համարժեք արժույթային մաքսավճարի դրույքը %
2203	Գարեջուր	1 լիտր	50	434.8	11.5
2204	Խաղողի գինի	1 լիտր	100	845.0	11.8
220410	Փրփրուն գինիներ	1 լիտր	75	591.0	12.7
2205	Վերմուտ և խաղողի այլ բարձր գինիներ՝ համեմատված բույսերով կամ այլ բուրդամակից նյութերով	1 լիտր	140	1166.6	12.0
2206	Այլ եփված խմիչքներ (օրինակ՝ սիդր, պերրի, մեղրախմիչք)	1 լիտր	60	572.9	10.5
2207	Էթիլալին սպիրտ	1 լիտր (վերահաշվարկելով 100% սպիրտի)	70	498.2	14.1
2208	Ռգեղից խմիչքներ, ներառյալ՝				
220820	պատրաստված խաղողի գինու և գինու բաղադրանյութերի գտումով (կոնյակ, արձանյակ և այլն)	1 լիտր (վերահաշվարկելով 100% սպիրտի)	1100	7329.3	13.9
220830	Վիսկիներ		370	2892.9	12.8
220840	Ռոմ և տաֆիա		420	2438.6	12.9
220850	Տիճ և գինոլի		450	3913.0	11.5
220860	Օղի		240	2000.0	12
220870	Լիկյոր և մրգային օղիներ		600	5454.5	11
220890	Այլ		240	1920.0	12.5

51. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 279 անվանումներ են հատկորոշված Հայաստանի սակագնային ցանկում: Ներդաշնակեցված համակարգի երկնիշ մակարդակի վրա որոշված ապրանքային դասերի մեծամասնությունը ունի մաքսավճարի նույն չափը: Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցրեցին, արդյոք հնարավոր կլինի սակագինը չորս կամ ավել նիշերի մակարդակի չափով մանրամասնել: Ի պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ եթե ապացուցվի, որ անհրաժեշտություն կա, ապա Հայաստանի կառավարությունը կշարունակի մանրամասնել իր սակագնային ցանկը՝ սկսած ներկայիս մակարդակից:

52. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ սակագնային ցանկի վաթսուս տոկոսից ավելի կետերը ենթակա են գրոյական մակարդակի մաքսավճարի (161 կետ), իսկ 97-ը ենթակա են 10 տոկոս մաքսավճարի դրույքաչափի: Հաշվի առնելով այդ խմբերից յուրաքանչյուրին պատկանող ներմուծված ապրանքների ծավալը, սակագնի կշռված միջինը կազմում է 4 տոկոսից պակաս: Սակագներից ստացված հասույթը կազմել է 2001թ. բյուջետային հասույթի մոտավորապես 5,06 տոկոսը:

53. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ մաքսավճարների դրույքաչափերը չեն աճի Հայաստանի անդամակցության արձանագրությանը կցված Ապրանքների վերաբերյալ Կոնցեսիաների Հայաստանի ԱՀԿ ժամանակացույցում ամրագրված մակարդակներից: Ի հավելում, Հայաստանը, ըստ պահանջի, կինդրի ԱՀԿ անդամներին կարծիք հայտնելու ՀՀ կողմից սահմանային արժույթային դրույքաչափ սահմանելիս ներմուծումների հատուկ պարտավորությունների իրականացման հետ կապված հարցերով: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորության վերաբերյալ:

Ներմուծումների վրա կիրառվող այլ մաքսավճարներ և ծախսեր

54. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ չկան ներմուծումներից գանձվող ուրիշ մաքսավճարներ և տուրքեր՝ բացի սովորական մաքսավճարներից և մաքսային մարմինների կողմից տրամադրված ծառայությունների համար վճարներից, ինչպես նկարագրված է ստորև՝ 57-60 կետերում: Գանձվող ցանկացած այդպիսի վճար, որ կկիրառվի ներմուծումների նկատմամբ սկսած անդամակցության օրվանից, կլինի համապատասխան Հայաստանի անդամակցության արձանագրության դրույթներին: Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ կապված ներմուծումների/արտահանումների փաստաթղթերի հետ, պահանջ չի ներկայացվում, որ փաստաթղթերի ինքնությունը հաստատվի օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության հյուպատոսությունների կողմից, և չի գանձվում ոչ մի վճար այս առնչությամբ: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը կվերացնի (0 դրույքաչափ կսահմանի) բոլոր մաքսավճարները և վճարները, բացի սովորական մաքսավճարներից, ՄԱԳՀ-1994-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետով որոշված Հայաստանի շուկա մուտք գործելու ժամանակացույցին համապատասխան, որը կցված է Հայաստանի անդամակցության նախահամաձայնագրին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորության վերաբերյալ:

Սակագնային քվոտաներ

55. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը չի կիրառում որևէ ներմուծման քվոտա, ներառյալ՝ սակագնային դրույքաչափերի քվոտաներ: Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ կառավարությունը մտադրություն չունի մտցնելու սակագնային դրույթների քվոտաներ:

Սակագնային բացառություններ

56. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ազատ առևտրի գոտիների համաձայնագրերի շրջանակներում շնորհված բացառություններից տարբեր այլ բոլոր սակագնային բացառությունները շնորհվել են «Առավել արտոնյալ երկիր» սկզբունքի հիման վրա: Համաձայն 1998թ. դեկտեմբերի 30-ի «Մաքսավճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, սակագնային բացառություններ շնորհվել են հետևյալներին՝

- կապիտալ միջոցների՝ ներմուծված օտարերկրյա ներդրողների կողմից և նախատեսված համատեղ ձեռնարկությունների կանոնադրական հիմնադրամի ու օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների

համար,

- Հայաստանի տարածքով տարանցիկ տեղափոխվող ապրանքների,
 - բեռնատար ավտոմեքենաների և փոխադրամիջոցների, որպես բեռների և ուղևորների՝ Հայաստանի տարածքով կանոնավոր գործող փոխադրամիջոցների, ինչպես նաև վառելիքի, սննդամթերքի, գործիքների և այս գործողությունները կատարելու նպատակով ժամանակավոր օգտագործման համար անհրաժեշտ այլ երկրորդական պիտույքների,
 - տարադրամի, պարտատոմսերի և արժեթղթերի,
 - մարդասիրական և բարեգործական ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների,
 - Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավորապես ներմուծված և հետագայում առանց մշակման արտահանված որոշակի ապրանքների, ինչպիսիք են՝ տոնավաճառի և ցուցահանդեսի ցուցանմուշները, ապրանքների օրինակները և փաթեթները, ժամանակավոր այցելուների մասնագիտական սարքավորումները, զովագրային կոլեկցիաները, կենդանի կենդանիները և այլն,
 - անմաքս խանութներ ներմուծված ապրանքների՝ Հայաստանի մաքսային տարածքից հետագա արտահանման համար,
 - այն ապրանքների, որ Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել որպես օտարերկրյա հաճախորդների սեփականություն՝ Հայաստանի Հանրապետությունում մշակման և հետագա արտահանման նպատակով,
 - Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ներմուծված ապրանքների և առարկաների,
 - միջազգային պայմանագրերում նախատեսված այլ դեպքերի:
- Համաձայն Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 104-րդ հոդվածի, որը փոխարինել է «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքին, հետևյալ ապրանքներն են ազատվում մաքսավճարներից՝
- տարանցիկ փոխադրվող ապրանքները,
 - ժամանակավորապես ներմուծված ապրանքները,
 - ժամանակավորապես արտահանված ապրանքները,
 - ներքին մշակման համար ժամանակավորապես ներմուծված ապրանքները,
 - արտաքին մշակման համար ժամանակավորապես արտահանված ապրանքները,
 - մաքսային պահեստ արձակված ապրանքները,
 - ազատ/ անվճար մաքսային պահեստ արձակված ապրանքները,
 - վերաներմուծման և վերաարտահանման կարգով արձակված ապրանքները, բացառությամբ՝ Օրենսգրքով կանխատեսված դեպքերի,
 - ոչնչացման համար արձակված ապրանքները,
 - անմաքս խանութ արձակված ապրանքները,
 - բեռների, ճանապարհորդական իրերի և ճանապարհորդների երկրի ներսում պարբերական տեղափոխման համար օգտագործվող փոխադրամիջոցները, ինչպես նաև գործիքները, վառելիքը, սննդամթերքը, որ կարող են անհրաժեշտ լինել ճանապարհորդության, կանգառների, կամ վերոհիշյալ տրանսպորտային միջոցների անսարքությունները վերացնելու ժամանակ,
 - դրամը, տարադրամը և արժեթղթերը,
 - մարդասիրական և բարեգործական ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները,
 - առևտրային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամում ներդնելու համար Հայաստանի Հանրապետություն ներմուծված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ապրանքների ցուցակում ընդգրկված ապրանքները,
 - ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների և նման միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների նմուշային քանակությունները:

Մաքսային վճարներ և տրամադրված ծառայությունների վարձը

57. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հաղորդեցին, որ նրանք գտնում են, որ Հայաստանի կողմից ներմուծումների վրա դրվող արժույթային /ed-valorem/ մաքսային վճարը անհամատեղելի է ԱՀԿ դրույթների հետ, մասնավորապես, ՄԱԳՀ-1994-ի 8-րդ հոդվածի: Նրանք նշեցին նաև, որ այդ վճարը 8-րդ հոդվածի հետ համապատասխանության բերելու համար անցումային փուլը բավարար չէ: Այդ անդամները գտնում են, որ Հայաստանը պետք է բավարարի 8-րդ հոդվածի պահանջները սկսած անդամակցության օրվանից, և սկսած այդ պահից վճարներից ստացված գումարները պետք է օգտագործվեն միայն մաքսատուրքերի վճարման ծառայությունների գործարկման համար: Այնուհետև նրանք հաղորդեցին, որ վճարներից հանրագումարված տարեկան հասույթները չպետք է գերազանցեն ներմուծված ապրանքների մաքսատուրքերի վճարման փաստացի արժեքը: Այդ անդամները հաղորդեցին, որ անդամակցությունից հետո Հայաստանը պետք է տրամադրի տեղեկություններ վճարի հաշվարկման եղանակի և մաքսատուրքերի վճարման ծառայությունների տրամադրման արժեքի մասին ԱՀԿ անդամներին՝ պահանջի դեպքում:

58. Ի պատասխան Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն Կառավարության N 615 որոշման փոփոխության, որն ուժի մեջ է մտել 1996թ. մայիսի 1-ից, արժույթային 0.3 տոկոսանոց մաքսավճար է գանձվում 600.000 դրամ (մոտավորապես ԱՄՆ \$1 ,200) վերին սահման ունեցող ներմուծումներից: 1998թ. դեկտեմբերի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքը հրաժարվել է արժույթային սկզբունքից մաքսավճարները գանձելիս՝ փոխարինելով այն 3500 դրամ (մոտավորապես ԱՄՆ \$6.50) միանման գումարով մաքսային ձևակերպման համար և 300 դրամ մեկ տոննայի համար (մոտավորապես ԱՄՆ \$0.55) քաշին առնչվող առանձնահատուկ վճարով՝ փոխադրաբեռների ստուգման համար: «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է վճարների չափը:

59. Այնուհետև նա նշեց, որ Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքը, որն ընդգրկել է «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքի դրույթները, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998թ. դեկտեմբերի 28-ին: Համաձայն նոր օրենսգրքի 110-րդ հոդվածի, մաքսավճարների հետևյալ դրույթներն են կիրառվում 2001թ. հունվարի 1-ի դրությամբ՝

1. 3500 դրամ մաքսավճար մաքսային ձևակերպությունների համար (բացի ստուգումից ու գրանցումից)՝ կապված Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով անցկացվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հետ, ինչպես նաև բանկերի կողմից դրամի և տարադրամի փոխադրման համար:

2. Ապրանքների ստուգման և գրանցման համար գանձվող մաքսավճար, բացառությամբ՝ խողովակներով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների, հետևյալ չափով.

- 1000 դրամ՝ նույն հայտարարագրում հայտարարագրված և մինչև 1 տոննա քաշ ունեցող բեռի մաքսային ստուգման համար,

- 300 դրամ՝ նույն հայտարարագրում հայտարարագրված և 1 տոննայից ավելի քաշ ունեցող բեռի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ անավարտ) տոննայի համար:

3. Ամսական 500 000 դրամ մաքսային վճար՝ խողովակների միջով և էլեկտրական փոխանցման լարերով

տեղափոխվող ապրանքների մաքսային ստուգման և գրանցման համար:

4. Եթե մաքսային ձևակառուցումները կատարվում են մաքսային մարմինների կողմից հատկորոշված վայրերից տարբեր այլ վայրերում, մաքսավճարը գանձվում է 110-րդ հոդվածով նախատեսված դրույքների կրկնակի չափով:

5. 1000 դրամ մաքսային վճար՝ մաքսային մարմինների կողմից տրամադրված յուրաքանչյուր փաստաթղթի ձևի համար:

6. 10000 դրամ յուրաքանչյուր 100 կմ համար մաքսավճար՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով ապրանքների մաքսային ուղեկցության համար:

7. Օրական մաքսավճար մաքսային մարմինների կողմից պահեստավորված բեռների համար.

- 1000 դրամ՝ 1 տոննայից պակաս քաշով բեռների համար,

- 300 դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ (անավարտ) տոննա բեռի համար:

8. Տրանսպորտային միջոցների մաքսային ստուգման համար գանձվող մաքսավճար՝

- 2000 դրամ՝ 10 տեղանոց ավտոմեքենաների համար,

- 5000 դրամ՝ այլ տրանսպորտային միջոցների համար,

Համաձայն նոր Մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածի, հետևյալ ապրանքներն են ազատվում մաքսավճարներից՝

- մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մտած ապրանքները,

- ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով անցկացվող և անմաքս ներմուծման համար թույլատրված բոլոր ապրանքները,

- ժամանակավոր արտահանման կարգով արտահանված և վերաներմուծման ենթակա մշակութային արժեքները,

- կանոնավոր միջազգային տեղափոխումների մեջ ընդգրկված և տեղափոխման ընթացքում գտնվող տրանսպորտային միջոցները:

Մաքսավճարը կիրառվում է նաև Հայաստանի կառավարության կողմից կատարվող արտահանումների և ներմուծողական գնումների նկատմամբ: Մաքսավճարներից ստացված գումարները փոխանցվում են պետական բյուջե:

60. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցության օրվանից սկսած Հայաստանը կկիրառի «ըստ արժեքի» մաքսավճար: 1998թ. դեկտեմբերի 30-ի «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքով և 2001թ. հունվարի 1-ի դրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքով սահմանված մաքսային ձևակերպումների համար վճարը կկիրառվի համաձայն ԱՀԿ պարտավորությունների, մասնավորապես՝ ՄԱԳՀ-1994-ի 8-րդ և 10-րդ հոդվածների: Կիրառվող վճարի մակարդակը չի գերազանցի ներմուծման և արտահանման առանձին գործարքների մաքսային ձևակերպման մոտավոր արժեքը: Վճարներից ստացված հասույթները կօգտագործվեն բացառապես ներմուծումների և արտահանումների ձևակերպումների համար, իսկ վճարներից ստացված ընդհանուր տարեկան հասույթը չի գերազանցի վճարներին ենթակա ապրանքների մաքսային ձևակերպման գործողությունների մոտավոր արժեքը: Նա նաև հաստատեց, որ վճարներից ստացված հասույթները չեն օգտագործվել վճարներից ազատված ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար: Վճարների կիրառման և դրանց մակարդակի, ինչպես նաև ստացված հասույթների և դրանց օգտագործման վերաբերյալ տեղեկությունները կտրամադրվեն ԱՀԿ անդամներին ըստ պահանջի: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

Ներքին հարկերի կիրառումը ներմուծումների նկատմամբ

61. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ սկսած 1992թ. Հայաստանի հարկային համակարգը ենթարկվել է վերանայման որպես դեպի շուկայական տնտեսությունը տանող տնտեսական ձևափոխման կառավարության համընդհանուր քաղաքականության մի մաս: 1997թ. ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ընդունեց «Հարկերի մասին» ՀՀ նոր օրենքը: Համաձայն այս օրենքի Հայաստանում կիրառվող հարկերը հետևյալն են՝

- ավելացված արժեքի հարկ,
- ակցիզային հարկ,
- շահութահարկ,
- եկամտահարկ,
- գույքահարկ,
- հողի հարկ,
- պարզեցված հարկ:

Մասնավորապես, անուղղակի երկու հարկով են հարկվում ներմուծումները և տեղական արտադրանքը Հայաստանում, դրանք են՝ ավելացված արժեքի հարկը, որը գանձվում է ապրանքների և ծառայությունների շրջանառությունից և ակցիզային հարկը՝ որոշակի ապրանքներից: Նա հիշեցրեց, որ այդ հարկերի մանրամասները բերված են ստորև՝ սույն Չեկույցի 62-71 կետերում:

Ավելացված արժեքի հարկ

62. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 1997թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո ԱԱՀ-ի կիրառման նպատակային սկզբունքը կիրառվում է բոլոր երկրների նկատմամբ: Հայաստանի արտահանումները ցանկացած երկրի հարկվում են գրոյական դրույքաչափով, և յուրաքանչյուր ներմուծում Հայաստան հարկվում է ստանդարտ դրույքաչափով: Այս կապակցությամբ Հայաստանը ապահովում է Առավել արտոնյալ երկրի մոտեցումը՝ ներմուծումների նկատմամբ ԱԱՀ-ն կիրառելիս: ԱԱՀ-ն գանձվում է միանման ձևով՝ տեղական և ներմուծված ապրանքների ու ծառայությունների վաճառքի 20 տոկոսի չափով: Ավելացված արժեքի հարկը հաշվարկվում ու գանձվում է մաքսային մարմինների կողմից Հայաստան ներմուծված ապրանքներից առանց արտահանման երկրները հաշվի առնելու: Մաքսավճարի գրոյական դրույքաչափով և ակցիզային հարկին չենթարկվող որոշակի ներմուծված ապրանքների կապակցությամբ, որոնք թվարկված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող մաքսատուրքի 0% դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և չի գրանցվում» ՀՀ օրենքում՝ ընդունված Ազգային ժողովի կողմից 2001թ. հունիսի 25-ին, ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և գանձվում է մաքսային իրավասու մարմինների կողմից դրանց վաճառքից կամ սպառումից հետո:

63. Այնուհետև նա ավելացրեց, որ բոլոր ներմուծված ապրանքների համար (բացառությամբ ապրանքների, որոնց նկատմամբ կիրառվում է 0% մաքսավճար, և որոնք չեն հարկվում ակցիզային հարկով) ԱԱՀ-ն գանձվում է մաքսային մարմինների կողմից ներմուծման պահին՝ առանց արտահանման երկրները հաշվի առնելու: ԱԱՀ-ից

ազատված առարկաները, ընդգրկում են՝ ուսումը միջնակարգ դպրոցներում, դպրոցականների դասագրքերը և երաժշտական գրքերը, գիտահետազոտական աշխատանքը, անասնաբուժական դեղերի վաճառքը, տեղական արտադրության գյուղատնտեսական ապրանքների վաճառքը արտադրողի կողմից, կենսաթոշակի տրամադրմանը առնչվող գործողությունները, որոշ ֆինանսական գործողություններ, ծառայություններ և այլն: Բացի այդ, գրոյական հարկը կիրառվում է հետևյալի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների հարկմանը ենթակա շրջանառության նկատմամբ, դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների, կամ այլ համագործակցության միջազգային միջկառավարական/միջպետական կազմակերպությունների կողմից պաշտոնական օգտագործման համար ներմուծված ապրանքների, ինչպես նաև այդ կազմակերպությունների կողմից Հայաստանի տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների, Հայաստանի տարածքով փոխադրվող օտարերկրյա առևտրային բեռների, շինարարության և համապատասխան (նախագծային, հետազոտական և այլն) աշխատանքների: Նա հիշեցրեց, որ ԱՎՀ բացառությունների լրիվ ցանկը տրամադրվել է Աշխատանքային խմբին: Այդ ցանկը կազմում է սույն Չեկույցի Հավելված 2-ը:

64. Անդամները նշեցին, որ ազարակատերերի կողմից վաճառվող տեղական գյուղատնտեսական արտադրանքի ազատումը Հայաստանում ավելացված արժեքի հարկից հանդիսանում է ներմուծումների նկատմամբ՝ համանման տեղական արտադրանքի համեմատությամբ խտրական մոտեցման շարունակություն և, հետևաբար, անհամատեղելի է ՄԱԳՀ 3-րդ հոդվածի հետ, և պետք է վերացվի անդամակցությունից հետո: Հայաստանի ներկայացուցիչը պատասխանեց, որ ազարակատերերի ազատումը ավելացված արժեքի հարկից չի տարածվում առաջին վաճառքի կետից դուրս, այսինքն՝ գյուղատնտեսական արտադրանքը ազարակից դուրս գալուց հետո ենթակա է ԱՎՀ-ի կիրառմանը, և որ մտադրություն չկա խտրականություն դնել ներմուծումների նկատմամբ: Հարկից ազատումը հանդիսանում է Հայաստանի՝ գյուղատնտեսությանն աջակցելու համակարգի անբաժանելի մի մասը, և անդամակցությունից հետո կիրառման անցումային փուլը անհրաժեշտ կլինի նախքան դրա վերացումը, որպեսզի նվազեցվի վնասը Հայաստանի գյուղատնտեսական բնագավառին: Այս առնչությամբ, Հայաստանի խորհրդարանի կողմից կընդունվի ԱՎՀ-ից ազատումը վերացնող օրենք՝ նախքան ԱՀԿ Գլխավոր խորհրդի անդամակցության պայմանների ընդունումը: Այս Օրենքը N 420-N ընդունվել է 2002 թ. հոկտեմբերի 21-ին և կիրականացվի սկսած 2009թ. հունվարի 1 -ից:

65. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ իր կառավարությունը ընդունել է որոշում, որը մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ը կվերացնի արտադրողների կողմից վաճառվող գյուղատնտեսական տեղական արտադրության գոյություն ունեցող ազատումը ավելացված արժեքի հարկից: Նա ավելացրեց, որ այս ժամանակահատվածի ընթացքում հարկից ազատված ապրանքների շրջանակը չի ընդլայնվի՝ ոչ հարկից ազատման մակարդակի, ոչ էլ նոր ապրանքների ընդգրկման իմաստով և ոչ էլ կվերականգնվի կամ կավելացվի հարկից ազատված ապրանքների շրջանակը կամ քանակը, եթե այն նվազեցվել է այդ ժամանակահատվածի ընթացքում: Այնուհետև նա հաստատեց, որ այս ժամանակաշրջանի ընթացքում թափանցիկությունը ապահովելու նպատակով Հայաստանը յուրաքանչյուր տարի կտեղեկացնի Գլխավոր խորհրդին Հայաստանում այդ հարկից ազատման ընթացակարգի և դրա շրջանակների ու մակարդակի վերաբերյալ: Պահանջի դեպքում, Հայաստանը կխորհրդակցի ԱՀԿ Անդամների հետ ԱՎՀ-ից ազատման կարգավիճակի և նրանց առևտրի վրա դրա ազդեցության կապակցությամբ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորվածությունների վերաբերյալ:

Ակցիզային հարկ

66. Ի պատասխան Աշխատանքային խմբի անդամների՝ ակցիզային հարկի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2000թ. օգոստոսի 1-ից, ակցիզային հարկը կիրառվում է տեղական և ներմուծված ապրանքների նկատմամբ: Ներմուծված ապրանքներից ակցիզային հարկը հավաքվում է մաքսային իրավասու մարմինների կողմից, իսկ տեղական արտադրանքից գանձվող ակցիզային հարկը՝ հարկային իրավասու մարմինների կողմից: Համաձայն «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի, ակցիզային հարկը գանձվում է հետևյալ ապրանքներից՝

- գարեջուր,
- խաղողի և այլ գինիներ, գինու բաղադրանյութեր, ներառյալ՝
- փրփրուն գինիներ,
- շամպայն,
- վերմուտ և խաղողի այլ թարմ գինիներ՝ համեմված բույսերով կամ այլ բուրումնավետ նյութերով,
- այլ եփված խմիչքներ, ներառյալ՝
- պատրաստված խաղողի գինու և գինու բաղադրանյութերի գտումով (կոնյակ, արմանյակ և այլն),
- օղի, լիկյոր և մրգային օղի,
- թուրքոսի փոխարինողներ,
- նավթ և յուղեր,
- դիզելային վառելիք,
- նավթային գազ և այլ գազային հիդրոկարբոններ (բացառությամբ՝ բնական գազի):

67. Նա ավելացրեց, որ Հայաստանում արտադրված ապրանքների համար գանձվող հարկի չափը հիմնված է ապրանքների շրջանառության արժեքի կամ ապրանքների վաճառքի վրա՝ հիմք ընդունելով վաճառքի գները (առանց ակցիզային և ավելացված արժեքի հարկերի): Հայաստանում հարկման ենթակա ապրանքներ արտադրող/վաճառող հարկատուները վճարում են ակցիզային հարկ երկրի ներսում արտադրված ապրանքների համար ապրանքների վաճառքին հաջորդող հաջորդ ամսվա 15-ին: Հայաստան ներմուծված ապրանքների համար գանձվող հարկի չափը հիմնված է ապրանքների մաքսային արժեքի վրա (առանց ավելացված արժեքի հարկերի և մաքսային սակագների): Հայաստանի Հանրապետությունում ներմուծված ապրանքներից հարկվող ակցիզային հարկերը գանձվում են մաքսային իրավասու մարմինների կողմից՝ ներմուծմանը հաջորդող տասը օրվա ընթացքում:

Ակցիզային հարկի դրույքաչափերը հետևյալն են.

Ծածկագիր	Ապրանքի նկարագրություն	Հարկման հիմք	Դրույք (դրամ)
2203	Գարեջուր	1 լիտր	70
2204	հաղողի և այլ գինիներ, գինու բաղադրանքներ, ներառյալ՝ պղպեղում գինիներ շամպայն	1 լիտր	100
220410			180
2205	Վերմուտ և խաղողի այլ թարմ գինիներ՝ համեմտված թույսերով կամ այլ բուրույն ավետ նյութերով	1 լիտր	500
2206	Այլ եփված խմիչքներ (օրինակ՝ սիդր, պեքրի, մեղրախմիչք)	1 լիտր	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտր (վերահաշվարկ ելով 100% սպիրտի)	800
2208	Ոգելից խմիչքներ, ներառյալ՝ պատրաստված խաղողի գինու և գինու բաղադրանքների զտումով (կոնյակ, արմանյակ և այլն)	1 լիտր	1,500
220860,			1,200
220870	Օղի, լիկյոր և մրգային օղի		300
2403	Թուրքմենի փոխարինողներ	1 կիլոգրամ	1,500
2709	Զվերամշակված նավթ և նավթ	1 տոննա	27,000
2711 (բացի 271111 և 271121)	Նավթային գազ և այլ գազային հիդրոկարբոններ (բացառությամբ՝ բնական գազի)	1 տոննա	1,000

2208 ծածկագրի ներքո 40 տոկոսից ավել սպիրտի պարունակությամբ ապրանքների համար հարկի դրույքը ավելացվել է լրացուցիչ 7.5 դրամով՝ 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսի համար: Թուրքմենի ապրանքների և բենզինի ակցիզային հարկերը որոշվում են առանձին օրենքով: 2000թ. մարտի 24-ի «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը սահմանում է հաստատուն վճարներ թուրքմենի ապրանքների համար: Համաձայն այս օրենքի ներմուծված թուրքմենի ապրանքների համար տրվող հաստատուն վճարները փոխարինում են ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և մաքսավճարները, իսկ Հայաստանում արտադրված թուրքմենի ապրանքների համար վճարները փոխարինում են ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը: Օրենքը սահմանում է հետևյալ դրույքերը ներմուծված և տեղական արտադրության թուրքմենային ապրանքների համար՝

Աղյուսակ 6

Ծածկագիր	Ապրանքի անվանումը	Հաստատուն վճարի չափը (ԱՄՆՖՍՏ 1000 հատի համար)	
		Ներմուծվող արտադրանքի համար	Ներքին արտադրության արտադրանքի համար
2402 10 001	Սիգարետներ	3,000	2,200
2402 100 09	Սիգարետյաններ	30	22
2402 20 900	Սիգարետներ ֆիլտրով	11	8
2402 20 910	Սիգարետներ առանց ֆիլտրի	6	3,5

68. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 1997թ. հունվարի 1-ին Հայաստանը որպես իր անդամակցության պարտավորությունների մի մաս հավասարեցրել է տեղական ապրանքների և ներմուծված նույն կամ համանման ապրանքների ակցիզային հարկը (տես սույն Չեկոյցի Աղյուսակ 5-ը և Աղյուսակ 6-ը): Առավել, 2000թ. օգոստոսի 1-ից «Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքը սահմանել է հարկի որոշակի դրույքեր, որոնք նույնն են տեղական արտադրության և ներմուծված ապրանքների համար:

69. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հաղորդեցին, որ իրենք համարում են, որ օղու հարկումը հանդիսանում է այլ ոգելից խմիչքների ակցիզային հարկման դրույքաչափի միայն մեկ ինկվեդիտորը: Սա հակասում է՝ համանման ապրանքների հարկմանը վերաբերող 3-րդ հոդվածի դրույթներին: Այդ անդամները պահանջեցին, որ Հայաստանը տեղեկություններ ներկայացնի, թե ինչպես է այն մտադիր օղու նկատմամբ կիրառվող ակցիզային հարկումը համապատասխանության բերելու այլ թորած ոգելից խմիչքների նկատմամբ կիրառվող ակցիզային հարկի հետ: Աշխատանքային խմբի որոշ անդամներ նշեցին նաև, որ թուրքմենի ապրանքների համար ակցիզային հարկի տարբեր դրույքաչափերը կազմում են սակագնային վճարը, որը կիրառվում է վճարի Հայաստանի սահմանային դրույքաչափի շրջանակներում:

70. Ի պատասխան վերոհիշյալի Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ օրենսդրությունը ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002թ. հոկտեմբերի 21-ին ընդունված ՀՕ-415-Ն օրենքի համաձայն և կիրառործվի մինչև անդամակցությունը խմիչքների, օղու, կոնյակի, լիկյորի և այլնի (ծածկագիր 2208), ինչպես նաև շամպային, փրփրուն գինիների, գինիների (ծածկագիր 2204) նկատմամբ կիրառվող ակցիզային հարկերի գանձումը հավասարեցնելու նպատակով: Աշխատանքային խումբը նշեց այս պարտավորությունների մասին:

71. Աշխատանքային խմբի որոշ անդամներ նշեցին, որ այս հարկերի չկիրառումը նախկին Խորհրդային Միության հանրապետություններից եկող ներմուծումների նկատմամբ կարող է դիտարկվել որպես խտրականություն այլ՝ այսինքն՝ նախկին Խորհրդային Միության հանրապետություններից տարբեր երկրների արտադրանքի նկատմամբ: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը անցել է հարկման նպատակային սկզբունքին բոլոր աղբյուրներից եկող ներմուծումների կապակցությամբ: Ի լրումն, Հայաստանը ձգտում է համոզել իր ԱՊՀ գործընկերներին, որ նախընտրելի է հարկերը գանձել ըստ նպատակատեղի, այլ ոչ թե ծագման: Այնուհետև նա հաստատեց, որ վստահություն չի տրվում արտահանող ԱՊՀ երկրում կիրառվող ակցիզային հարկերին՝ Հայաստան մտնող ԱՊՀ ներմուծումների ակցիզային հարկի վճարման ենթակա գումարը որոշելիս:

72. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Հայաստանը ԱՀԿ-ին իր անդամակցության օրվանից սկսած կկիրառի իր տեղական հարկերը, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը, ՄԱԳՀ-1994-ի 1-ին և 3-րդ հոդվածներին համապատասխան ոչ խտրականության սկզբունքով՝ վերոնշյալ 64-65 պարբերություններում նշված բացառություններով: Այս կապակցությամբ, համաձայն «Ավելացված արժեքի հարկի» և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքների, այս հարկերը կիրառվում են հավասար չափով տեղական և ներմուծված ապրանքների նկատմամբ, և Հայաստանը կիրառում է «առաքվող վայրի» սկզբունքը ավելացված արժեքի և ակցիզային հարկերի նկատմամբ՝ բոլոր աղբյուրներից եկող ներմուծումների առնչությամբ, և հաշվի չի առնվում ներմուծումների նկատմամբ իրենց ներքին շուկաներում՝ նախքան

Հայաստան արտահանելը կիրառվող ակցիզային և այլ հարկերի վճարումը: Ի լրումն սրա, ներմուծումների նկատմամբ կիրառվող բոլոր անուղակի հարկերի կիրառման եղանակը կիրառարարակվի պաշտոնաթերթում կամ այլ ընդարձակորեն մատչելի աղբյուրում և հեշտությամբ հասանելի կլինի ներմուծողների, արտահանողների և տեղական արտադրողների համար: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

Ներմուծման քանակային սահմանափակումներ (ներառյալ՝ արգելման, քվոտաների և լիցենզավորման համակարգերը)

73. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 1995թ. դեկտեմբերի 29-ի N124 որոշումը կանոնակարգում է ոչ սակագնային միջոցառումները Հայաստանում: Ներմուծումների մեծ մասը ազատ է որևէ սահմանափակումներից կամ քվոտաներից: Ներմուծման վրա դրվող սահմանափակումները կատարվում են միայն առողջության, անվտանգության և միջավայրի պաշտպանության նկատառումներով: Ընդգրկված առարկաների մեջ են բոլոր տեսակի գենքերը, ռազմական տեխնոլոգիան և դրա պատրաստման համար անհրաժեշտ սպառվող առարկաները, տեխնոլոգիաները, սարքավորումները և միջուկային կյուբերը (ներառյալ՝ ջերմացուղ կյուբեր) հատուկ ոչ միջուկային կյուբերը ու դրան անչվող ծառայությունները և իոնացնող ճառագայթման աղբյուրները: Այդ ապրանքների ներմուծման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրվող հատուկ թույլտվություն: Ի պատասխան Աշխատանքային խմբի անդամների պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը կտրամադրի այս պահանջները հաստատող օրենքների և միջոցառումների վերաբերյալ իր սկզբնական ծանուցումը, իսկ անդամակցությունից հետո կներկայացնի ներմուծման լիցենզավորման հանձնախմբին:

74. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ հաշվի առնելով որոշակի ապրանքների, աշխատանքի ու ծառայությունների անվտանգությունը վերահսկելու անհրաժեշտությունը՝ շրջակա միջավայրը և մարդու կյանքն ու առողջությունը պաշտպանելու, ինչպես նաև սպառողների իրավունքները պաշտպանելու նպատակով, որոշ ապրանքներ՝ համաձայն 2000թ. մայիսի 12-ի N 239 որոշման, ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստմանը: Դեղագործական ապրանքները և դեղամիջոցները հանված են՝ համապատասխանության պարտադիր հավաստմանը ենթակա (պարտադիր հավաստագրում) ապրանքների ցանկից, բայց ենթակա են ներմուծման և արտահանման թույլտվություն ստանալու պահանջին: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ներմուծման և արտահանման թույլտվություն ստանալու պահանջին ենթակա դեղագործական ապրանքների ու դեղամիջոցների ցանկը հաստատվել է Կառավարության 2000թ. սեպտեմբերի 20-ի 581 որոշմամբ, ինչպես բերված է ստորև՝

Աղյուսակ 7

	Ծածկագիր
Դեղագործական ապրանքներ, դեղա միջոցներ	051000, 1211, 2941, 3001, 3002, 3003, 3004, 3005, 300630 000, 300650 000, 300660, 300840, 1108*, 1301, 1302, 1504, 152000 000, 1702, 1804, 1805, 2207, 2209, 2501, 2520, 27 12, 2801-2802, 280440 000, 28 1000 000, 28 4700 000, 285100, 2904-2909, 2912-2940, 2942, 330 1.

* դեղագործական նպատակներով օգտագործվող ցանկում 1108 և ապրանքների հաջորդ դասերը ենթակա են ներմուծման և արտահանման թույլտվության:

75. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության «Լիցենզավորման մասին» օրենքի դրույթների, մի շարք գործողություններ ենթակա են լիցենզավորման: Լիցենզավորման ենթակա գործողությունների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

76. Ի պատասխան դեղագործական ապրանքների և դեղամիջոցների ներմուծման վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ այդ ապրանքների ներմուծման համար պահանջվում է թույլտվություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից (բացառությամբ անասնաբուժական դեղերի և անչվող ապրանքների): «ՀՀ դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշումը պայման է դնում, որ

- դեղագործական ապրանքների ներմուծման թույլտվությունը տրվի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից,

- թույլտվությունները լինեն եզակի օգտագործման համար,

- թույլտվություն կարող են ձեռք բերել՝

- այն ներմուծողները, որ ունեն առողջապահության նախարարության կողմից տրված դեղագործական ապրանքների և/կամ դեղամիջոցների ներմուծման և արտահանման գործողություններ կատարելու լիցենզիա,

- այն ներմուծողները, որ ունեն առողջապահության նախարարության կողմից տրված դեղագործական ապրանքների և/կամ դեղամիջոցների արտադրման լիցենզիա,

- այն ներմուծողները, որ չունեն լիցենզիա, բայց որոնց գործունեությունը կապված է դեղագործական ապրանքների և դեղամիջոցների հետազոտման, փորձարարական քննման, որակի, արդյունավետության ու անվտանգության վերահսկման հետ:

77. Այնուհետև նա ավելացրեց, որ այդ ապրանքների ներմուծման թույլտվությունը ձեռք բերելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը և պայմանները.

ա) դեղագործական ապրանքների հետ կապված Հայաստանի Հանրապետությունում առևտրային գործունեություն վարելու լիցենզիա («Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, որոշում 36): «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը պայման է դնում, որ դեղամիջոցների արտադրությունն ու առևտուրը, դեղաբույսերի առևտուրը, դեղագործական գործունեությունը, կազմակերպությունների կամ անհատ ձեռներեցների կողմից տրամադրվող բժշկական օգնությունն ու ծառայությունները, զենետիկ ինժեներիան, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն բժշկական կրթական ծրագրերի իրականացումը ենթակա են պետական լիցենզավորման Հայաստանի Հանրապետությունում: Լիցենզավորման մասին օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտություն կար փոփոխելու որոշ որոշումներ՝ վերադրումներից և անհամապատասխանությունից խուսափելու նպատակով: Առողջապահության նախարարությունը պատասխանատու էր այս փոփոխությունների համար, սակայն որոշումները, բացառությամբ NN 61 և 415 որոշումների, դեռ ուժի մեջ են: Դեղամիջոցների մասին օրենքը պայման է դնում, որ ներմուծման և արտահանման գործունեությունը պետք է լիցենզավորվի: Կառավարության կողմից մշակվում են հատուկ պահանջներ ներմուծման և արտահանման գործունեության լիցենզավորման համար: Ներկայումս մեծածախ առևտրի լիցենզիան իրավունք է տալիս առևտրատնտեսական ձեռնարկություններին կատարելու ներմուծման և արտահանման գործողություններ: Որոշում N 36-ը պայման է դնում, որ.

- դեղագործական և բժշկական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է լիցենզավորման,

- լիցենզավորումը կատարվում է առողջապահության նախարարության կողմից,
- լիցենզիաները տրվում են 5 տարի ժամկետով:

Դեղագործական ապրանքների և բժշկական պիտույքների մեծածախ և մանրածախ առևտրի լիցենզիաները տրվում են առողջապահության նախարարության լիցենզավորման պետական հանձնախմբի կողմից: Լիցենզիաների տրամադրման ընթացակարգերը հաստատվել են 188-րդ որոշմամբ: Օտարերկրյա պետությունում բժշկական և դեղագործական կրթություն ստացած անձանց նկատմամբ կիրառվում են նույն ընթացակարգերը (ներառյալ՝ դեղագործական ապրանքների ներմուծման լիցենզիան): Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային համաձայնագրերի գոյության դեպքում կիրառվում են համաձայնագրում նշված ընթացակարգերը (որոշում N 188, 24 հուլիսի 1996թ.): Միջազգային և միջկառավարական ծրագրերի կատարման համար հրավիրված օտարերկրյա մասնագետները ենթակա չեն լիցենզավորման պահանջին:

բ) Պահանջվում է, որ ներմուծված կամ արտահանված դեղագործական ապրանքները գրանցվեն Հայաստանի Հանրապետությունում: Դեղագործական ապրանքների և բժշկական պիտույքների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում կատարվում է համաձայն վերջերս ընդունված «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և առողջապահության նախարարության դեղագործական բաժնի կողմից հաստատված գրանցման պահանջներին համապատասխան:

գ) Ներմուծված կամ արտահանված դեղագործական ապրանքների ժամկետի լրանալուն պետք է մնացած լինի առնվազն մեկ տարի, բացառությամբ այն դեղագործական ապրանքների, որոնք սկզբնական ժամկետը մեկ տարուց պակաս է (վերջիններիս՝ ներմուծման պահին մինչև ժամկետի լրանալը պետք է մնացած լինի ժամկետի առնվազն երկու երրորդը):

78. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ որպես ընդհանուր կանոն Հայաստանում տնտեսական գործունեություն ծավալելու համար, լինի իրավաբանական անձ կամ թե ֆիզիկական անձ, պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետությունում: Գրանցման պահանջները և գործընթացները պարզ են և կարճաժամկետ, դրանք չեն ընդգրկում ներմուծումների և արտահանումների որևէ արգելքներ կամ սահմանափակումներ, և խտրականություն չեն դնում տեղական կամ օտարերկրյա ձեռնարկությունների միջև: Այսպիսով, բոլոր ձեռնարկությունները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, որոնք գրանցված են և գործում են Հայաստանի Հանրապետությունում անկախ սեփականատերի ազդեցությունից կամ սեփականության կառուցվածքից, իրավունք ունեն օտարերկրյա տնտեսական գործունեությամբ զբաղվել՝ ներառելով արտահանումները և ներմուծումները (Նախագահի հրամանագիրը «ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեության մասին» 1992թ. հունվարի 4): Այսպիսով, օտարերկրյա մի որևէ ընկերություն, որը ցանկանում է ներմուծել իր ապրանքը Հայաստանի Հանրապետություն, պետք է դիմի միայն պետական գրանցման համար, ինչպես նաև բավարարի լրացուցիչ պահանջներին, որոնք առնչվում են տվյալ ապրանքի ներմուծման հետ: Լրացուցիչ պահանջները, կապված դեղագործական ապրանքների հետ, չեն հանդիսանում որպես սահմանափակող միջոցառումներ, այլ նրանք կիրառվում են միայն առողջապահության և անվտանգության նպատակներից ելնելով և հավաստելու ներմուծված դեղագործական ապրանքների համապատասխանությունը Հայաստանում ընդունված որակի ստանդարտների հետ: Բոլոր պահանջները և գործառույթները միևնույն են թե հայկական և թե օտարերկրյա ձեռնարկությունների համար: Համաձայն N 581 որոշման դրույթների, որպեսզի դեղագործական ապրանքներ ներմուծվեն Հայաստանի Հանրապետություն, անձը պետք է ունենա դեղագործական ապրանքների վաճառքի լիցենզիա (գործունեության լիցենզիա) և հատուկ առաքման համար ներմուծողը պետք է ձեռք բերի գործունեության լիցենզիան առողջապահության նախարարությունից: Ներմուծման լիցենզավորման շնորհման գործառույթը հիմնականում նպատակաուղղված է ստուգելու դեղորայքի որակը և համապատասխանությունը Հայաստանում ընդունված տեխնիկական պահանջներին: Ներմուծման թույլտվությունը տրվում է հայտը ներկայացնելուց հետո 10 օրվա ընթացքում:

Գրանցման և լիցենզավորման ծախսերը հետևյալն են՝

ա)	Իրավաբանական անձանց գրանցելու համար անհրաժեշտ պետական տուրքը	
	- որպես մասնավոր ձեռնարկատեր	3,000 Դրամ
	- որպես ընկերություն	12,000 Դրամ
բ)	Դեղագործության գործունեության լիցենզիա ձեռք բերելու գինը	200,000 Դրամ
գ)	Յուրաքանչյուր որակի թեստի գինը	16,200 Դրամ
դ)	Ներմուծում-արտահանում թույլտվության գինը մեկ ամսվա գործունեություն իրականացնելու համար	20,500 Դրամ
	(թույլտվության թողարկման հետ կապված ծախսերը փակելու համար, փաստաթղթերի համապատասխանության գնահատման համար, փաստաթղթերի իրավասության ստուգումը երեք ամսից ոչ ավել ժամկետի համար)	

20,500 Դրամ (Նշում՝ 1 ԱՄՆ դոլար= 560 Դրամ)

Ինչպես նշված է կետ [Դ]-ում լիցենզիայի գինը ծածկում է լիցենզիայի դուրս թողարկման ծախսը:

79. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ներմուծման թույլտվություն ձեռք բերելու համար կարող է դիմում ներկայացնել ցանկացած անձ, ձեռնարկություն կամ կազմակերպություն, եթե այն ունի դեղագործական գործունեություն վարելու համապատասխան լիցենզիա: Որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց գրանցվել ներկայացնում է ավտոմատ գործընթաց, որը, ըստ անհրաժեշտության, ենթարկվում է միայն պետական լիցենզիա ունենալու որևէ պահանջին: Թույլտվության համար դիմումների վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն տաս օրվա ընթացքում՝ դիմումը ստանալու օրվանից, թեև գործնականորեն թույլտվությունները կարող են ձեռք բերվել ավելի կարճ ժամանակահատվածում: Եթե ապրանքները ժամանում են առանց թույլտվության, ապա ներմուծումը կարող է կասեցվել մաքսատան միջոցով մինչև ներմուծման անհրաժեշտ թույլտվության ձեռք բերումը:

80. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ կառավարության որոշումը, որը փոփոխություններ է մտցնում կառավարության N 581 որոշման մեջ, կընդունվի Հայաստանի կառավարության կողմից մինչև Հայաստանի անդամակցության որոշման ընդունումը ԱՀԿ Վիժնայի խորհրդի կողմից: Այս որոշումը կփոխի ներմուծման լիցենզավորման իրավասության ժամանակահատվածը մեկ տարով և հնարավորություն կտա նույն ներմուծողներին բազմակի առաքումներ կատարելու, ինչպես նաև կհեշտացնի ստուգման գործառույթները:

81. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ կապված դեղագործական ապրանքների կանոնակարգման հետ, ներմուծողները և արտահանողները կարող են համապատասխան տեղեկատվություն գտնել www.pharm.am ինտերնետային էջում:

82. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ դեղագործական ապրանքներ ներմուծելու թույլտվություն ստանալու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝ հայտ, դեղագործական ապրանքներ ձեռք բերելու

փաստաթուղթ/պայմանագիր, Հայաստանում դեղագործական ապրանքների առևտրով զբաղվելու լիցենզիա, արտադրողի կողմից տրամադրված որակի հավաստագիր: Ներմուծման թույլտվությունները տրամադրվում են համապատասխան վճարը ստանալուց հետո: Ի պատասխան լրացուցիչ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ վճարը նախատեսված է այնպես, որ միայն ծածկի դիմումի դիտարկման համար տրամադրված ծառայությունների ծախսերը: Վճարի չափը տատանվում է դիմումից դիմում ի համապատասխանություն համապատասխան դիմումը դիտարկելու համար ձեռք բերված որոշակի փորձի:

83. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ թույլտվության համար դիմումները կարող են մերժվել, եթե. ա) ներկայացված փաստաթղթերում տեղ են գտել սխալ կամ թերի տեղեկություններ, բ) ապրանքների վավերացման նվազագույն ժամկետի վերաբերյալ պահանջը չի բավարարվել, գ) իրական ներմուծված դեղագործական ապրանքները չեն համապատասխանում ներմուծման փաստաթղթերում ձևակերպված հատկորոշումներին, դ) ներմուծված դեղագործական ապրանքները չեն գրանցվել Հայաստանում, կամ ե) ներմուծված դեղագործական ապրանքների որակը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում ընդունված որակի ստանդարտներին: Թույլտվություն տրամադրելու չարդարացված հետաձգումները կամ մերժումը կարող են հիմք հանդիսանալ դատական գործի հարուցման՝ մերժմանը հաջորդող 30 օրվա ընթացքում:

84. Հայաստանի ներկայացուցիչը այնուհետև նշեց, որ թույլտվությունները տրվում են պարտավորությունների կատարման անհրաժեշտ ժամկետի համար, բայց ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով: Թույլտվության վավերացման ժամկետը կարող է երկարաձգվել դիմողի հիմնավորված խնդրանքի դեպքում: Թույլտվությունները տրամադրող մարմինը կարող է ժամանակավորապես դադարեցնել դրա վավերացումը կամ չեղյալ համարել այն: Թույլտվությունը չի կարող փոխանցվել այլ ներմուծողի: Ի պատասխան լրացուցիչ հարցերի, նա հաստատեց, որ թույլտվություններ և լիցենզիաներ կարող են ձեռք բերել և հայրենական և օտարերկրյա կազմակերպությունները, եթե դրանց առևտրատնտեսական գործունեությունը գրանցված է, և լիցենզիայի ձեռքբերման պահանջների միջև տարբերություն չկա՝ կախված նրանից, թե դիմողն ունի հայրենական կամ օտարերկրյա ծագում:

85. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ բացի (HS-3102-3105) պարարտանյութից չկան այլ տարբեր ազդրոքիմիական նյութեր, որ ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստմանը (պարտադիր հավաստագրում): Համաձայն 1995թ. դեկտեմբերի 19-ի N 124 որոշման, բուսական պաշտպանության քիմիական նյութերի (HS 38.08) ներմուծումը պետք է թույլատրվի գյուղատնտեսության նախարարության կողմից, առավել, բուսական պաշտպանության քիմիական նյութերի ներմուծման թույլտվությունը պետք է նաև հաստատվի գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության տեսչության կողմից: Գրանցված բուսական պաշտպանության քիմիական նյութերի՝ ներմուծման համար թույլատրված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավասությունը լիազորված է գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության տեսչությանը՝ մինչև բուսական պաշտպանության քիմիական նյութերի գրանցման համար միջգերատեսչական պետական հանձնախմբի ստեղծումը: Ներմուծված կամ արտահանված քիմիական նյութերը պետք է գրանցվեն Հայաստանի Հանրապետությունում: Համաձայն բույսերի պաշտպանության նյութերի Հայաստանի Հանրապետություն ներմուծման վերաբերյալ թույլտվությունների տրամադրման կանոնների, թույլտվություն ստանալու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը. ա) դիմում, բ) արտադրողի կամ համապատասխան կազմակերպության կողմից տրված ծագման և որակի հավաստագիր: Գյուղատնտեսական քիմիական նյութերի ներմուծման թույլտվությունը տրվում է ներմուծման գործարքի համար (եզակի օգտագործման համար): Թույլտվություն տրվում է միայն այն գյուղատնտեսական քիմիական նյութերի համար, որոնք ընդգրկված են Հայաստանում գրանցված գյուղատնտեսական քիմիական նյութերի ցանկում: Թույլտվությունը սովորաբար տրվում է 24 ժամվա ընթացքում՝ թույլտվության համար պահանջվող փաստաթղթերը տեսչության կողմից ստանալուց հետո: Թույլտվություն ստանալու դիմումը կարող է մերժվել այն դեպքում, երբ ներմուծողը պահանջվող փաստաթղթերում ներկայացնում է սխալ տեղեկություններ: Թույլտվություն տրամադրելու չարդարացված հետաձգումները կամ մերժումը կարող են դատական գործի հարուցման, ներառյալ՝ վերադաս մարմնին բողոքարկելու օրենքով սահմանված իրավունքի իրացման հիմք հանդիսանալ:

86. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ մինչև Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցելու օրը Հայաստանը կտրամադրի նախնական ծանուցում՝ իր ներմուծման լիցենզավորումը կամ թույլտվության պահանջները կանոնակարգող բոլոր օրենքների, կանոնակարգերի և այլ ընթացակարգերի վերաբերյալ, օրինակ՝ միջոցառումների ցանկը, օրենքները, ինչպես նաև ներմուծման լիցենզավորման հարցաթերթիկի իր պատասխանները ներմուծման լիցենզավորման հանձնախմբին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորության վերաբերյալ:

87. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ սկսած ԱՀԿ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության օրվանից, Հայաստանը կվերացնի և չի սահմանի, վերասահմանի կամ չի կիրառի ներմուծումների նկատմամբ քանակային սահմանափակումներ կամ այլ ոչ սակագնային միջոցներ, ինչպիսիք են՝ լիցենզավորումը, քվոտավորումը, արգելքները, թույլտվությունները, նախնական հավանության պահանջները, լիցենզավորման պահանջները և հավասարազոր ազդեցություն ունեցող այլ սահմանափակումները, որոնք չեն կարող հիմնավորվել ԱՀԿ Համաձայնագրի դրույթներով: Նա այնուհետև հաստատեց, որ Հայաստանի կառավարության իրավական լիազորությունը՝ ժամանակավորապես կանխելու ներմուծումները և արտահանումները կամ կիրառելու լիցենզավորման պահանջներ, որ կարող են օգտագործվել ժամանակավորապես կանխելու, արգելելու կամ այլապես սահմանափակելու առևտրի ծավալը, անդամակցելու օրվանից սկսած կիրառվի համաձայն ԱՀԿ պահանջների, մասնավորապես՝ ՄԱԳՀ-1994-ի 11-րդ, 12-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների և գյուղատնտեսության, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների, ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի, պաշտպանական միջոցառումների և առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին: Այս կապակցությամբ նա նշեց նաև, որ ներմուծումներին վերաբերող՝ 1995թ. դեկտեմբերի 29-ի N 124, N 129 բանաձևերի մեջ պարունակվող նմանաձև պահանջները հավասարապես կկիրառվեն ներմուծումների և համանման տեղական ապրանքների գնման կամ վաճառքի նկատմամբ: Բացառություններ այդ պահանջներից հավասարապես կկիրառվեն ներմուծումների և տեղական ընկերությունների արտադրանքի նկատմամբ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

Ներմուծման նվազագույն գներ

88. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանը չի կիրառում ներմուծման նվազագույն գների համակարգ:

Մաքսային գնահատում

89. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հիշատակեցին Մաքսային գնահատման մասին համաձայնագիրը և Հայաստանի Մաքսային կանոնակարգերի որոշակի անհամապատասխանությունները՝ կապված մաքսային

գնահատման հետ: Այդ անդամները պահանջեցին ավելի մանրամասն բացատրություններ՝ կապված Հայաստանի կողմից Մաքսային գնահատման համաձայնագրի որոշակի դրույթների կատարման հետ, մասնավորապես՝ հոդվածներ 7-ի, 8-ի, 10-ի, 11-ի և 12-ի վերաբերյալ:

90. Նշելով, որ Հայաստանը հանդիսանում է Մաքսային համաշխարհային կազմակերպության անդամ, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ մաքսային գնահատման կարգը ձևակերպված է 1993թ. դեկտեմբերի 6-ի Կառավարության N 615 որոշմանը կից՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի հաշվարկման ընթացակարգում և Մաքսային սակագնի մասին 1993թ. օգոստոսի 18-ի օրենքում և հետագայում 2001թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած Մաքսային օրենսգրքով ուժը կորցրած «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքում:

91. Համաձայն այդ օրենքների՝ մաքսային արժեքի որոշման առաջնային եղանակն է հանդիսանում գործարքի արժեքի եղանակը: Օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Մաքսային նոր օրենսգրքը, նախատեսում են գնահատման նույն վեց եղանակները, որ ներկայացված են ՄԱԳՀ-1994-ի 7-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագրում: Ի պատասխան լրացուցիչ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Մաքսավճարների մասին օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է՝ Մաքսային գնահատման համաձայնագրի 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված գնահատման եղանակների կիրառման կարգի փոփոխության հնարավորություն՝ ներմուծողի կողմից պահանջի դեպքում: Այս դրույթը ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության նոր Մաքսային օրենսգրքի հոդված 94-ի կետ 2-ում:

92. Ի պատասխան փոխկապակցված անձանց միջև առևտրի վերաբերյալ Աշխատանքային խմբի որոշ անդամների հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ այդպիսի առևտրի վերաբերյալ դրույթները ընդգրկվել են Մաքսային օրենսգրքի 78 և 87 հոդվածներում: Մաքսային գնահատման համաձայնագրի 11-րդ հոդվածի կապակցությամբ, Մաքսավճարների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, ինչպես նաև Մաքսային նոր օրենսգրքի 96-րդ հոդվածը նախատեսում են բողոքարկման ընթացակարգեր՝ ապրանքների մաքսային գնահատման վերաբերյալ մաքսային մարմինների որոշումների և գործողությունների կապակցությամբ: Մաքսավճարների մասին օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը ընդգրկում է դրույթներ՝ Գնահատման համաձայնագրի հոդված 5.2-ում նշված իրադրությունների կապակցությամբ: Համապատասխան դրույթները ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության Մաքսային նոր օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում:

93. Ի պատասխան լրացուցիչ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «վճարված կամ վճարման ենթակա գնի» գաղափարը լուսաբանվել է 1998թ. դեկտեմբերին ընդունված «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետում, ինչպես նաև Մաքսային օրենսգրքի 81-րդ հոդվածում: Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ Մաքսային գնահատման համաձայնագրի 8-րդ հոդվածի առաջությամբ Մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածը նախատեսում է, որ մաքսային արժեքը պետք է ներառի:

Արտահանման երկրում ապրանքների գործարքային արժեքը՝

ա) մինչ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը,

բ) մինչ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը, բացառությամբ՝ ապրանքների ձեռքբերման համար կոմիսիոն ծախսերի,

գ) մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված՝

i) ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը,

ii) ապրանքների արտադրության մեջ օգտագործված գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը,

iii) ապրանքների արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը,

iv) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ ճարտարագիտական, ձևավորման, նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը:

ե) գնորդի կողմից ապրանքների վաճառքի համար անհրաժեշտ ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները,

զ) տարայի, փաթեթի կամ փաթեթավորման աշխատանքների արժեքը,

է) մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարները:

94. Ի պատասխան մաքսատան կողմից կիրառվող տարադրամի փոխարժեքի վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ օգտագործվում է Հայաստանի Կենտրոնական բանկի վարած արտարժույթի ամենօրյա աճուրդներից ստացվող տարադրամի փոխարժեքը: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր օր հայտարարում է տարադրամի փոխարժեքը, և այդ փոխարժեքները տպագրվում են մամուլում, ինչպես պահանջվում է Մաքսային գնահատման համաձայնագրի հոդված 9.1-ով: Ի պատասխան գաղտնի տեղեկությունների պաշտպանության մեխանիզմի վերաբերյալ հարցերի՝ Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ տեղեկությունների գաղտնիությունը դիտարկող դրույթները ընդգրկվել են նոր Մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ կետում՝ համաձայն Մաքսային գնահատման համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների:

95. Ի պատասխան ապրանքների մաքսային գնահատման վերաբերյալ կայացված որոշումների վերանայման գործընթացի մանրամասն նկարագրության վերաբերյալ պահանջների, Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ Մաքսային գնահատման համաձայնագրի 11-րդ հոդվածի կապակցությամբ Մաքսավճարների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը նախատեսում են մաքսային մարմինների որոշումների և գործողությունների բողոքարկման գործընթացներ: Հոդվածը նախատեսում է մաքսային մարմնի կայացրած որոշման բողոքարկման հնարավորություն՝ ուղղված մաքսային ավելի բարձր մարմին կամ դատարան: Մաքսային ավելի բարձր մարմինը պետք է իր որոշումը կայացնի բողոքարկման վերաբերյալ և մեկ ամսվա ընթացքում տեղեկացնի դիմողին այդ որոշման մասին: Համապատասխանաբար, նոր Օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը նախատեսում են բողոքարկման ընթացակարգեր՝ մաքսային մարմինների որոշումների և գործողությունների առումով:

96. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ ինչպես պահանջում է Մաքսային գնահատման համաձայնագրի 12-րդ հոդվածը, համապատասխան ազգային օրենքները, կանոնակարգերը, որոշումները և վճիռները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության ամփոփագրում կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագրում: Մաքսային գնահատման համաձայնագրի 13-րդ հոդվածում (վերջին նախադասություն) պարունակվող պարտավորության կապակցությամբ, երբ ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել անմիջապես, Մաքսավճարների մասին օրենքի 12-րդ հոդվածի նախկին 11-րդ կետը նախատեսում էր, որ երբ մաքսային մարմինները համարում են անհրաժեշտ ճշտել ու այնուհետև մանրակրկիտ

հետազոտել դիմողի կողմից համապատասխան հայտարարագրում հայտարարագրված մաքսային արժեքը, ներմուծողներին իրավունք է տրվում հետ վերցնել իրենց ապրանքները մաքսատան հսկողությունից՝ բանկի մեկ ամիս վավերացման երաշխավորության դիմաց, վիճելի վճարման ենթակա գումարին հավասար քանակությամբ, վերջնական որոշման համաձայն հետագա փոխհաշվարկի պայմանով: Այնուհետև նա նշեց, որ Մաքսային նոր օրենսգրքը՝ 96-րդ հոդվածը (կետ 1), ընդգրկել է «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի բովանդակությունը: Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածը (կետ 1) նախատեսում է, որ ներմուծող՝ գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում իրավունք ունի՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստանալ գրավոր բացատրություն գնահատման որոշման և մաքսային մարմինների օգտագործած գնահատման եղանակի վերաբերյալ:

97. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ՄԱԳՀ-1994-ի 7-րդ հոդվածի իրականացման մասին ԱՀԿ համաձայնագրի բոլոր դրույթները կընդունվեն որպես Հայաստանի Մաքսային օրենսգրքի ամբողջական մաս՝ Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցելու օրվանից սկսած: Բոլոր համապատասխան օրենքները ամբողջովին կհամապատասխանեն ՄԱԳՀ-1994-ի 7-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագրի պահանջներին: Մասնավորապես, 2002թ. սեպտեմբերի 25-ին փոփոխված Մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածը սահմանում է, որ մաքսատուրքերը պետք է սահմանվեն համաձայն Մաքսային գնահատման համաձայնագրի մեկնաբանման ծանոթագրությունների: Մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածին համապատասխան ընդունված կառավարության որոշմամբ համաձայնագրի մեկնաբանման ծանոթագրությունները ամբողջովին կկիրառվեն Հայաստանի մաքսային սակագներ սահմանող ակտերում, ինչպես նաև, Տվյալների մշակման սարքավորումների (Carrier Media Bearing) ծրագրի գնահատման մասին 1984թ. սեպտեմբերի 24-ի որոշումը ընդգրկվել է նոր Մաքսային օրենսգրքում (85-րդ հոդված, կետ դ/)` ապահովելով, որ ծրագրի գնահատումը հիմնված լինի կրիչների արժեքի վրա: Հայաստանը պետք է ընդունի այս խնդիրների նկատմամբ համապատասխան օրենսդրություն՝ նախքան Հայաստանի ԱՀԿ անդամակցության մասին որոշման ընդունումը: Նա հաստատեց, որ 2002թ. նոյեմբերի 20-ին Հայաստանի Ազգային ժողովը հաստատել է Մաքսային օրենսգրքում անհրաժեշտ փոփոխությունները և, որ համապատասխան օրենսդրական ակտը ուժի մեջ կմտնի նախքան ԱՀԿ Գլխավոր խորհրդի Հայաստանի Հանրապետության ԱՀԿ-ին անդամակցելու վերաբերյալ որոշումը: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունների վերաբերյալ:

Մաքսային այլ պաշտոնականություններ

Ծագման կանոններ

98. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանի կողմից կիրառվող ծագման կանոնները հետևում են Ծագման կանոնների մասին համաձայնագրում սահմանված սկզբունքներին՝ ապրանքի ծագման երկիր է հանդիսանում այն երկիրը, որտեղ դա ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման: Ծագումը որոշելու եղանակի ընտրությունը կախված է դիտարկվող ապրանքներից և համապատասխան միջազգային պայմանագրից, որի առնչությամբ կիրառվում են ծագման կանոնները: Այնուամենայնիվ, բացառությամբ՝ մեկ երկրում ամբողջությամբ ծագող ապրանքների, օգտագործվում է սակագնային վերնագրի փոփոխության չափանիշը (4-Նիշանի մակարդակ՝ HS դասակարգման մեջ), եթե չի նախատեսված այլընտրանքային եղանակ: Համաձայն՝ Կառավարության 1993թ. դեկտեմբերի 6-ի N 615 որոշմանը կից ծագման երկիրը որոշելու ընթացակարգի, որպես ծագման երկիր է դիտվում այն երկիրը, որտեղ ապրանքը ամբողջությամբ պատրաստվել է կամ որտեղ այն ենթարկվել է բավարար վերամշակման:

99. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ավելացրեց, որ Մաքսային օրենսգրքը ընդգրկում է ծագման կանոնների դաշտը կանոնակարգող համապատասխան դրույթներ: Մաքսային օրենսգրքը լրիվ կերպով համապատասխանում է ԱՀԿ դրույթներին: Մասնավորապես, տրված են ճշգրիտ սահմանումներ հետևյալի համար՝

այն ապրանքների, որ պետք է դիտարկվեն որպես մեկ երկրում ամբողջությամբ ձեռք բերված ապրանքներ, բավարար վերամշակման չափանիշի՝ սակագնային դասակարգման փոփոխության իմաստով ու ավելացված արժեքի տոկոսադրույքի չափանիշի,

նվազագույն գործողությունների կամ գործընթացների, որոնք իրենցով չեն որոշում ապրանքների ծագումը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 160-րդ հոդվածի, հետևյալ ապրանքները պետք է համարվեն որպես մեկ երկրում ամբողջությամբ ձեռք բերված ապրանքներ՝

ա) կենդանի կենդանիներ, որոնք ծնվել և աճեցվել են այդ երկրում,

բ) կենդանիներ, որոնք ձեռք են բերվել տվյալ երկրում որսորդության, թակարդելու, ձկնորսության (տվյալ երկրի տարածքային և ներքին ջրերում) կամ համանման այլ գործողության հետևանքով,

գ) կենդանի կենդանիներից տվյալ երկրում ստացված ապրանքները,

դ) տվյալ երկրում աճեցված, հնձված, քաղված կամ հավաքված բույսերը կամ բուսամթերքը,

ե) տվյալ երկրի տարածքից, ընդերքից կամ տարածքային և ներքին ջրերի հատակից ստացված,

արդյունահանված օգտակար հանածոները և այլ բնական պաշարները, որոնք ընդգրկված չեն սույն կետի «ա»-ից «դ» ենթակետերում,

զ) տվյալ երկրում արտադրության, վերամշակման կամ սպառման հետևանք հանդիսացող մնացորդները և երկրորդային հումքը, որոնք պիտանի չեն կամ պիտանի են միայն որպես հումք,

է) տվյալ պետության դրոշն օրինականորեն կրող նավերով չեզոք ջրերում ձկնորսությամբ ձեռք բերված արտադրանքը,

ը) սույն կետի «է» կետում նշված ենթակետում նշված ապրանքներից տվյալ պետության դրոշն օրինականորեն կրող նավ-գործարաններում պատրաստված արտադրանքը,

թ) տվյալ երկրի պատկանող կամ վերջինիս կողմից վարձակալված տիեզերանավերում թռիչքի ընթացքում ստացված արտադրանքը,

ժ) տվյալ երկրում սույն կետի «ա»-ից «թ» ենթակետերում նշված արտադրանքից ստացված կամ արտադրված ապրանքները:

100. Այնուհետև նա ավելացրեց, որ համաձայն նոր Մաքսային օրենսգրքի 161-րդ հոդվածի, երբ ապրանքի արտադրության մեջ դիտարկվում են մեկից ավելի երկրներ, ապրանքի ծագման երկիր կհամարվի վերջին երկիրը, որտեղ ապրանքը ենթարկվել է էական վերամշակման: Էական վերամշակման չափանիշները որոշվում են հետևյալ կերպ՝

ա) մշակման գործողություններ, որոնք բերում են ապրանքի ապրանքային ծածկագրի առաջին չորս նիշերից ցանկացածի փոփոխությունը,

բ) տվյալ ապրանքի արտադրության մեջ օգտագործվող տվյալ երկրի ծագում ունեցող նյութերի արժեքի և ավելացված արժեքի տոկոսային բաժինը կազմում է արտադրանքի բացթողման (մատակարարման) գնի ամենաքիչը 30 տոկոսը, ընդ որում այդ գնի մեջ հաշվի չեն առնվում անուղղակի հարկերը, առևտրային վերադրիները, տրանսպորտային, ապահովագրման, պահպանման և համանման այլ ծախսերը:

Այն ապրանքների դեպքում, որոնք դասակարգված են որպես կոմպլեկտներ (կոմպլեկտավորված

ապրանքներ) կամ դիտվում են որպես այդպիսիք, Մաքսային օրենսգրքի 162-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ այդ ապրանքների ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ կոմպլեկտը հավաքվել է, եթե կոմպլեկտի տվյալ երկրի ծագում չունեցող մասերի ընդհանուր արժեքը չի գերազանցում դրա արժեքի 45 տոկոսը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 163-րդ հոդվածի՝ ապրանքի բավարար վերամշակման չափանիշներ չեն համարվում՝

ա) բացառապես ապրանքների նպատակային նշանակման և վերջնական օգտագործման մեջ կատարվող փոփոխությունները (օրինակ՝ մարդատար մեքենայից բեռնատարի հավաքում և այլն),

բ) ցանկացած ձևով կատարվող փաթեթավորման գործողությունները (ներառյալ շալցում, փաթաթում և այլն),

գ) ներդաշնակ համակարգի կանոնների համաձայն՝ անավարտ ապրանքներն ավարտուն ապրանքների շարքում դասակարգելը կամ ավարտված, բայց չմոնտաժված արտադրանքը մոնտաժված ապրանքների շարքում դասակարգելը,

դ) պարզ հավաքման գործողությունները, մասնավորապես՝ մեկ այլ անվանման տակ դասակարգելի ապրանքներ ստանալու համար միավորների խրոցակային միացումը (օրինակ՝ մոնիտորի, ավտոմատ մուտցման միավորի, ստեղնաշարի, մկնիկի միացմամբ համակարգի ստացում և այլն),

ե) բացառապես պաշտպանական միջոցների ավելացումը,

զ) ԱՏԳԱԿ-ի 01 (կենդանի կենդանիներ) ապրանքային խմբում դասակարգված ապրանքներից 02 (միս և մսամթերք) ապրանքային խմբի ապրանքներ ստանալը,

է) ապրանքների վաճառքի և փոխադրման նախապատրաստական աշխատանքները (խմբաքանակների մասնատում, տեսակավորում, վերափաթեթավորում և այլն),

ը) արտադրանքի պահպանության, տեղափոխման և պահեստավորման համար անհրաժեշտ գործողությունները,

թ) ապրանքների վրա կամ դրանց փաթեթավորման վրա նիշերի, պիտակների կամ այլ տարբերակող նշանների ավելացումը,

ժ) ապրանքների (բաղադրամասերի) խառնման միջոցով այնպիսի արտադրանքի ստացումը, որի բնութագրերն էապես չեն տարբերվում ելակետային բաղադրամասերի բնութագրերից,

Ճա) սույն կետի ա)-ից ժ) ենթակետերում նշված երկու կամ ավելի գործողությունների համակցությունը:

101. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Մաքսային օրենսգրքի 162-րդ հոդվածը սահմանում է ծագման կանոնների կիրառման հաջորդականությունը: Իր տեսակետից, Մաքսային օրենսգրքով սահմանված ծագման կանոնները չեն հետապնդում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ առևտրային նպատակներ և ոչ էլ ստեղծում խոչընդոտներ ազատ առևտրի համար՝ համաձայն ԱՀԿ նպատակների: Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ ծագման կանոնների վերաբերյալ Մաքսային օրենսգրքի դրույթները կիրառվում են ոչ միայն ԱՊՀ երկրներից ներմուծումների, այլ նաև այլ երկրների ներմուծումների նկատմամբ, և որ ծագման հավաստագրերը ընդունվում են ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ ոչ ԱՊՀ երկրների ներմուծումներից: Համաձայն Մաքսային օրենսգրքի հոդված 168-ի՝ ծագման հավաստագրի բացակայությունը ինքնին չի կարող հանդիսանալ միակ պատճառը ապրանքների ներմուծումն արգելելու համար: Իր տեսակետից, Մաքսային օրենսգրքի հոդված 167-ի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ԱՀԿ Ծագման կանոնների մասին համաձայնագրի հոդված 2-ի և հավելված II-ի կետ 3դ)-ի պահանջներին: Հոդված 169-ը պարունակում է դրույթներ՝ ապրանքների ծագման երկրի որոշման և հաստատման հետ կապված պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության և որոշումների բողոքարկման վերաբերյալ: Այդ հոդվածը նախատեսում է նաև, որ հայտարարատուն կարող է դիմել վերադաս մարմիններ կամ դատարան, եթե նա համաձայն չէ ապրանքների ծագման երկրի որոշման կամ հաստատման եղանակի հետ: Վերադաս մարմնից պահանջվում է, որ այն քննարկի դիմումը և որոշում կայացնի մեկամսյա ժամկետում և տեղեկացնի դիմողին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այդ պարտավորությունների վերաբերյալ:

102. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Հայաստանի ԱՀԿ անդամակցության օրվանից իր օրենքներն ու կանոնակարգերը՝ կապված ծագման կանոնների հետ, կհամապատասխանեն Ծագման կանոնների մասին համաձայնագրին և ԱՀԿ այլ դրույթներին, ներառյալ՝ հոդված 2-ի դ) և հավելված II-ի կետ 3դ)-ի պահանջներին: Այս պայակցությամբ, նա հաստատեց նաև, որ ոչ արտոնյալ և արտոնյալ ծագման կանոններին համապատասխանաբար, Հայաստանի համապատասխան իրավասու մարմինները կամ իրենց անունից գործող նախաառաքումային ստուգման իրավասու մարմինները՝ արտահանողի, ներմուծողի կամ հիմնավոր շարժառիթներ ունեցող որևէ անձի պահանջի դեպքում կապահովեն ներմուծված ապրանքների ծագման գնահատումը և կլնեն դրա տրամադրման պայմանները: Համաձայն Ծագման կանոնների մասին ԱՀԿ համաձայնագրի վերը նշված դրույթների՝ այդպիսի գնահատման վերաբերյալ ցանկացած պահանջ կընդունվի անգամ մինչև տվյալ ապրանքների առևտուրը սկսելը, և ցանկացած այդպիսի գնահատում օրինական է երեք տարվա ընթացքում: Նա հաստատեց, որ ՀՀ Ազգային ժողովը 2002թ. նոյեմբերի 20-ին ընդունել է անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները այս դրույթների լիակատար իրականացման համար, և որոնք ուժի մեջ կմտնեն նախքան ԱՀԿ Գլխավոր խորհրդի որոշումը Հայաստանի՝ ԱՀԿ-ին անդամակցելու վերաբերյալ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Նախաառաքումային ստուգում

103. Ի պատասխան հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ թեև Հայաստանի կառավարությունը հայտարարել էր միջազգային մրցույթ՝ ընդունելու մրցակցային հայտեր, 1998թ. բոլոր ուղղություններից եկող ներմուծումների նախաառաքումային ստուգումը կատարելու համար ընկերություն ընտրելու նպատակով, ոչ մի համաձայնագիր դեռ չի ստորագրվել: Հայաստանի ներկայացուցիչը այնուհետև նշեց, որ Հայաստանի կառավարությունը ներկայումս որևէ պատճառ կամ անհրաժեշտություն չի տեսնում ներգրավելու նախաառաքումային ստուգման ընկերություններ, և նշեց, որ նախաառաքումային ստուգումը Հայաստանում դեռ չի գործում:

104. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ իր կառավարությունը կապահովի, որ նախաառաքումային ստուգման համակարգի որևէ հետագա ծրագիր կիրառվի համաձայն ԱՀԿ Համաձայնագրի պահանջների, մասնավորապես՝ Նախաառաքումային ստուգման մասին համաձայնագրի, Աշխատանքային խմբի 1997թ. դեկտեմբերի 2-ի հանձնարարականների և այդ Աշխատանքային խմբի կողմից տրված որևէ հետագա հանձնարարականների, 7-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագրի (Մաքսային գնահատման մասին համաձայնագիր) և Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին, Ծագման կանոնների մասին, 6-րդ հոդվածի իրականացման մասին (հակազնազցում), լրավճարների և հակակշիռ միջոցառումների մասին, առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների մասին, պաշտպանական միջոցառումների մասին և գյուղատնտեսության մասին Համաձայնագրերի: Հայաստանը կապահովի, որ ԱՀԿ դրույթներով ընդգրկված մաքսային պարտականությունները կատարող յուրաքանչյուր մասնավոր ձեռնարկություն կիրառարակի իր գործառնությունները և ընթացակարգերը, ինչպես պահանջվում է ՄԱԳՀ 10-րդ հոդվածով, և որ ձեռնարկության

վճիռները Հայաստանի կառավարության համար կլինեն միայն խորհրդակցական բնույթի և կարող են բողոքարկվել՝ դիմելով կառավարությանը կամ դատարան, և որ ընդհանուր կիրառման որևէ վճիռ մատչելի կլինի ԱՀԿ անդամներին և ներմուծողներին ու արտահանողներին՝ ըստ պահանջի, և որ Հայաստանը՝ ԱՀԿ անդամների պահանջի դեպքում, կհանդիպի նրանց հետ, քննարկելու այդ ձեռնարկությունների գործունեությունը և դրանց ազդեցությունը առևտրի վրա՝ խնդիրները լուծելու նպատակով: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ նախաառաջումային ստուգման որևէ համակարգ կլինի ժամանակավոր՝ մինչև Հայաստանի մաքսային մարմինները ի վիճակի կլինեն պատշաճորեն կատարելու այդ գործողությունները: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Հակազնագումային, փոխհատուցման և պաշտպանական ռեժիմներ

105. Ի պատասխան հարցադրումներին այն մասին, թե արդյոք Հայաստանը ներկայումս ունի հակազնագումային, փոխհատուցման կամ պաշտպանական ռեժիմ, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հակազնագումային մասին օրենքի նախագիծը ներկայացվել է Ազգային ժողով: Պաշտպանական միջոցառումները հաստատվել են՝ Տեղական շուկայի պաշտպանության մասին օրենքի ընդունումով (2001թ. ապրիլի 18-ի Պաշտպանական միջոցառումներ): «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նույնպես ընդունվել է (2000թ. նոյեմբերի 16), որի նպատակն է պաշտպանել ու նպաստել տնտեսական մրցակցությանը և ապահովել պատշաճ մթնոլորտ ազնիվ մրցակցության համար: Այս օրենսդրական ակտերի նախագիծերը պատրաստվել են ամբողջությամբ ի համապատասխանություն ԱՀԿ դրույթների, ներառյալ՝ ՄԱԳՀ-1994-ի 6-րդ և 19-րդ հոդվածներին, ՄԱԳՀ-1994-ի 6-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագրի, Լրավճարների և հակակշիռ միջոցառումների մասին համաձայնագրի և Պաշտպանական միջոցառումների մասին համաձայնագրի:

106. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ անդամակցության օրվանից սկսած Հայաստանը չի կիրառի որևէ հակազնագումային, պաշտպանական կամ հակակշիռ միջոցառումներ, մինչև այն չիրականացնի և ծանուցի համապատասխան օրենքները ԱՀԿ-ին՝ ամբողջությամբ ի համապատասխանություն ԱՀԿ-ի համաձայնագրերի 6-րդ հոդվածի իրականացմանը, լրավճարների և հակակշիռ միջոցառումների, ինչպես նաև Պաշտպանական միջոցառումների մասին ԱՀԿ համաձայնագրերի դրույթների: Այդպիսի օրենսդրության ընդունումից և ծանուցումից հետո Հայաստանը կկիրառի հակազնագումային տուրքերը, հակակշիռ տուրքերը կամ պաշտպանական միջոցառումները ամբողջական համապատասխանությամբ այս Համաձայնագրերի և այլ համապատասխան ԱՀԿ դրույթների: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունների վերաբերյալ:

Արտահանման կանոնակարգեր

Արտահանման սահմանափակումներ և արտահանման լիցենզավորման համակարգ

107. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետությունը ներմուծված կամ արտահանված ապրանքների (գործողությունների, ծառայությունների) ոչ սակազնային կանոնակարգման մասին 1995թ. դեկտեմբերի 29-ի N 124 որոշումը կանոնակարգում է Հայաստանի արտահանման ոչ սակազնային միջոցառումները և գործում է որպես արտահանման լիցենզավորման ոչ ավտոմատ ձև: Արտահանման թույլտվությունը, որ պահանջվում է Հայաստանում որոշակի ապրանքների արտահանման համար, հիմնավորված են ԱՀԿ դրույթներով, այսինքն՝ ՄԱԳՀ-1994-ի 11-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածներով: Ավտոմատ արտահանման լիցենզիաները պահանջվում են նաև մանածագործվածքների համար (միայն դեպի Եվրոպական Միություն): Մանածագործվածքների արտահանման լիցենզիաները պահանջվում են համաձայն Եվրոպական Միության հետ համաձայնագրերի, բայց ներկայումս չկան սահմանափակումներ այդ արտահանումների նկատմամբ: Դեղամիջոցների և որոշ կենդանի կենդանիների ու բույսերի համար պահանջվում է թույլտվություն համապատասխան իրավասու մարմիններից: Դեղամիջոցների, կենդանի կենդանիների և բույսերի համար թույլտվությունը ընդհանուր առմամբ չունի սահմանափակող բնույթ, ավելի շուտ այն նախատեսված է ապահովելու հասարակական առողջությունն ու անվտանգությունը: Չենքերի, ռազմական տեխնիկայի և դրա պատրաստման համար անհրաժեշտ սպառվող առարկաների, տեխնոլոգիական սարքավորումների և միջուկային նյութերի (ներառյալ՝ ջերմացնող նյութերի) փնտրող սարքերի, հատուկ ոչ միջուկային նյութերի և դրան առնչվող ծառայությունների, իոնացնող ճառագայթման աղբյուրների արտահանումը և ներմուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրվող թույլտվության միջոցով: Բոլոր այլ ապրանքները կարող են ազատ կերպով արտահանվել Հայաստանից: Այս համակարգը կիրառվում է բոլոր ուղղությունների արտահանումների նկատմամբ, բացառությամբ՝ Եվրոպական Միություն մանածագործվածքների և հագուստի արտահանման լիցենզիայի պահանջի դեպքում: Թույլտվության պահանջները նպատակաուղղված չեն սահմանափակելու արտահանումների քանակը կամ արժեքը: Ավելի շուտ, դրանք ուղղված են պաշտպանելու ազգային շահերը և մարդկանց կյանքն ու առողջությունը, կենդանիներին ու բույսերը, շրջակա միջավայրը: Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ կառավարությունը չի կարծում, որ այս պահին կա ավելի լավ ուղի այդ նպատակներին հասնելու համար:

108. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ արտահանման ոչ սակազնային կանոնակարգման Հայաստանի համակարգը շատ նման է ներմուծման նկատմամբ կիրառվող համակարգին: Ինչ վերաբերում է ներմուծմանը, սպա դեղագործական ապրանքների և հազվագյուտ կենդանիների ու բույսերի արտահանումը ենթակա է ոչ սահմանափակող կանոնակարգմանը, որը նախատեսված է պաշտպանելու առողջությունն ու շրջակա միջավայրը: Դեղագործական ապրանքների արտահանման թույլտվության ընթացակարգերը նույնն են, ինչպես և ներմուծման թույլտվության ընթացակարգերը, և կանոնակարգվում են նույն որոշումներով: Թույլտվություն է պահանջվում հազվագյուտ իրերի և մշակութային արժեքների արտահանման համար, որոնք համարվում են ազգային ժառանգության մաս: Բացի այդ, Եվրոպական Միություն մանածագործվածքների և հագուստի արտահանումը ենթակա է լիցենզավորման ըստ Եվրոպական Միության հետ կնքած երկկողմ համաձայնագրի: Մանածագործվածքների և հագուստի արտահանման լիցենզավորումը թույլ է տալիս, որ այդ առարկաները վերահսկվեն, բայց ներկայումս դրանք ենթակա չեն որևէ տեսակի սահմանափակումների:

109. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ Հայաստանը կիրառում է արտահանման թույլտվության պահանջներ հետևյալ առարկաների նկատմամբ՝

Անարկաներ, որոնք ազգային ժառանգության մաս են դիտվում	Ծածկագիր
Ղեկավարողական անդամներ, ղեկավարողներ	051000, 1211, 2941, 3001, 3002, 3003, 3004, 3005, 300630 000, 300650 000, 300660, 380640, 1108*, 1301, 1302, 1504, 152000 000, 1702, 1804, 1805, 2207, 2209, 2501, 2520, 2712, 2801-2802, 280 440 000, 281000 000, 284700 000, 285100, 2904-2909, 29 12-2940, 2942, 3301.
Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ վայրի կենդանիներ ու բույսեր	

* ղեկավարողական նպատակներով օգտագործվող ցուցակում 1108 և ապրանքների հաջորդ դասերը ենթակա են ներմուծման և/կամ արտահանման թույլտվության:

Հայաստանի Հանրապետության Կարմիր գիրքը առանձնացնում է մոտավորապես հարյուր հազվագյուտ կենդանիներ ու թռչուններ և 390 հազվագյուտ բույսեր, որոնց կապակցությամբ պահանջվում է թույլտվություն, և որոնց արտահանման նկատմամբ կարող է հսկողություն իրականացվել:

110. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ համաձայն N 581 որոշման ղեկավարողական ապրանքների և ղեկավարողական անդամների արտահանումը պետք է թույլատրվի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից: Համաձայն N124 որոշման Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ վայրի կենդանիների ու բույսերի արտահանումը կատարվում է բնապահպանության նախարարության կողմից տրվող թույլտվությունների միջոցով: Ազգային ժառանգության համար արժեք ներկայացնող առարկաների արտահանումը պետք է թույլատրվի մշակույթի նախարարության կողմից: Եվրոպական Միության մասնագործվածքների և հազվագյուտ արտահանման դեպքում՝ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը ունի արտահանման լիցենզիաների տրամադրման բացառիկ իրավասություն: Ղեկավարողական ապրանքների ու ղեկավարողական ներմուծումը և/կամ արտահանումը կարող է մերժվել, եթե՝ ա) ներկայացված փաստաթղթերում եղել են ոչ ճիշտ և/ կամ անբավարար տեղեկություններ, բ) ղեկավարողական ապրանքների ժամկետը սպառված է, գ) ներմուծված ղեկավարողական ապրանքները և/կամ ղեկավարողական փաստացի չեն համապատասխանում ներմուծման փաստաթղթերում ներկայացված բնութագրերին, դ) ղեկավարողական ապրանքները գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում, ե) ներմուծված ղեկավարողական ապրանքների որակը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում ընդունված որակի չափանիշներին: Թույլտվություն տրամադրելու չարդարացված հետաձգումները և մերժումը կարող են հիմք հանդիսանալ դատական գործ հարուցելու համար: Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը կարող է մերժել դիմողին արտահանման լիցենզիա տրամադրելու՝ կապված Եվրոպական Միության արտահանումների հետ, եթե դիտարկվող առարկաների արտահանումը գերազանցում են որոշակի քանակային սահմաններ: Քանի որ այսպիսի դեպք չի պատահել մինչ այժմ, Հայաստանը դեռ չի մշակել արտահանման քվոտաների կառավարման մեխանիզմ:

111. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ասաց, որ արտահանման լիցենզիա ձեռք բերել ցանկացող անձ, ձեռնարկություն կամ կազմակերպություն կարող է դիմել այդ նպատակով, եթե այն գրանցված է Հայաստանի Հանրապետությունում առևտրատնտեսական գործունեություն ծավալող իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց: Ինչպես և ղեկավարողական ապրանքների ներմուծման դեպքում, ղեկավարողական ապրանքների արտահանման թույլտվություն ձեռք բերելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝ դիմում, ղեկավարողական ապրանքների ձեռքբերմանը վերաբերող հավաստագիր, Հայաստանում ղեկավարողական ապրանքների առևտուր կատարելու լիցենզիա, ղեկավարողական ապրանքների ձեռքբերմանը և վաճառքին վերաբերող փաստաթղթեր (պայմանագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն) և արտադրողի կողմից տրամադրված որակի հավաստագիր: Թույլտվությունները տրվում են տաս օրվա ընթացքում՝ դիմումը ներկայացնելուց հետո: Քանի որ նախատեսված տասնօրյա ժամկետը ներկայացնում է առավելագույն ժամանակահատվածը, գործնականում թույլտվությունները կարող են ձեռք բերվել ավելի կարճ ժամանակահատվածում: Արտահանման թույլտվությունը սովորաբար չի տրվում անմիջապես դիմելուց հետո, բայց գործնականում անհրաժեշտ ընթացակարգերի կատարումը կարող է կատարվել մեկ կամ երկու օրվա ընթացքում: Արտահանման թույլտվության համար կատարվող վճարը հավասար է Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձին: Թույլտվությունը չի կարող փոխանցվել արտահանողների միջև: Թույլտվության համար դիմումի ներկայացումը և/կամ արտահանումը կարող են կատարվել ցանկացած պահին տարվա ընթացքում: Թույլտվությունները տրվում են երեք ամիս ժամկետով: Արտահանման թույլտվություն տրամադրելու մերժումը կարող է հիմք հանդիսանալ դատական գործի հարուցման համար:

112. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը հաստատեց, ցանկացած արտահանման լիցենզավորման պահանջները կամ արտահանման վերահսկման այլ պահանջները կկիրառվեն ԱՀԿ, Ներառյալ ՄԱԳՀ-1994-ի 11-րդ, 17-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթների համաձայն: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Այլ միջոցառումներ

113. Արտահանումների թերապրանքագրումների և արհեստականորեն ցածր գներով արտահանումների կանխարգելման նպատակով N 124 որոշմանը համաձայն հաստատվել է նվազագույն գների ցանկ որոշ ապրանքների համար: Հաստատված գները հավասարապես կիրառվում են արտահանման բոլոր ուղղությունների նկատմամբ: 1995թ. դեկտեմբերի 29-ից ուժի մեջ մտած այս ցանկը ընդգրկում է սև և գունավոր մետաղները (HS 72.00, 72.04, 74.0-74.14. 75. 76.0-76.14, 78.80, 81.01, 81.13): Համաձայն Որոշում N 124-ի վերը նշված ցանկի ապրանքները կարող են արտահանվել սահմանված նվազագույն գներից ավելի ցածր գներով: Այնուամենայնիվ, սև ու գունավոր մետաղներ և մետաղի ջարդոն արտահանող ձեռնարկությունների հարկային պարտավորությունները հաշվարկվում են այդ հաստատված գների հիման վրա, եթե հայտարարագրված արտահանման գինը տեղեկատու գումարից ավելի ցածր է: Այս դեպքում արտահանողից պահանջվում է նաև ներկայացնել Ստանդարտացման չափագրման և հավաստագրման վարչության (ՍՀՀԳ) համապատասխանության հավաստագիրը: Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններից պահանջվում է տեղեկացնել գործարքի մասին հարկային տեսչությանը մեկ ամսվա ընթացքում: Ավելի ուշ, Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ 1999թ. ապրիլի 21-ին նվազագույն հաստատված գների ցանկը հանվել է:

Արտահանման լրավճարներ

114. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը հաղորդեց, որ ներկայումս Հայաստանը չի տրամադրում որևէ տեսակի խրախուսման միջոց կամ արտահանման լրավճար: Կառավարությունը

հավատացած է, որ արտահանման ընդլայնումը կարևոր նշանակություն ունի Հայաստանի ապագա տնտեսության կենսունակության համար: Այս նպատակով դիտարկվել են արտահանումը խրախուսելու տարբեր եղանակներ, մասնավորապես՝ խթանող գործառնությունների միջոցով: Կառավարությունը չի մտադրվում արտահանման լրավճարները դիտարկել որպես արտահանման ծրագրի ընդլայնման մի մաս: Արտահանմանը նպաստելու միջոցառումները ներկայումս հիմնականում կապված են համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի հիմնման և զարգացման հետ, ինչպիսիք են՝ Հայկական գարգացման գործակալությունը, որը կարող է աջակցել գործարար համայնքին այնպիսի ծառայություններ մատուցելով, ինչպիսիք են՝ տոնավաճառների կազմակերպումը, Հայաստանի ներկայացումը միջազգային ասպարեզում, տեղեկատվության տրամադրումը, մարկետինգային հետազոտությունների իրականացումը և այլն:

115. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ կառավարությունը չի պահպանում լրավճարներ, որոնք համապատասխանում են արգելված լրավճարների սահմանմանը՝ Լրավճարների և Հակակշիռ միջոցների մասին համաձայնագրի 3-րդ հոդվածի իմաստով, և չի փնտրում ճանապարհներ՝ նախանշված ժամանակահատվածում այդպիսի միջոցները վերացնելու համար: Նա նաև հաստատեց, որ Հայաստանը հետագայում չի կիրառի այդպիսի արգելված լրավճարներ և կծեռնարկի արտահանմանը նպաստելու միջոցառումներ՝ ԱՀԿ պահանջներին համապատասխան: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Ապրանքների առևտրի վրա ազդող ներքին քաղաքականություն

Արդյունաբերական քաղաքականություն, ներառյալ՝ լրավճարներ

116. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ արդյունաբերական քաղաքականությունը նպատակ ունի ավելի արդյունավետ կերպով օգտագործել տեղական պաշարները շուկայական ուղղվածության շրջանակներում: Սեփականաշնորհումը հանդիսանում է արդյունաբերության վրա ազդող այդ քաղաքականության կենտրոնական նպատակը: Հայաստանում նախկինում ժողովրդական սեփականությանը պատկանող ձեռնարկությունների մոտավորապես 76 տոկոսը սեփականաշնորհվել է, իսկ 24 տոկոսը մնացել է պետության վերահսկողության տակ: 2001թ. վերջի դրությամբ Հայաստանի գոյություն ունեցող իրավաբանական անձանց թիվը կազմում էր մոտավորապես 45000, որոնցից միայն 39 էին հանդիսանում ամբողջովին պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններ (բաժնետիրական կապիտալի 100 տոկոսով պետությանը պատկանող): Ի պատասխան հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ, սպասելով սեփականաշնորհման ծրագրի ավարտին, կառավարությունը պահանջել է պետական սեփականությանը պատկանող ձեռնարկություններից գործել համաձայն շուկայական սկզբունքների: Պահանջվում է, որ Հայաստանի ձեռնարկությունները ձեռք բերեն իրենց միջոցները ազատ շուկայում: Ընկերություններից շատերը դեռ չեն օգտագործում շուկայական տնտեսությանը համապատասխան հաշվապահական համակարգեր, սակայն դրանք գտնվում են մշակման ընթացքում: Ի պատասխան ուղղակի լրավճարների վճարման վերաբերյալ տեղեկատվություններ տրամադրելու պահանջներին, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ սկսած 1995թ. սկզբից համարյա ոչ մի ուղղակի լրավճար չի շնորհվել արդյունաբերությանը: Նախորդ տարիներին բավականին մեծ չափերով ուղղակի լրավճարներ են տրամադրվել ձեռնարկություններին կոնցեսիոն վարկերի միջոցով: Նա այնուհետև նշեց, որ կառավարությունը ընդհանուր առմամբ չի պահպանում արդյունաբերական բնագավառում արտադրությանը շնորհվող լրավճարները:

117. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 1995թ. ուղղակի լրավճարների միակ շահառուներն էին ռազմավարական (ռազմական) սարքավորումների արտադրությանը զբաղվող ձեռնարկությունները, որոնց լրավճարները տրամադրվել են գործարանի հետագա կառուցման և սարքավորումներով համալրման համար: Շահառու ձեռնարկությունները չեն արտահանել իրենց արտադրանքը: Որևէ մնացյալ անուղղակի լրավճարներ, որ կարող են ի հայտ գալ փոխհաշվարկային միջոցառումների հետևանքով, անհայտանում են՝ միջկառավարական փոխհաշվարկային պայմանագրերի նվազման (և վերջնականում՝ վերացման) պատճառով: Գտնվող պետական պատվերների միջոցով, որ նույնպես կարող են ներառել անուղղակի լրավճարներ, փոխարինվում են մրցույթների մրցակցային ընթացակարգերով, միևնույն ժամանակ, կառավարությունը ազատություն է վերապահում՝ որոշակի արտոնություններ շնորհելու տեղական հայտատուներին: 1998թ. կառավարությունը գործնականում վերսկսեց հարկային պարտավորությունների դուրսգրումը՝ որպեսզի օժանդակի մի քանի ընտրված մեծ ձեռնարկությունների վերականգնմանը ու վերակառուցմանը, ինչպիսին են՝ Արմենմոտորը և Երևանի ոսկերչական գործարանը: Նմանատիպ նպատակներով, հարկային պարտավորությունները դուրս են գրվել այն ձեռնարկություններից, որոնք պարտքեր են կուտակել՝ միջկառավարական փոխհաշվարկային պայմանագրերի և պետպատվերների միջոցով գնումների շրջանակներում կատարվող փոխադրումների դիմաց չվճարման պատճառով:

118. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ արդյունաբերական քաղաքականության շարունակական բարեփոխումները կարող են անուղղակիորեն լրավճարներ շնորհել արդյունաբերական ճյուղերին, կառավարությունը պահպանում է զգալիորեն ապականակարգված գործարար միջավայր, որը կապակցվելով կառավարության բաց ներդրումային քաղաքականության հետ, կապահովի շուկայական մրցակցայնության նպաստող պայմաններ: Ձեռնարկությունները ազատ են մուտք գործելու տնտեսության բնագավառներ և դուրս գալու դրանցից՝ շուկայի վերաբերյալ իրենց սեփական որոշումների հիման վրա: Առևտրատնտեսական միջավայրը պաշտպանելու և ուժեղացնելու համար նախատեսված լրացուցիչ միջոցներ են հանդիսանում հակամենաշնորհային և սնանկության մասին օրենքները: «Բանկերի սնանկության և իրավաբանական անձանց մասին» և «Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների ու ձեռներեցների սնանկության մասին» ՀՀ օրենքներն ուժի մեջ են մտել համապատասխանաբար 1996թ. հոկտեմբերի 1-ին և 1997թ. մարտի 1-ին:

119. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ ԱՀԿ անդամակցության օրվանից սկսած Հայաստանի կառավարությունը ցանկացած լրավճարային ծրագիր կիրականացնի Լրավճարների և հակակշիռ միջոցների համաձայնագրին համապատասխան: Այդպիսի ծրագրերի մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, համաձայն նշված Համաձայնագրի 25-րդ հոդվածի, կներկայացվի լրավճարների և հակակշիռ միջոցների Հանձնախմբին՝ Հայաստանի Անդամակցության արձանագրությունը ուժի մեջ մտնելուց հետո: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Առևտրի տեխնիկական արգելքներ

120. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ անկախությունը հռչակելուց հետո Հայաստանը ձեռնարկել է քայլեր հաստատելու և մշակելու երկրի ստանդարտացման, չափազիտության և հավաստագրման համակարգերը: Այդ համակարգերը կանոնակարգող համապատասխան օրենքներ են հանդիսանում Ազգային ժողովի կողմից 1997թ. ապրիլի 30-ին ընդունած «Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին» ՀՀ օրենքը և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը: Այս երկու օրենքները ընդգրկել են ԱՀԿ

Տեխնիկական արգելքների մասին համաձայնագրի հիմնական սկզբունքները: «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է իրավական հիմք Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման համար, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների և աշխատանքի (գործընթացների) ու որակի համակարգի հավաստագրման համար: Սա կիրառվում է պետական կառավարման մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և մասնավոր ձեռնարկատերերի նկատմամբ և սահմանում է սպառողների և պետության շահերի պաշտպանության միջոցներ՝ ստանդարտացման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման միջոցով: Այն նաև սահմանում է հավաստագրման գործընթացի մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

121. Նա նաև նշեց, որ «Զափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը սահմանում է իրավական հիմք չափումների միասնականության ապահովման համար, կանոնակարգում է պետական կառավարման մարմինների հարաբերությունները՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների և անհատ ձեռնընթացների հետ՝ չափման գործիքների արտադրմանը և բացթողմանը և դրանց օգտագործմանն ու վերանորոգմանը վերաբերող հարցերի կապակցությամբ: Միայն չափումների դեպքում այն ուղղված է պաշտպանել սպառողների և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ստանդարտացման, չափագիտություն և հավաստագրման մարմինը (ՍՀՀԲ) հանդիսանում է ստանդարտացման, չափագիտական և հավաստագրման գործողությունների կանոնակարգող Հայաստանում, որի իրավունքներն ու պարտականությունները սահմանվել են Ստանդարտացման և հավաստագրման մասին և Զափումների միասնականության մասին օրենքներով: Լինելով Հայաստանում ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման կառավարման համար պատասխանատու ազգային մարմին, նրա պարտականություններում ընդգրկված են ստանդարտացման և հավաստագրման ազգային համակարգերի ստեղծումն ու կառավարումը, ազգային ստանդարտների և դասակարգիչների ընդունումը, միջազգային ստանդարտների կիրառումը, ստանդարտացման և հավաստագրման բնագավառում պաշտոնական տեղեկությունների հրատարակումը, հավաստագրման մարմինների և փորձարարական լաբորատորիաների արտոնագրումը, հավաստագրման հարցերի վերաբերյալ բողոքների և վեճերի քննարկումը, և այլն:

122. Նա նաև նշեց, որ ՍՀՀԲ-ն նախագահում է պետական գլխավոր տեսուչը, ում իրավունքներն ու պարտականությունները ընդգրկված են «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ում և «Զափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում: ՍՀՀԲ-ն կոլեգիալ մարմին է և որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Որպեսզի ավելի ներդաշնակեցվի Հայաստանի օրենսդրությունը ԱՀԿ Առևտրի տեխնիկական արգելքների համաձայնագրի դրույթներին, 1999թ. նոյեմբերի 9-ին Ազգային ժողովը ընդունեց երկու նոր օրենք՝ Ստանդարտացման մասին և Նորմատիվ պահանջներին ապրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին օրենքները (այսուհետ՝ Համապատասխանության հավաստման մասին օրենք): Ընդունվել է նաև Տեխնիկական կանոնակարգերի պատրաստման, ընդունման և կիրառման մասին 2000թ. N 9 կառավարության որոշումը: Իր տեսակետից, ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի սահմանումները այս երկու օրենքներում լրիվ համապատասխանում են Առևտրի տեխնիկական արգելքների մասին Համաձայնագրի հավելված 1-ի համապատասխան սահմանումներին: Համաձայն Ստանդարտացման մասին օրենքի, ստանդարտների կատարումը կամավոր է: Ստանդարտները դառնում են պարտադիր, եթե դրանք հիշատակվում են տեխնիկական կանոնակարգերում բացառիկ կերպով, ներառյալ այն ստանդարտների, որոնք մշակված և պահպանված են այլ գործակալությունների և նախարարությունների կողմից՝ ինչպիսիք են գյուղատնտեսության և առողջապահության նախարարությունները: Համապատասխան նախարարությունները պատասխանատու են տեխնիկական կանոնակարգերի համաձայն Ստանդարտացման մասին օրենքի նախագծի նախապատրաստման համար: Տեխնիկական կանոնակարգերը պետք է ընդունվեն դրանց հրատարակումից առնվազն վեց ամիս հետո և ներկայացվեն համապատասխան միջազգային կազմակերպություններին և ազգային մարմիններին:

123. Ի պատասխան լրացուցիչ հարցերի Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ հավասար և ոչ խտրական սկզբունքները տեղական և օտարերկրյա ապրանքների և ծառայությունների նկատմամբ, ինչպես նաև այլ երկրների կանոնակարգումների նկատմամբ, արտացոլվել են 2000թ. հունվարի 11-ի N 9 որոշման մեջ: Այլ երկրների հավասարաբեց տեխնիկական կանոնակարգումները կարող են ընդգրկվել Հայաստանի օրենսդրության մեջ՝ հաստատելու համապատասխան իրավասու մարմիններ, որոնք պատասխանատու են ապրանքների և ծառայությունների վերաբերյալ պարտադիր պահանջներ սահմանելու համար: Միջազգային ստանդարտները, հրահանգները և ցուցումները պետք է հաշվի առնվեն ազգային ստանդարտներ և կանոնակարգեր մշակելիս: «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը կանոնակարգում է արտադրանքի, ապրանքների, աշխատանքի և ծառայությունների՝ նորմատիվ պահանջներին համապատասխանության հավաստման կամավոր և պարտադիր գործողությունները: Այդ օրենքը նաև իրավական հիմքեր է սահմանում պետության գործունեության համար այդ բնագավառում, ինչպես նաև որոշում է հավաստման համապատասխանության եղանակները, ապրանքների մարքեթինգի պայմանները և համապատասխանության հավաստման կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Ներկայումս ուժի մեջ գտնվող այդ երեք օրենքները («Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին» ՀՀ օրենքը, «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը և «Զափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը) ծառայում են որպես իրավական հիմք՝ ՍՀՀԲ-ի կողմից վարած ՈՍՀՀ (Որակի ստանդարտացում, Զափագիտություն և Համապատասխանության հավաստում) քաղաքականության զարգացման համար:

124. Նա նաև նշեց, որ այդ քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- օրենսդրության ներդաշնակեցումը ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառներում,
- ապրանքների, գործընթացների և ծառայությունների անվտանգության ապահովումը պետական կանոնակարգող մեխանիզմի միջոցով (տեխնիկական կանոնակարգեր),
- ազգային ստանդարտների ներդաշնակեցումը միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների հետ,
- ISO/IEC, ASTM ASME և Եվրոպական (EN) ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերի օգտագործումը համապատասխանության հավաստման բնագավառում,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,
- արտոնագրման համապատասխան համակարգերի բարելավումը՝ միջազգային կանոններին և ընթացակարգերին համապատասխան,
- չափումների միասնականության ապահովումը պետական կանոնակարգման մեխանիզմի միջոցով,
- առևտրի անցանկալի արգելքների հեռացմանը աջակցելը, և
- սպառողների իրավունքների պաշտպանության ապահովումը:

ՍՀՀԲ-ն համագործակցում է առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների հետ սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներին վերաբերող հարցերի կապակցությամբ:

125. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ Ազգային ստանդարտացման համակարգը կազմավորվել է, որպեսզի ապահովի՝

- ապրանքների, աշխատանքի (գործընթացների) և ծառայությունների անվտանգությունը, շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի ու առողջության ու գույքի պաշտպանությունը,
- ապրանքների տեխնիկական և տեղեկատվական համատեղելիությունը և փոխանակելիությունը,
- ապրանքների, աշխատանքի և ծառայությունների որակի բարձրացումը,
- չափումների միասնականությունը,
- պաշարների պահպանությունը,
- տնտեսական միավորների անվտանգությունը՝ տեխնիկական և այլ աղետների ու հրատապ դեպքերի պարագայում,

- առևտրի տեխնիկական արգելքների վերացումը,
- պետական պաշտպանության և հավաքագրման պատրաստակամության եական պայմանները:

126. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՓԲԸ) հաստատվել է ՍՀՀ-ի ներքո՝ ստանդարտացման գործունեություն վարելու համար: Այդ համակարգի հիմնական դրույթները և դրա ընթացակարգերը Հայաստանի ստանդարտների պատրաստման, ընդունման ու կիրառման համար սահմանվել են (ՀՍ) AST 1 շարքի ազգային հիմնական ստանդարտների կողմից: Սկսած 1993թ. մոտավորապես 230 հայկական ստանդարտներ են մշակվել տեխնիկական հանձնախմբերի կողմից և ընդունվել ՍՀՀ-ի կողմից: Հայաստանում կիրառվող ստանդարտների մեծամասնությունը հանդիսանում է միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտներ: ԱՊՀ երկրների ավելի քան 18000 միջպետական ստանդարտներ ընդգրկված են ստանդարտների ազգային դասակարգչում: Ազգային ստանդարտների հիսուն տոկոսը կհամաձայնեցվի միջազգային ստանդարտների հետ մինչև 2002թ. վերջը: Ստանդարտների ազգային ինստիտուտը հրապարակում է «Ստանդարտներ և հատկորոշումներ» եռամսյա ձեռնարկը, որը տրամադրում է ընթացիկ տեղեկություններ տեխնիկական կանոնակարգերի, հատկորոշումների և ստանդարտացման հետ առնչվող հարցերի վերաբերյալ: Աշխատանքային խմբի անդամը նշեց որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ապահովի տեղեկատվություն ստանդարտացմանը վերաբերող տեխնիկական կանոնակարգումների, հատկորոշումների վերաբերյալ ամսագրի կամ ինտերնետային էջի տեսքով, որը կնպաստի առևտրի տեխնիկական արգելքների համաձայնագրի 2-րդ և 5-րդ հոդվածներում ներկայացված պահանջների ավելի արդյունավետ կատարմանը՝ ապահովելով շահագրգիռ խմբերի տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև թույլ կտա հրապարակել տեղեկություն առաջարկվող տեխնիկական կանոնակարգումների և համապատասխանության հավաստման ընթացակարգերի վերաբերյալ:

127. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» օրենքի 25-րդ հոդվածի պետք է մշակվեն և ընդունվեն տեխնիկական կանոնակարգումները, որոնք կփոխարինեն ներկայումս օգտագործվող պարտադիր ստանդարտները: Բոլոր պարտադիր ստանդարտների օգտագործման ժամկետները կլրանան 2004թ. դեկտեմբերի 31-ին: Այսպիսով՝ «Հայաստանի Հանրապետության համապատասխան բնագավառների տեխնիկական կանոնակարգերի մշակման 2001-2004թթ. ժամկետացանկերի վավերացման մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000թ. դեկտեմբերի 22-ի N 852 որոշումը վավերացրել է մշակմանը ենթակա տեխնիկական կանոնակարգերի ցանկը և այդ կանոնակարգերի մշակման համար պատասխանատու լիազորված մարմինների ցանկը: 2002թ. հուլիսի դրությամբ ընդունվել են 20 և մշակվել 86 տեխնիկական կանոնակարգումներ, որոնք կազմել են մշակման ենթակա տեխնիկական կանոնակարգումների ընդհանուր քանակի 30 տոկոսը: Ազգային ստանդարտները կիրառվում են կամավոր հիմունքներով՝ համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության: Տեխնիկական կանոնակարգերով հաստատված պահանջներին համապատասխանեցումը պարտադիր է՝ համաձայն վերը նշված օրենքի 12-րդ հոդվածի C պարբերության: 2002թ. օգոստոսի դրությամբ, մշակվել է Կառավարության որոշման նախագիծ որոշակի ուղղումներ կատարելու նպատակով, որոնք պետք է հաստատվեն անդամակցությունից հետո: Այդ ուղղումների համաձայն տեխնիկական կանոնակարգերի հրապարակման և դրանց ուժի մեջ մտնելու ժամանակահատվածը պետք է կազմի 6 ամիս: Համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին պարբերության, յուրացված կամ մշակված տեխնիկական կանոնակարգերի մասին տեղեկությունները նախագծի տեսքով պետք է հրատարակվեն ԱՀՀ-ի կողմից ամսական մեկ անգամ տեխնիկական կանոնակարգերի տեղեկագրում, հնարավորություն տալով բոլոր շահագրգիռ խմբերին դիտորդություններ և առաջարկություններ ներկայացնելու համար: Պարտադիր սերտիֆիկացման գների աղյուսակը սահմանված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2001թ. մարտի 20-ի թիվ 91 որոշմամբ:

128. Նա ևս նշեց, որ հետևյալ կետերը առաջնահերթ են համարվում ստանդարտացման բնագավառում՝

- որակի և շրջակա միջավայրի կառավարման համակարգերի նորմատիվ հիմունքների հաստատումը՝ համապատասխան միջազգային ստանդարտների,
 - ստանդարտների մշակումը ռազմական արդյունաբերության բնագավառում,
 - պաշարների պաշտպանության բնագավառում ստանդարտացում՝ վառելիքային էներգետիկայի համակարգերում,
 - տեղեկատվական տեխնոլոգիաների ստանդարտացում՝ համապատասխան միջազգային ստանդարտների,
 - ազգային չափագիտական ստանդարտների հիմքերի բարելավում,
 - անձնակազմի ուսումնավարժանք և որակավորման բարձրացում:
- Համապատասխանության հավաստման բնագավառում առաջնահերթ են՝
- որակի համակարգի ներմուծումը՝ համաձայն ISO 9000 շարքի ստանդարտների պահանջների, որը կօգտագործվի կամավոր կերպով՝ համաձայն ԱՀՀ դրույթների,
 - շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներմուծումը՝ համաձայն ISO 14000 շարքի ստանդարտների պահանջների, որը կօգտագործի կամավոր կերպով՝ համաձայն ԱՀՀ դրույթների,
 - պարտադիր համապատասխանության հավաստմանը ենթակա ապրանքների ցանկի նվազեցումը,
 - համապատասխանության հավաստման արդյունքների փոխադարձ և միակողմանի ճանաչման գործընթացի մշակում,
 - համապատասխանության հավաստման կանոնների և կանոնակարգերի ներդաշնակեցումը միջազգային պահանջների հետ,
 - համագործակցությունը միջազգայնորեն ճանաչված կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համապատասխանության հավաստման բնագավառում,
 - արտոնագրման համակարգի բարելավումը համաձայն միջազգային պահանջների,
 - համակարգված սեփականաշնորհման ընթացակարգերի, հավաստագրման մարմինների և փորձարարական լաբորատորիաների զարգացումը:

Ստանդարտները պատրաստելիս, ընդունելիս և կիրառելիս ՍՀՀ-ն հետևում է Առևտրի տեխնիկական արգելքների մասին համաձայնագրի լավ վարվելակերպի օրենսգրքին, որը կստորագրի Հայաստանի

Հանրապետությունը ԱՀԿ-ին անդամակցելուց հետո: ՍՉՀԲ-ն համագործակցում է այլ երկրների ստանդարտացման կազմակերպությունների հետ և հանդիսանում է ստանդարտացման ISO միջազգային կազմակերպության անդամ սկսած 1997թ. հունվարի 1-ից: Ներկայումս ՍՉՀԲ-ն հանդիսանում է ISO-ի և EASC-ի անդամ, որն իրավունք է տալիս Հայաստանին տեխնիկական հանձնախմբերի միջոցով մասնակցելու միջազգային և տարածաշրջանային ստանդարտների մշակմանը և կիրառել այդ ստանդարտները Հայաստանում: Համաձայն կառավարության որոշման, ՍՉՀԲ-ն առաջադրվել է որպես հարցման կետ: Հարցման կետի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր
Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բաժին
Կոմիտասի փ., 49/2
375051, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. 3741 235 861
Ֆաքս. 3741 285 620
Էլ-փոստ. armstandard@sarm.am

Press@sarm.am

Ինչպես նշված է 2000թ. հունվարի 11-ի Կառավարության N 9 որոշման 5-րդ պարբերությունում՝ Հայաստանի Հանրապետությունը համաձայն ԱՏԽ համաձայնագրի հոդված 2.9.2-ի կտրամադրի ԱՀԿ անդամների տեղեկատվություն տեխնիկական կանոնակարգերի մասին: Սկսած 2001թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ԱՀԿ ծանուցման աշխատանքները կատարվում են ԱՀԿ Ծանուցման գործակալության կողմից, որի գործունեության մասին նշված է 216 կետում:

129. Ի պատասխան պարտադիր հավաստագրման մասին հարցերի Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ «Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը իրավական հիմք է ապահովում ապրանքների, ծառայությունների, աշխատանքի (գործընթացների) և որակի համակարգերի համապատասխանության հավաստման համար: Այն սահմանում է համապատասխանության հավաստման գործընթացի կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը: Այդ օրենքում ամրագրվել են համապատասխանության հավաստման մեխանիզմները: Համապատասխանության հավաստման ավելի բժան և առևտուրը պակաս չափով սահմանափակող եղանակների օգտագործումը, ինչպիսիք են՝ արտադրողի հայտարարագրերը և համապատասխանության նշանները, նույնպես ընդգրկվել են այդ օրենքում: Համաձայն այդ օրենքի, համապատասխանության հավաստագիրը և համապատասխանության վերաբերյալ գրանցված հայտարարագիրը ունեն նույն իրավաբանական ուժը, և տեղական ու օտարերկրյա արտադրողներին և ծառայություն մատուցողներին շնորհված են ապրանքների կամ ծառայությունների համապատասխանության վերաբերյալ հայտարարագրեր կիրառելու հավասար իրավունքներ: Պարտադիր հավաստագրման գործողությունները համակարգվում են ՍՉՀԲ-ի կողմից և կատարվում են հավաստագրման արտոնագրված մարմինների և փորձարարական լաբորատորիաների կողմից:

130. Նա նաև նշեց, որ հավաստագրման մարմինների և փորձարարական լաբորատորիաների արտոնագրման ընթացակարգը հաստատվել է 2000թ. մայիսի 12-ի N 238 որոշմամբ: Համաձայն այդ որոշման՝ համապատասխանության հավաստման բնագավառում արտոնագրումը կատարվում է՝ հավաստագրման մարմինների և փորձարարական լաբորատորիաների արտոնագրման խորհրդի կողմից: Տեղական և օտարերկրյա մարմիններն ու լաբորատորիաները ունեն համապատասխանության հավաստման ազգային համակարգում արտոնագրվելու նույն իրավունքները: Հավաստագրման մարմիններին և փորձարարական լաբորատորիաներին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն ISO/IEC 17025-ին և EN 45011, EN 45012, EN 45002-ին: Համաձայն 2000թ. մայիսի 12-ի N 239 որոշման՝ կապված շրջակա միջավայրի և մարդու կյանքի ու առողջության անվտանգության վերահսկողության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության հետ, որոշ ապրանքներ ենթակա են պարտադիր համապատասխանության հավաստմանը: Այդ ապրանքները առանձնացնելիս հաշվի են առնվում տեսչական մարմինների, գյուղատնտեսական նախարարության, սանիտարական հակահամաճարակային պետական կենտրոնի, ապառոնների կողմից ստացված զեկույցները, և հիմք են ընդունվել հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների տվյալները: Հայաստանի Հանրապետությունում պարտադիր համապատասխանության հավաստագրմանը ենթակա ապրանքներին ներկայացվող պահանջները իջեցվել են նվազագույնի: Պարտադիր հավաստագրման ընթացակարգերը ներմուծված և տեղական ապրանքների համար նույնն են: Ապրանքատեսակների համար հավաստագրերը տրվում են՝ կախված հավաստագրման կարգից, հիմնվելով փորձնական նմուշների, արտադրական համակարգերի վերլուծության, որակի համակարգի հավաստագրման կամ մատակարարների հայտարարագրման հիման վրա: Հավաստագրերի թողարկման գները որոշվում են համապատասխան փորձերի ծախսերի հիման վրա, ոչ թե ապրանքների արժեքի հիման վրա: Այդ միջազգայնորեն ընդունված հավաստագրման կարգերը ամրագրվել են AST 5.3 կողմից:

131. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց նաև, որ, համաձայն «Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքի, ապրանքների համապատասխանության օտարերկրյա հավաստագրերի կամ համապատասխանության նշանների ճանաչումը կատարվում է՝ համապատասխանության հավաստման արդյունքների փոխադարձ ճանաչման կամ միակողմ ճանաչման մասին Հայաստանի Հանրապետության երկկողմանի համաձայնագրով: Այդ ընթացակարգերը կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000թ. մայիսի 18-ի N 247 որոշմամբ: Համաձայն այդ որոշման, փոխադարձ ճանաչման համաձայնագրի բացակայության դեպքում ՍՉՀԲ-ի կողմից ընդունվում է որոշում համապատասխանության միակողմանի ճանաչման վերաբերյալ: Հավաստագրման օտարերկրյա մարմինների կողմից տրված հավաստագրերի ճանաչման ընթացակարգերը կանոնակարգվում են Կառավարության 2000թ. մայիսի 18-ի N 247 որոշմամբ: Համաձայն 2000թ. մայիսի 18 N 247 որոշման, նկատի ունենալով օտարերկրյա հավաստագրերի և համապատասխանության նշանների ընդունումը, խորհուրդը պետք է ուսումնասիրի համապատասխանության հավաստման համակարգը և արտահանող երկրի փորձարարական և հավաստագրող մարմինների արտոնագրման համապատասխանությունը միջազգային ստանդարտներին: Տեղական և օտարերկրյա մարմինները և լաբորատորիաները ունեն նույն իրավունքները: 2002թ. օգոստոսի դրությամբ Կառավարության որոշում է մշակվել 2000թ. մայիսի 18-ի N 247 Կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու նպատակով: Համաձայն այդ որոշման, օտարերկրյա հավաստագրերի և համապատասխանության նշանների ճանաչումը կատարվում է 2000թ. մայիսի 18 N 247 որոշմամբ հաստատված համապատասխանության հավաստման բնագավառում՝ Հավաստագրման մարմինների և փորձարարական լաբորատորիաների արտոնագրման խորհրդի կողմից, հաշվի առնելով օտարերկրյա հավաստագրերի և համապատասխանության նշանների միակողմ ճանաչման կանոնները, տեխնիկական նկատառումները և խտրականության բացառման հիմքերը: Հիմնվելով վերը նշված օրենսդրության վրա և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ օրենսդրության վրա, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է inter alia և ոչ խտրականության հիմունքներով ընդունել արտոնագրման դիմումները ԱՀԿ անդամների մարմիններից,

համապատասխանության հավաստման արդյունքները որակավորող մարմիններից, և համարժեք ընթացակարգերի ճանաչման այլ միջոցառումները: Այսպիսով օտարերկրյա հավաստագրերի և համապատասխանության նշանների ընդունումը, խորհուրդը պետք է ուսումնասիրի արտահանող երկրի փորձարարական և հավաստագրող մարմինների արտոնագրման համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և համապատասխանության հավաստման համակարգի առկայությունը: Փոփոխությունն ուժի մեջ կմտնի անդամակցության օրվանից:

132. Նա նաև նշեց, որ ՍՀՀ-ն ստորագրել է համապատասխանության հավաստման փոխադարձ ճանաչման մասին համագործակցության համաձայնագրեր մի շարք երկրների համապատասխան մարմինների հետ, ինչպիսիք են Բելառուսը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովան, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուկրաինան և Ուզբեկստանը: ՍՀՀ-ն բանակցություններ է անց կացնում այլ երկրների համապատասխան մարմինների հետ, մասնավորապես՝ Բուլղարիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Ռումինիայի, Սլովակիայի և Միացյալ Նահանգների, որպեսզի նման համաձայնագրեր ստորագրի համագործակցության վերաբերյալ: Փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրերի բացակայության դեպքում 2000թ. մայիսի 16-ի N 247 որոշումը կիրառելի է այլ երկրների հավաստագրման մարմինների կողմից տրված հավաստագրերի և համապատասխանության նշանների ակարգեցված ընթացակարգերի ընդունման դեպքում, միաժամանակ հաշվի առնելով այդ երկրների անվտանգության համապատասխանությունը Հայաստանի պահանջներին ու նորմերին:

133. Ի պատասխան Աշխատանքային խմբի անդամների հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկը հաստատվել է Կառավարության մայիսի 12-ի N 239 որոշմամբ, որը լրացվել է Կառավարության 2001թ. փետրվարի 17-ի N 110, 2001թ. ապրիլի 12-ի N 297 և 2001թ. սեպտեմբերի 6-ի N 825 որոշումներով: Վերոհիշյալ ապրանքների ցանկը տրված է սույն Չեկույցի Հավելված 1-ում: Նա նշեց, որ ուժի մեջ են հետևյալ տեխնիկական կանոնակարգերը.

- 2001թ. հունիսի 15-ին ՍՀՀ-ի հրամանով հաստատված անվտանգության ցուցանիշները, ներքին այրման շարժիչների վառելիքների ստուգման եղանակները և դրանց սպասարկման, փոխադրման, իրացման և օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները: Այդ ցուցանիշները սահմանում են ավտոմեքենաների բենզինի, դիզելային վառելիքի և շարժիչների այլ վառելիքների անվտանգության պահանջները բնութագրող որակի ցուցանիշները, ինչպես նաև վառելիքի սպասարկման, փոխադրման, իրացման և օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության պահանջները: Պահանջվում է, որ ավտոմեքենաների բենզինին, դիզելային վառելիքին և շարժիչների այլ վառելիքներին ներկայացվող պահանջները ընդգրկվեն դրանց նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերում,

- խտացված պայթուցիկ ապրանքներին ներկայացվող անվտանգության պահանջների սահմանման մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ. հունվարի 15-ի N 41 որոշումը: Որոշումը խտացված պայթուցիկ ապրանքների համար կանոնակարգ է սահմանում, որպեսզի դրանք բավարարեն ազգային ստանդարտներում սահմանված պահանջներին,

- AST 214-2001, խտացված պայթուցիկ ապրանքներ, անվտանգության ընդհանուր պահանջներ,

- ԳՈՍՏ 51271-99, խտացված պայթուցիկ ապրանքներ, հավաստագրման փորձարկման եղանակ:

134. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ ընդունվել են առևտրի տեխնիկական արգելքներին վերաբերող հետևյալ իրավական ակտերը.

Աղյուսակ 9

Անվանում	Վավերացման ամսաթիվը
«Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը	03.12.99
«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը	03.12.99
«Չափումների միասնականության մասին» ՀՀ օրենքը	30.04.97

135. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ սկսած անդամակցության օրվանից Հայաստանը կճանաչի արտահանող երկրների միջազգայնորեն ճանաչված իրավասու մարմինների, ինչպես նաև համապատասխանության հավաստում տրամադրող անկախ մարմինների և գործակալությունների կողմից համապատասխանության հավաստման հավաստագրերը և թույլտվությունները, այն երկրներից որոնց հետ Հայաստանը ստորագրել է փոխադարձ ճանաչման համաձայնագրեր: Նա հաստատեց նաև, որ 2004թ. դեկտեմբերի 31-ից հետո պարտադիր կհավաստագրվեն միայն այն ներմուծումները, որոնք ընդգրկված են տեխնիկական կանոնակարգերում՝ մշակված Հայաստանի ստանդարտացման կարգի և ԱՀԿ դրույթների համաձայն: ԱՀԿ որևիցե անդամի պահանջով Հայաստանը կքննարկի հնարավոր արգելքների ազդեցությունը առևտրի վրա: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

136. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ սկսած անդամակցության օրվանից կկիրառի ԱՀԿ Առևտրի տեխնիկական արգելքների համաձայնագիրը ինչպես նաև ստանդարտների մշակման, ընդունման և կիրառման գործում կոդեքսավարվի լավ վարկիցներին օրենսգրքով: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ

137. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ սանիտարական և բուսասանիտարական միջոցներին վերաբերող հետևյալ իրավական ակտերն են ընդունվել Հայաստանի Հանրապետությունում:

Աղյուսակ 10

Անվանում	Վավերացման ամսաթիվը
ՀՀ օրենքը «Անասնաբուժության մասին»	26.10.99 Ազգային ժողովի կողմից
ՀՀ օրենքը «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին»	20.3.2000 Ազգային ժողովի կողմից
ՀՀ օրենքը «Սննդամթերքի անվտանգության մասին»	08.12.99 Ազգային ժողովի կողմից

138. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ՍՀՀ-ն համագործակցում է առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների հետ սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներին վերաբերող հարցերում: Նպատակ ունենալով պաշտպանելու մարդու կյանքն ու առողջությունը և շրջակա

միջավայրը, Հայաստանի Կառավարությունը սահմանել է այն ապրանքների ցանկը, որում ներառված են որոշ ապրանքներ, որոնք կան Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների մասին համաձայնագրում և ենթակա են պարտադիր հավաստագրման (1998թ. հունիսի 16, որոշում N 15, որ փոխարինվել է 2000թ. մայիսի 12-ի N 239 որոշմամբ՝ լրացումներով հանդերձ): Իր տեսակետից, սա հանդիսանում է ապացույց այն փաստի, որ Հայաստանը սկսել է սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների մշակման գործընթացը: 1996թ. Ազգային ժողովը ընդունել է «Ազրարային պետական տեսչությունների մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքը սահմանում է գյուղատնտեսական պետական տեսչական հսկողության իրավական, տնտեսական և կազմակերպչական սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները նկարագրում են գյուղատնտեսության նախարարության պետական տեսչական ծառայության գործունեությունը՝ հողերի մշակման, պարարտանյութերի օգտագործման, բույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի, թունավոր նյութերի ու հանքային պարարտանյութերի տեղափոխման, պահպանման, օգտագործման և ոչնչացման պայմանների առնչությամբ, ինչպես նաև անասնաբուժության հետ կապված անասնաբուժական ծառայությունների առնչությամբ: Համաձայն Կառավարության 1998թ. մարտի 11-ի N 171 որոշման սահմանվել են Ազրարային կանոնները: Այս կանոնները առնչվում են մարդու և կենդանիների հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման, անասնաբուժական դեղամիջոցների և արտահանվող միջոցների տեղափոխման, պահպանման և ոչնչացման հարցերի հետ: Սույն որոշմամբ հաստատվել է բույսերի վնասատուների, մոլախոտերի և կարանտինային կարևորություն ունեցող հիվանդությունների ցանկը:

139. Նա նաև հաստատեց, որ գյուղատնտեսական պետական տեսչական հսկողության մասին օրենքի իրականացման համար ընդունվել է «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը: «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բույսերի պաշտպանության պետական ծառայության և բույսերի կարանտինի իրավական, տնտեսական ու կազմակերպչական սկզբունքները և կանոնակարգում է հարաբերությունը գյուղական տնտեսությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և անհատների միջև Հայաստանի Հանրապետության տարածքում: Այդ օրենքը կանոնակարգում է բույսերի կամ բուսական ծագում ունեցող ապրանքների ներմուծման/արտահանման ընթացակարգը: Այդ օրենքը նաև թույլ է տալիս հաշվի առնել ներմուծման երկրի բուսասանիտարական պայմաններն ու պահանջները՝ բուսասանիտարական հավաստագրեր տրամադրելիս: Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին օրենքը ընդունվել է 2000թ. մարտի 20-ին:

140. «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի անասնաբուժական պետական ծառայության իրավական, տնտեսական և կազմակերպչական սկզբունքները, ամրագրում է կենդանիների հիվանդությունների կանխման, կենդանիների հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության կարգը և ապահովում է ազգաբնակչությանը որակյալ ապրանքներով, որոնք համապատասխանում են անասնաբուժական և սանիտարական պայմաններին: Օրենքը կանոնակարգում է հարաբերությունները անասնաբուժության համար պատասխանատու պետական մարմնի և ձեռնարկությունների, կազմակերպությունների, ձեռներեցների ու անհատների միջև Հայաստանի Հանրապետության տարածքում: Օրենքը սահմանում է պետական անասնաբուժական հսկողության ընթացակարգը կենդանիների և կենդանական ծագում ունեցող ապրանքների ներմուծման/արտահանման վերաբերյալ: Հայաստանը հանդիսանում է Եպիզոտիկայի միջազգային գրասենյակի անդամ սկսած 1997թ. դեկտեմբերից և հետևում է այդ կազմակերպության ուղեցույցներին և ստանդարտներին: Իր տեսակետից, երկու օրենքներն էլ համատեղելի են Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների մասին համաձայնագրի պահանջների հետ:

141. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ Հայաստանը հանդիսանում է Կողմը Ալիմենտարիուս միջազգային հանձնաժողովի անդամ և հետևելու է նրա ստանդարտներին և ուղեցույցներին՝ սննդամթերքի անվտանգության ընթացակարգերը հաստատելիս:

142. Նա նաև նշեց, որ Հայաստանի սանիտարական կանոնների և նորմերի համակարգում առանցքային փաստաթուղթ է հանդիսանում այսպես կոչվող SanPins-ը (Սանիտարական և հիգիենիկ նորմեր և կանոններ), որը հրատարակվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից: SanPins-ը սահմանում է սննդում և սննդամթերքում թունավոր բաղադրանյութերի, հավելումների, աղտոտող նյութերի քանակության սահմանափակումները և հիմնված է գիտական տվյալների և գիտական ինստիտուտների կատարած վտանգների գնահատման վրա: «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է կայունացում՝ սննդին վերաբերող գործընթացների, մասնավորապես, արտադրության և վերարտադրության, ներմուծման, արտահանման, փոխանակման, պահման, փաթեթավորման, վաճառքի, ինչպես նաև ապրանքների օգտագործման առնչությամբ:

143. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ ԱՀԿ-ին անդամակցելու օրվանից սկսած, Հայաստանում կիրառվող սանիտարական և բուսասանիտարական պահանջները կհամապատասխանեցվեն սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների և ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին: Համաձայն ԱՀԿ դրույթների Հայաստանը պետք է հիմնարկի հսկողության համակարգ, որը կզբաղվի բույսերի և կենդանիների հիվանդությունների հայտնաբերմամբ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Առևտրին առնչվող ներդրումային միջոցառումներ (ԱԱՆՄ)

144. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ սկսած անդամակցության օրվանից Հայաստանը կկիրառի ԱԱՆՄ Համաձայնագիրը և չի պահպանի միջոցառումներ, որոնք չեն համապատասխանում վերջինիս: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Պետական առևտրային ձեռնարկություններ

145. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը հաղորդեց, որ նախկին Խորհրդային Միության՝ արտաքին առևտրի պետական մենաշնորհը վերացվել է 1989թ-ին և փոխարինվել է այդ գործունեությունը իրականացնելու համար անհրաժեշտ գրանցման պահանջով: Արտաքին առևտրի մասին Հայաստանի Հանրապետության նախագահի 1992թ. հունվարի 4-ի որոշմամբ Հայաստանի տարածքում գրանցված և գործող բոլոր ձեռնարկությունները՝ անկախ նրանց սեփականության ձևից, իրավունք ունեն վարելու արտաքին առևտուր և ենթակա չեն գրանցման որևէ լրացուցիչ պահանջների:

146. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հաղորդեցին, որ, իրենց տեսակետից, հեռահաղորդակցության որոշ ձեռնարկություններ ընդգրկված են պետական առևտրում համաձայն ՄԱԳՀ-1994-ի 17-րդ հոդվածի: Ի պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ հիմնվելով Առևտրի և սակավների 1994թ. գլխավոր համաձայնագրի 17-րդ հոդվածում բերված պետական առևտրի սահմանման վրա, Հայաստանը ունի մեկ պետական առևտրի ձեռնարկություն հեռահաղորդակցության բնագավառում: Հիմնական հեռահաղորդակցային

ծառայությունները, տվյալների շարժական ու միջազգային փոխանցումը և ավելացված արժեքով ծառայությունները վերապահվում են Արմենթել բաժնետիրական ընկերությանը, որը հանդիսանում է Հայաստանի Կառավարության և օտարերկրյա մասնավոր ձեռնարկատերի սեփականություն՝ Հայաստանի հեռահաղորդակցության ենթակառուցվածքային զարգացմանը Արմենթելի պարտավորության դիմաց:

147. Ի պատասխան այն բանի, թե արդյոք Հայաստանը մտադրված է հաշվետվություններ կայացնել բնական գազի բաշխման պետական մենաշնորհի վերաբերյալ ըստ 17-րդ հոդվածի, Հայաստանի ներկայացուցիչը պատասխանեց, որ Հայգազին տրված չէն բացառիկ կամ հատուկ իրավունքներ կամ արտոնություններ բնական գազի բաշխման շուկայում: Գազի բաշխման հայկական ցանցը սեփականաշնորհվել է, որի արդյունքում կազմավորվել է ՀայՌուսԳազԱրդ ՓԲԸ-ն: Սա չի հանդիսանում խոչընդոտ մեծամասնությամբ մասնավոր սեփականությանը պատկանող որևէ այլ ձեռնարկության համար՝ գազ գնելու կամ գազի բաշխման մեջ ներգրավելու հարցում: Հայաստանի ներկայացուցիչը սասց, որ «ՀայՌուսԳազԱրդ»-ը հանդիսանում է հիմնական գազ ներմուծողը: Այդ կազմակերպության 45%-ը պատկանում է ՀայԳազին, 45%-ը՝ ԳազՊրոմին, 10%-ը՝ ԻՏԵՌԿ կազմակերպությանը: Գոյություն ունեն սակայն մի շարք գազ ներմուծողներ, որոնց գները համապատասխանում են շուկայի պահանջներին:

148. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Հայաստանի Կառավարությունը կգործի ԱՀԿ Համաձայնագրերի դրույթների՝ ՄԱԳՀ-1994-ի 17-րդ հոդվածի և ԾԱԳՀ 8-րդ հոդվածի համապատասխան և միայն հատուկ կամ բացառիկ դեպքերում կկիրառի պետական ձեռնարկությունների և այլ ձեռնարկությունների առևտրային գործառնությունները կարգավորող օրենքներն ու կանոնակարգերը: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Ազատ գոտիներ, հատուկ տնտեսական գոտիներ

149. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը չի պահում որևէ ազատ առևտրի գոտի, որտեղ շնորհվում են որևէ տեսակի հատուկ մաքսային արտոնություններ: Այնուամենայնիվ, Հայաստանը սահմանել է սահմանային առևտրի գոտի Մեդրիի շրջանում՝ Իրանի հետ սահմանի վրա: Սահմանային առևտրի գոտին սահմանվել է՝ խթանելու առևտուրը Հայաստանի և Իրանի միջև: Համաձայն պայմանավորվածության, հայկական ձեռնարկությունները խրախուսվում են ներկայություն հաստատելու սահմանային գոտում, իսկ իրանական ձեռնարկությունները խրախուսվում են անել նույնը՝ սահմանի իրենց կողմում: Քառասուն քաղաքացու յուրաքանչյուր երկրից իրավունք է տրվել ազատ կերպով մտնել միմյանց սահմանային գոտիներ՝ գործարար և առևտրային հնարավորությունները հետազոտելու, սակայն ոչ մի հատուկ մաքսային կարգ կամ արտոնյալ մաքսային մոտեցում չեն առնչվում այդ կապերի հիման վրա համաձայնեցված փոխանակումների հետ:

150. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ եթե Հայաստանը ստեղծի որևէ ազատ գոտիներ կամ հատուկ տնտեսական գոտիներ, ապա դրանք կկառավարվեն համաձայն ԱՀԿ լրավճարների, ԱԱՆԼ և ՄՍԱԱ-ին վերաբերող դրույթների, և որ այդ գոտիներում արտադրված ապրանքները, ներմուծումները և ներկրումները ազատվում են մաքսերից և որոշ հարկերից, ինչպես նաև կենթարկվեն սովորական մաքսային գործառնությունների Հայաստանի մնացյալ տարածք մուտք գործելիս, կկիրառվեն՝ մաքսեր և հարկեր: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորության ստանձնման վերաբերյալ:

Պետական գնումներ

151. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ պետական գնումները Հայաստանում նախկինում կարգավորվում էին «Հայաստանի Հանրապետության պետական գնումների կարգի մասին» 1995թ. փետրվարի 8-ի Կառավարության N 67 որոշմամբ: Համաձայն այդ որոշման՝ երբ կառավարական մարմինները ցանկանում են ապրանքներ ձեռք բերել, ապա դրանք կարող են անել այդ կամ մատակարարման գործակալի միջոցով, կամ ուղիղ կերպով շուկայից՝ իրենց սեփական անունից: Ոչ մի մատակարարման մարմնի, լինի դա պետական կամ մասնավոր, չեն տրամադրվում հատուկ իրավունքներ կամ արտոնություններ: Բոլոր շահագրգիռ կողմերը կարող են մասնակցել մատակարարման գործողություններին՝ ենթարկվելով ընդհանուր կանոններին: Այն գնումները, որ կատարվում են պետպատվերի միջոցով, ուղիղ կերպով ֆինանսավորվում են բյուջեից, և ներառում են կառավարական մարմինների կողմից՝ իրենց սեփական օգտագործման համար ձեռք բերվող ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ ոչ վերավաճառքի կամ արտադրության մեջ որպես ներդրում օգտագործելու համար): Նախկինում այս գործողությունները ունեին ենթադրվող լրավճարների տարբեր շահագրգիռ մատակարարների համար, քանի որ պետպատվերի գները չպետք է անպայման համապատասխանեին շուկայական գներին:

152. Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ ներքին օրենսդրությունը ԱՀԿ կանոնակարգերին լրիվ համապատասխանության բերելու իր ջանքերում Կառավարությունը նախապատրաստել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2000թ. հունիսի 5-ին, և ստորագրվել է նախագահի կողմից 2000թ. հունիսի 19-ին: Ինչպես պահանջվում է այդ օրենքով, Պետական գնումների գործակալությունը պետական գնումների համար պատասխանատու միակ գործակալությունն է (պետական գնումների միջոցով են ձեռք բերվում աշխատանքներ, ապրանքներ, մատուցվում ծառայություններ, եթե դրանց արժեքը գերազանցում է 250000 դրամը)՝ սկսած 2001թ.: 2000թ. բյուջեի համար բոլոր պետական գնումները կատարվել են ոչ կենտրոնացված ձևով, երբ բոլոր գործակալությունները կատարում են իրենց գնումները համաձայն այդ օրենքում հատկորոշված կանոնակարգերի: Օրենքը սահմանում է գնումների պարզ և թափանցիկ կանոններ և կանոնակարգեր, որոնք համապատասխանում են Պետական գնումների մասին ԱՀԿ համաձայնագրին, մասնավորապես, ազգային մոտեցման և անխտրականության սկզբունքները երաշխավորված են համաձայն Պետական գնումների մասին Համաձայնագրի 3-րդ հոդվածի:

153. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանի Կառավարությունը անդամակցությունից հետո որոշել է սկսել բանակցություններ՝ Պետական գնումների մասին Համաձայնագրին միանալու համար: Այս կապակցությամբ, Հայաստանը նախքան ԱՀԿ-ին անդամակցելը կպահանջի դիտորդի կարգավիճակ Պետական գնումների կոմիտեում և կներկայացնի իր ամբողջական առաջարկը ԱՀԿ-ին անդամակցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Նա նաև հաստատեց, որ եթե բանակցությունների արդյունքները համարվեն բավարար Հայաստանի և Համաձայնագրի այլ անդամների կողմից, Հայաստանը կավարտի Պետական գնումների մասին Համաձայնագրին միանալու բանակցությունները մինչև 2003թ. դեկտեմբերի 31-ը: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Տարանցիկ փոխադրում

154. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը թույլատրում է ապրանքների անարգել և հարկերից ազատ տարանցիկ փոխադրում իր տարածքով, բացառությամբ այն ապրանքների, որոնց

ներմուծումը արգելված է, այսինքն՝ գեների, գեների արտադրության մեջ օգտագործվող բաղադրամասերի, պայթուցիկ նյութերի, միջուկային նյութերի, թույների, թմրադեղերի, ուժեղ հոգեկան ազդեցություն ունեցող նյութերի, ափիոնի ծխելու համար օգտագործվող հարմարանքների և պոռնոգրաֆիական նյութերի: Այդ առարկաների տարանցիկ փոխադրումը Հայաստանի Հանրապետության տարածքով կթույլատրվի միայն Հայաստանի կառավարության բացառիկ համաձայնության դեպքում: Տարանցիկ փոխադրվող ապրանքները մտնում են մաքսային հսկողության ներքո՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս:

155. Նա նաև ավելացրեց, որ 2001թ. հունվարի 1-ին կիրառված Մաքսային օրենսգիրքը կանոնակարգում է տարանցիկ առևտուրը: Համաձայն Մաքսային օրենսգրքի 27-րդ հոդվածի՝ տարանցիկ փոխադրումների կարգի շրջանակներում, մաքսային գանձումներ չեն կիրառվում, բացառությամբ՝ մաքսային վճարումների և այլ վճարների՝ օրենքով նախատեսված դեպքերում: Ոչ սակագնային միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ, երբ այլ կերպ է նախատեսված Օրենսգրքով կամ այլ օրենքներով և միջազգային համաձայնագրերով, որոնց Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է: Հայաստանը հանդիսանում է ԱՊՀ տնտեսական համագործակցության շրջանակներում տարանցիկ առևտրի վերաբերյալ բազմակողմ համաձայնագրի մասնակից: Այդ համաձայնագիրը նախատեսում է, որ մասնակիցները չպետք է հարկվեն կամ արգելակեն իրենց տարածքով կատարվող տարանցիկ առևտուրը: Հայաստանը նաև ստորագրել է երկկողմ համաձայնագիր Կրասնոյարսկի հետ այս հարցի կապակցությամբ: Քննարկման փուլում են գտնվում համանման համաձայնագրեր Իրանի և Ուկրաինայի հետ:

156. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ Կառավարությունը կկիրառի տարանցիկ գործառնությունները կարգավորող օրենքներն ու կանոնակարգերը՝ լիովին համապատասխանեցնելով դրանք ԱՀԿ Համաձայնագրին և մասնավորապես՝ ՄԱԳՀ-1994-ի 5-րդ հոդվածի դրույթներին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ:

Գյուղատնտեսական քաղաքականություն

157. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ ինչպես և արդյունաբերության դեպքում, Հայաստանի Կառավարությունը չի վարում որևէ տեսակի պետական պլանավորում գյուղատնտեսության բնագավառում: Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ Նախկինում Հայաստանի Կառավարությունը չէր դիտարկում ուղիղ լրավճարները որպես գյուղատնտեսության բնագավառի զարգացման ծրագրի մի մաս: Կառավարությունը տրամադրում էր գյուղատնտեսության բնագավառին որոշ անուղղակի լրավճարներ և հիմնական ձևի օժանդակություն, ներառյալ՝ հետևյալը՝ ոռոգման ջրի մատակարարման էլեկտրականության ծախսերի մարում, ցածր տոկոսով վարկերի տրամադրում գյուղացիներին և հարկերից ազատում (մասնավորապես՝ հիմնական գյուղատնտեսական ապրանքների արտադրողների ազատումը ԱՄՀ-ից): Նախկինում նախատեսված էր հացահատիկների սերմերի տրամադրում «հացահատիկային վարկերի» միջոցով: Ի լրումն դրա, Կառավարությունը աջակցում է մի շարք գործողություններին, որոնք ուղղված են ոռոգման ցանցի վերականգնմանը, ֆինանսական և հաղորդակցային ենթակառուցվածքի վերակառուցմանը, ագարակատերերի ուսումնասիրմանը և սերմերի և անասունների որակի բարձրացմանը, վնասատուների և հիվանդությունների արտադրողների հսկողությանը, տեխնիկական խորհուրդների և ընդլայնման ծառայությունների տրամադրմանը: Իր տեսակետից, այդ միջոցառումները համապատասխանում են տեղական աջակցության աղյուսակներին, քանի որ տրամադրվող ծառայությունները մատչելի են բոլոր գյուղացիներին և կապված են բյուջեի հատկացումների հետ: Կառավարությունը մտադրված է հետագայում ավելացնել ուղիղ աջակցությունը գյուղատնտեսական արտադրողներին: Նա նաև ավելացրեց, որ գյուղատնտեսական արտադրողներին տրամադրված աջակցությունը ուղղված է օգնելու գյուղացիներին հաղթահարել կառուցվածքային և գործառնական դժվարությունները շուկայական տնտեսությանը անցման ընթացքում:

158. Նա նաև նշեց, որ ի տարբերություն արդյունաբերության բարեփոխման բավականաչափ դանդաղ ընթացքին, Հայաստանը կարող է սեփականաշնորհել է գյուղատնտեսական հողերի 70 տոկոսից ավելին և դարձրել է հողի սեփականության իրավունքը ազատորեն փոխանցվող: Գյուղատնտեսական աջակցության մասին տեղեկությունները ներկայացվել են Աշխատանքային խմբին:

159. Հայաստանի ներկայացուցիչը ավելացրեց, որ քանի որ դիտարկվում են ներդրումները, երկու մեծ պետական ձեռնարկություն՝ Հայագրոսպասարկումը և Հայբերրիությունը հանդիսանում են գյուղատնտեսական ծառայությունների և ներդրումների գլխավոր մատակարարներ, ինչպիսիք են՝ գյուղմեքենաները և դրանց պահեստամասերը, սերմերը, քիմիական նյութերն ու պարարտանյութերը: 1996թ. այս ձեռնարկությունների 66 տոկոսը սեփականաշնորհվել է, իսկ 34 տոկոսը մնացել է պետական սեփականության ներքո՝ Գյուղատնտեսության նախարարության կողմից թույլատրված ձևով (բաժնետոմսերի տեսքով): Չնայած այն փաստին, որ ներդրումային շուկայում մրցակցությունը մտնում է ինչ-որ առումով սահմանափակված, չկան սահմանափակումներ այլ մատակարարների մուտքը կանգնեցնելու համար: Ավելի նոր մասնավոր ձեռնարկություններ են մուտք գործում շուկա և մեծացնում իրենց շուկայական փայաբաժինը, մասնավորապես՝ ապարտանյութերի շուկայում: Ակնկալվում է, որ այս միտումը կշարունակվի շուկայում մրցակցության պայմանների զարգացման հետ մեկտեղ: Նա ևս ավելացրեց, որ այդ ձեռնարկությունները չունեն՝ իրենց գործառնության բնագավառում Հայաստանի Կառավարության կողմից շնորհված բացառիկ կամ հատուկ իրավունքներ կամ արտոնություններ:

160. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանը չի արձագանքի Գյուղատնտեսության մասին Համաձայնագրի հոդված 6.2-ի համաձայն լրավճարներ տրամադրելու պահանջներին:

161. Հայաստանի ստանձնած պարտավորությունները, որոնք վերաբերում են գյուղատնտեսական ապրանքներին և անասնաբուժական դեղորայքի նկատմամբ կիրառվող ավելացրած արժեքի հարկի հեռացմանը, վերաբարտարված են 64-65 պարբերություններում:

162. Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Հայաստանի Կառավարությունը չի վճարել ոչ մի արտահանման լրավճար գյուղատնտեսական ապրանքների արտահանման համար: Համապատասխանաբար, Հայաստանի Կառավարությունը կնվազեցնի իր գյուղատնտեսական արտահանման լրավճարները մինչև գրոյական մակարդակ ապրանքների վերաբերյալ կոնցեսիաների ժամանակացանկի համապատասխան բաժնում:

5. Առևտրին վերաբերող մտավոր սեփականության ռեժիմ

163. ՀՀ ներկայացուցիչը նշեց, որ մտավոր սեփականության պահպանության ուղղությամբ առաջին քայլը 1992թ. Հայաստանի արտոնագրային վարչության հիմնադրումն էր: Սկսած 1992թ. դեկտեմբերից հնարավոր էր ներկայացնել հայտեր գյուտերի արտոնագրման համար, և 1993թ. օգոստոսից սկսած «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ գրանցել օգտակար մոդելները և արդյունաբերական նմուշները: ՀՀ քաղաքացի չհանդիսացող և Հայաստանում մշտական բնակություն չունեցող հայտատուս պետք է իր գործերը վարի ՀՀ արտոնագրային վարչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Մտավոր սեփականության քաղաքականություն

164. Ի պատասխան ՀՀ Կառավարության մտավոր սեփականության քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության պահանջի, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ Կառավարությունը ներկայումս իրականացնում է օրենսդրական բարեփոխումների ծրագիր: 1993-94թթ. ընթացքում ՀՀ արտոնագրային վարչությունը ստացել է 3000 հայտ ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների գրանցման համար: 2000թ. հունվարից մինչև 2002թ. հունվարը ՀՀ արտոնագրային վարչությունը ստացել է 296 գյուտի հայտ, որից 273-ը ներկայացվել են տեղացիների, իսկ 23-ը՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից, և մտավորապես 446 ապրանքային նշանների հայտ՝ ազգային ընթացակարգով գրանցելու համար: Այնուամենայնիվ, ապրանքային նշանների գրանցման համար հայտերի ընդունումը սկսվել է 1995թ. օգոստոսի 19-ին «Ապրանքային նշանների և սպասարկման նշանների ժամանակավոր կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 4 որոշման և Արտոնագրային վարչության «Նախկին Խորհրդային Միության ապրանքային նշանների և սպասարկման նշանների գործողության մեջ գտնվող վկայականների վերագրանցման վերաբերյալ» 1995թ. հոկտեմբերի 24-ի հրամանի հրապարակումից հետո:

165. Այնուհետև նա նշեց, որ 1997թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Ապրանքային նշանների և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» և «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքները: Ընդունված օրենքների դրույթները լիովին համապատասխանում էին այս բնագավառում միջազգային նորմերին: Այս օրենքների բնորոշ հատկանիշներն էին իրավական հավասարությունը ապրանքային և սպասարկման նշանների միջև: Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ մտավոր սեփականության պահպանության հետևյալ իրավական ակտերը ներկայումս կիրառվում են ՀՀ-ում:

Աղյուսակ 11

Իրավական ակտ	Կիրարկման թվական
1. «Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենք	26.08.93
2. «Շեղիճակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք	31.05.96
3. «Գովազդի մասին» ՀՀ օրենք	31.05.96
4. «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենք	21.06.97
5. «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենք	01.07.97
6. «Ինտելեկտուալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության մասին» ՀՀ օրենք	14.03.98
7. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	01.01.99
8. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք	01.01.99
9. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք	12.1.99

Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ մտավոր սեփականության պահպանության հետևյալ օրենսդրությունը (որը ներառում է կամ փոփոխված կամ գործող օրենսդրությունը) պատրաստվել և ուժի մեջ է մտել Հայաստանի մտավոր սեփականության պահպանության ռեժիմը ԱՀԿ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Աղյուսակ 12

Իրավական ակտ	Կիրարկման թվական	Բովանդակություն
«Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենք (նոր)	18.12.99	(ՄՍԱԱ համաձայնագրի 27-րդ, 30-րդ, 31-րդ, 34-րդ հոդվածներ)
«Շեղիճակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք (նոր)	20.01.00	(Բեռնի կոնվենցիայի 12, 14 ^{bis} հոդվածները և ՄՍԱԱ համաձայնագրի 10-րդ հոդվածը)
«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենք (նոր)	20.01.00	(Փարիզյան կոնվենցիայի 5-րդ, 6 ^{bis} և 6 ^{ter} , 10-րդ հոդվածները, և ՄՍԱԱ համաձայնագրի 15-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 46-րդ, 47-րդ հոդվածները)
«Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենք	15.10.99	(Փարիզյան կոնվենցիայի 8-րդ հոդվածը)
Փոփոխություններ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում	14.3.2000	(ՄՍԱԱ համաձայնագրի 17-րդ, 22-րդ, 30-րդ, 39-րդ հոդվածները)
Փոփոխություններ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում	24.10.00	(ՄՍԱԱ համաձայնագրի 42-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ հոդվածները)
Փոփոխություններ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում	05.04.2000	(ՄՍԱԱ համաձայնագրի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 61-րդ հոդվածները)
«Մեկնակցի նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքը	27.12.2000	(բույսերի տեսակների պահպանության վերաբերյալ: ՄՍԱԱ համաձայնագրի 27-րդ հոդվածը)
«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ներառյալ ամբողջիդ՝ մրցակցության և չբազմապատկան տեղեկատվության պահպանության)	15.12.2000	(Փարիզյան կոնվենցիայի 10 ^{bis} , 10 ^{ter} հոդվածները և ՄՍԱԱ համաձայնագրի 39-րդ, 40-րդ հոդվածները)
ՀՀ Մաքսային օրենսգիրք	01.01.2001	(«Մաքսային գործողությունների» վերաբերող հատուկ պահանջներ» տրված ՄՍԱԱ համաձայնագրի 3-րդ մասին 4-րդ բաժնում)

166. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Քրեական օրենսգրքը (Փարիզյան կոնվենցիայի 10^{bis}, 10^{ter} հոդվածների և ՄՍԱԱ համաձայնագրի 46, 47, 50, 61 հոդվածների իրագործում) կկիրառվի սկսած ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցության օրվանից: Աշխատանքային խումբը հաշվի առավ այդ պարտավորությունը:

Քաղաքականության ձևավորման և իրականացման համար պատասխանատու գործակալությունները

167. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ արդյունաբերական սեփականության (արտոնագրեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային և սպասարկման նշաններ, ֆիրմային անվանումներ, ինտելեկտուալ միկրոսխեմաների տոպոլոգիաներ, աշխարհագրական նշումներ և ծագման տեղանուններ) և հեղինակային իրավունքի բնագավառում քաղաքականության ձևավորմանը մասնակցությունը և իրականացումը ՀՀ մտավոր սեփականության գործակալության իրավասությունն է, որը գործում է առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգում: Մտավոր սեփականության գործակալությունը պատասխանատու է արդյունաբերական սեփականության իրավունքի հայտերի ընդունման, արդյունաբերական սեփականության իրավունքների պետական գրանցամատյանի վարման և պահպանության, գործակալության որոշումների մասին պաշտոնական տեղեկագրերի հրապարակման և օտարերկրյա հաստատությունների ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համար: Մտավոր սեփականության

գործակալությունը պատասխանատու է նաև ապրանքային նշաններին վերաբերող ռեժիմի համար:

Մասնակցությունը միջազգային հեղինակային իրավունքի պաշտպանության համաձայնագրերին

168. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ 1993թ. ապրիլի 22-ին անդամակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը: 1994թ. մայիսի 17-ին Հայաստանը ի պահ է հանձնել Արդյունաբերական սեփականության Փարիզյան կոնվենցիայի, Նշանների միջազգային գրանցման մադրիդյան համաձայնագրի և Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի՝ ՀՀ-ում շարունակվող կիրառության մասին հայտարարություն: 1996թ. փետրվարի 27-ին Հայաստանն անդամակցել է Եվրասիական արտոնագրային կոնվենցիային: 2000թ. ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Նշանների միջազգային գրանցման մադրիդյան համաձայնագրի արձանագրությունը և 2000թ. մայիսի 3-ին՝ Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիան: Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին Հռոմի կոնվենցիային և Հնչյունագրեր արտադրողների շահերը իրենց հնչյունագրերը անօրինական վերարտադրությունից պահպանելու մասին Ժնևյան կոնվենցիային միանալու մասին վավերացման փաստաթղթերն ի պահ են հանձնվել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին 2002թ. հոկտեմբերի 31-ին: Կոնվենցիաները Հայաստանի համար ուժի մեջ կմտնեն 2003թ. հունվարի 31-ից:

Ազգային ռեժիմ և առավելագույն բարենպաստ ռեժիմի տրամադրումը օտարերկրյա քաղաքացիներին

169. Աշխատանքային խմբի որոշ անդամներ նշեցին, որ չնայած Հայաստանի ներկայացուցիչը նշել է, որ դատարանում օտարերկրյա քաղաքացիներին ցուցաբերվում է ազգային մոտեցում թե քաղաքացիական, թե քրեական դատավարության ժամանակ, դատական պրոցեսների վարչական վերանայման վերաբերյալ պետական դատական ատյանների իրավունքների մասին հարցերին տրված պատասխաններից երևում է, որ տնտեսական դատարանի իրավագործությունը ԱՊՀ երկրներից դուրս օտարերկրյա քաղաքացիների վրա չի տարածվում: Ի պատասխան, ՀՀ ներկայացուցիչը նշեց, որ համաձայն օրենքի բոլորն ունեն հավասար իրավունքներ, օրինակ՝ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը արտոնագրման հարցերում, ներառյալ՝ արտոնագրերի պահպանության և իրավական խախտումների համար իրավական փոխհատուցումները, օտարերկրյա բոլոր քաղաքացիների համար նախատեսում է նույն իրավունքները, ինչ Հայաստանի քաղաքացիների համար: «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը նմանապես լիարժեք ազգային մոտեցում է նախատեսում օտարերկրյա քաղաքացիներին: Նույնը կարելի է ասել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի և մտավոր սեփականության ոլորտում հետագայում ընդունվելիք օրենքների և կանոնակարգերի մասին:

Տուրքեր և հարկեր

170. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ տուրքերը վճարվում են հայտ ներկայացնելու և արտոնագրի տրման ժամանակ: Նույնը վերաբերում է ապրանքային և սպասարկման նշաններին: Բոլոր տուրքերը սահմանված են մատուցված ծառայությունների մտավոր արժեքի սահմաններում, և մտավոր սեփականության իրավունքի ընձեռումը և պահպանությունը հարկման ենթակա չեն, քանի որ յուրաքանչյուր տուրք գանձվում է հօգուտ բյուջեի: Արդյունաբերական սեփականության իրավական պահպանության հետ կապված տուրքերը, որոնք սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, նույնն են ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց համար:

Պահպանության հիմնական ստանդարտները, ներառյալ մտավոր սեփականության իրավունքների ձեռքբերման և պահպանման գործընթացները

Հեղինակային իրավունքի պահպանություն

171. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը ստեղծվել է 1993թ.: Ավելի քան 2000 հեղինակներ և նրանց ստեղծագործությունները գրանցվել են գործակալությունում: Իր գործունեության շրջանակներում գործակալությունը գրանցել է նաև արվեստի ստեղծագործություններ օգտագործող այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են թատրոնները, համերգային կազմակերպությունները, կամ կազմակերպություններ, որոնք օգտագործել են նաև արդյունաբերության նպատակով օգտագործվող արհեստներ: Հեղինակային իրավունքի քաղաքականության իրականացումը հեղինակային իրավունքների ազգային գործակալության պատասխանատվությունն էր, որը գրանցում էր հեղինակային իրավունքները, օժանդակում էր անհատներին հեղինակային իրավունքների պահպանության հարցերում, կատարում էր խորհրդատվական ծառայություններ, հավաքում և հեղինակներին ու նրանց ժառանգներին էր վճարում հոնորարներ: 2002թ. մարտից Հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը գործում է Մտավոր սեփականության գործակալության կազմում:

172. Հայաստանի ներկայացուցիչն ավելացրեց, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին. ՀՀ օրենքի համաձայն, որն ընդունվել է 1996թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովի կողմից, Հեղինակային իրավունքների ազգային գործակալությունն իրականացնում էր հեղինակային իրավունքի պահպանությունը ՀՀ տարածքում: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքը մշակվել է համաձայն Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի դրույթների և ուժի մեջ է մտել 2000թ. հունվարի 20-ից: Այն նախատեսում է համակարգչային ծրագրերի, տվյալների բանաքաղման իրավունքի և հարակից իրավունքների պահպանություն՝ այսինքն հնչյունագրեր և տեսագրություններ արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների ու հեռուստակայանների իրավունքների պահպանությունը, ինչպես նաև նախկինում գոյություն ունեցած հեղինակային իրավունքի օբյեկտներին և հնչյունագրերին ազգային ռեժիմով ստեղծագործությունների և հնչյունագրերի համար նախատեսված իրավունքի ընձեռում:

Ապրանքային նշաններ, ներառյալ սպասարկման նշաններ

173. Հայաստանի ներկայացուցիչն աշխատանքային խմբին ներկայացրեց, որ 1997թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին օրենքը, որն ուժի մեջ է մտել 1997թ. հուլիսից: Ինչպես արդեն նշվել է, այս օրենքների բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք նախատեսում են իրավական հավասարություն ապրանքային նշանների և սպասարկման նշանների միջև: Օրենքը սահմանում է ապրանքային նշանների պահպանության ժամկետները և պայմանները, ապրանքային նշանների այն տեսակները, որոնք չեն կարող գրանցվել, ապրանքային նշանների գրանցման գործընթացները, ապրանքային նշանների վերաբերյալ որոշումների բողոքարկման պայմանները, ապրանքային նշանների

օգտագործման պայմանները, ապրանքային նշանի գրանցման համար պահանջվող փաստաթղթերը: Ապրանքային նշաններին պահպանություն տրվում է 10 տարի ժամկետով, որը հնարավոր է նորացնել հաջորդ տաս տարվա համար: Նա նշեց, որ իր կարծիքով օրենքի դրույթներն ամբողջովին համապատասխանում են ՄՍԱԱ համաձայնագրի 15, 16.1 և 17-21-րդ հոդվածներին: Ի պատասխան հետագա հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ ՄՍԱԱ 16.2 և 16.3 հոդվածների հետ կապված, որոնք վերաբերում են հանրահայտ ճանաչված հատարանային և սպասարկման նշաններին, նույնպես հաշվի են առնված վերը նշված օրենքում (ի տարբերություն նախկին՝ 1995թ. օգոստոսի 19 թիվ 4 որոշման), և դրանք ամբողջովին արտացոլված են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ նոր օրենքում, որն ուժի մեջ է մտել 2000թ. ապրիլի 15-ից:

Աշխարհագրական նշումներ, ներառյալ ծագման տեղանուններ

174. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցրեցին, թե ինչպես Հայաստանը պետք է պահպանի աշխարհագրական նշումներն ըստ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի և արդյոք այդ օրենսդրությունը համապատասխանում է ՄՍԱԱ համաձայնագրի 22-24-րդ հոդվածներին: Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ չնայած աշխարհագրական նշումները հատարանային նշված չեն 1995թ. օգոստոսի 19-ի թիվ 4 որոշման մեջ, և ոչ էլ նախկին՝ 1997թ. «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում, ՄՍԱԱ համաձայնագրի 22-24-րդ հոդվածներն այժմ ամբողջովին արտացոլված են 2000թ. ապրիլի 15-ի Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին օրենքում: Այդ օրենքի համապատասխան դրույթները մշակվել են Փարիզյան կոնվենցիայի (1(2), 10, 10^{ter}, 10^{bis}, 6^{quinquest} B.3, հոդվածներ, ապրանքների ծագումը սխալ և շփոթեցնող նշումների կանխման վերաբերյալ Մադրիդյան համաձայնագրի (1(1), 1(2) հոդվածներ) դրույթներին և ծագման տեղանունների պահպանության և նրանց միջազգային գրանցման մասին Լիսաբոնի համաձայնագրի (2(1), 2(2), 3-րդ, 6-րդ հոդվածների համաձայն:

Արդյունաբերական նմուշներ

175. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ արդյունաբերական նմուշները պահպանվում են համաձայն 1993թ. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի: Մասնավորապես, օրենքի այն հոդվածները, որոնք սահմանում են անհրաժեշտ պայմաններ արդյունաբերական նմուշների արտոնագրառականության համար և համապատասխանում են ՄՍԱԱ համաձայնագրի 25-րդ և 26-րդ հոդվածներին: Ի պատասխան այն հարցի, որը վերաբերում էր տեքստիլ յուրօրինակ նմուշների պահպանությանը, տրված ՄՍԱԱ համաձայնագրի 25(2) հոդվածում, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ չնայած տեքստիլ նմուշները հստակորեն նշված չեն 1993թ. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում (1999թ. Արտոնագրերի մասին նոր օրենքի 6-րդ հոդված), այնուամենայնիվ, դրանք նախատեսված են այդ դրույթում: Համարժեք հղում կատարվեց նաև 2000թ. օգոստոսի 31-ին ընդունված Արդյունաբերական նմուշների հայտերի կազմման, ներկայացման և քննարկման կանոններին:

Արտոնագրեր

176. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ գյուտի կամ արդյունաբերական նմուշի համար հորհրդային Միության արտոնագրային գերատեսչության կողմից տրված պահպանական փաստաթղթի (արտոնագրի կամ վկայագրի) իրավաստերը, որը դեռևս գոյություն ունի, ժամանակ իրավունքի գործողության ժամկետի ընթացքում (20 տարի հայտի ներկայացումից հետո) ցանկացած ժամանակ կարող է դիմել ՀՀ արտոնագրային վարչություն՝ ՀՀ արտոնագրի ստանալու համար: Մինչև 1990թ. 10 տարվա ընթացքում Հայաստանում բնակվող անձինք 6000 գյուտ են գրանցել հորհրդային Միության արտոնագրային գերատեսչությունում: «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված են արտոնագրման ենթակա օբյեկտների արտոնագրման պայմանները, արտոնագրատիրոջ իրավունքները, հարկադրական լիցենզիա տրամադրելու պայմանները, արտոնագիր տալու ընթացակարգը և վեճերի լուծման պայմանները:

177. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1993թ. օգոստոսին: Այդ օրենքի համաձայն գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների համար տրվում են արտոնագրեր: Գյուտերի համար արտոնագրերի գործողության ժամկետը 10 տարի է նախնական արտոնագրի համար, որը տրվում է գյուտի նախնական փորձաքննության հիման վրա, և 20 տարի է, երբ տրվում է գյուտի ըստ էության փորձաքննության հիման վրա (հիմնական արտոնագիր): Այս ժամկետները հաշվարկվում են սկսած հայտի ներկայացման օրվանից: Գյուտի արտոնագիրը տրվում է ելնելով այն պահանջից, որ արտոնագրի օբյեկտը լինի նոր, ունենա գյուտարարական մակարդակ և արդյունաբերական կիրառելիություն, և չհակասի հասարակության անվտանգությանը և շահերին, բարոյականությանը և օրենքին:

178. Այնուհետև նա ավելացրեց, որ արտոնագրի հայտը ենթակա է փորձաքննության, որը պետք է իրականացվի ներկայացման օրվանից հետո 2 ամսվա ընթացքում: Եթե հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին, ապա այն հրապարակվում է և այդ օրվանից 4 ամսով դրվում է համընդհանուր ծանոթացման, որից հետո տրվում է նախնական արտոնագիր: Հիմնական արտոնագիրը տրվում է՝ ելնելով ըստ էության փորձաքննության արդյունքներից, որն իրականացվում է հայտատուի կամ որևէ այլ շահագրգիռ կողմի դիմումի համաձայն: Պահանջը պետք է ներկայացվի արտոնագրի հայտ ներկայացնելուց հետո յոթ տարվա ընթացքում: Ըստ էության փորձաքննության դիմում կարող է ներկայացվել նշված 7 տարվա ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում, պայմանով, որ տվյալ անձը վճարի լրացուցիչ տուրք:

179. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցրեցին, արդյոք «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը համապատասխանում է ՄՍԱԱ համաձայնագրի 27-34-րդ հոդվածներին, և պահանջվեց տեղեկատվություն հարկադրական լիցենզիայի տրամադրման Հայաստանի համակարգի համապատասխանության մասին: Ի պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ ազգային անվտանգության և հասարակության շահերից ելնելով կամ ՀՀ-ում արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպես նաև հանրության համար ոչ անտրային օգտագործման դեպքում ՀՀ Կառավարությունն իրավասու է օգտագործել կամ լիազորել կողմին օգտագործելու գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշն առանց արտոնագրատիրոջ համաձայնության (հարկադիր լիցենզիա), պայմանով, որ արտոնագրատիրոջը պետք է այդ մասին տեղեկացնեն 10 օրվա ընթացքում: Ը վճարեն համապատասխան փոխհատուցում, հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի պայմանները և այդպիսի թույլտվության տևողական արժեքը:

180. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «Արտոնագրերի մասին» նոր օրենքը համապատասխանում է ՄՍԱԱ համաձայնագրի 27-34-րդ հոդվածներին, իսկ հարկադրական լիցենզիայի վերաբերյալ փոփոխություններն ընդունվել են 1996թ. նոյեմբերի 26-ին:

Բույսերի տեսակների պահպանություն

181. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցրեցին, թե արդյոք Հայաստանը կարող է երաշխավորել բույսերի տեսակների պահպանությունը: Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «Սելեկցիոն նվաճումների մասին» ՀՀ օրենքը, որն ապահովում է բույսերի յուրօրինակ տեսակների պահպանությունը, ընդունվել է 1999թ. դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2000թ. դեկտեմբերի 27-ից:

Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաներ

182. Ի պատասխան ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների պահպանության համակարգի վերաբերյալ տրված հարցին, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների պահպանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1998թ. փետրվարի 3-ին և ուժի մեջ է մտել 1998թ. մարտի 14-ից:

Չբացահայտված տեղեկատվության պահանջները, ներառյալ առևտրային գաղտնիքները և ստուգման տվյալները

183. Ի պատասխան Հայաստանում առևտրային գաղտնիքների և չբացահայտված տեղեկատվության պահպանության վերաբերյալ հարցերին, որը հատկապես տրված էր ՄՍԱԿ համաձայնագրի 39-րդ հոդվածի կապակցությամբ, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանը առևտրային գաղտնիքների և չբացահայտված տեղեկատվության պահպանության հարցերը ներառել է Քաղաքացիական օրենսգրքում (141-րդ հոդված և 68-րդ գլուխ): Չբացահայտված տեղեկատվության պահպանության մասին ՀՀ օրենսդրությունն ընդգրկված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում, որը ներառում է ինչպես անբարեխիղճ մրցակցության նորմերը, այնպես էլ չբացահայտված տեղեկատվության պահպանությունը, ուժի մեջ է մտել 2000թ. դեկտեմբերի 15-ից: Այս օրենքով է ստեղծվել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Այս հանձնաժողովը պատասխանատու է նաև անբարեխիղճ մրցակցության համար:

Մտավոր սեփականության իրավունքների խախտումը վերահսկող քայլեր

184. Ի պատասխան այս հարցի, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ մտավոր սեփականության իրավունքների խախտումը կանխարգելելու կամ վերահսկելու համապատասխան քայլերը ներկայացված են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որն ուժի մեջ է մտել 2000թ. դեկտեմբերի 15-ից:

185. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ մտավոր սեփականության խախտման և առևտրի սահմանափակման դեմ պայքարելու նպատակով տրվում է հարկադրական լիցենզիա՝ համաձայն «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի: «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը նշում է, որ եթե գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշը չեն օգտագործվում կամ լիարժեք չեն օգտագործվում հայտը ներկայացնելու թվականից հետո 4 տարվա ընթացքում, կամ արտոնագրի տրման թվականից հետո 3 տարվա ընթացքում, ցանկացած անձ, ով նշված ժամկետները լրանալուց հետո ցանկանում է օգտագործել գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշը, բայց որին չի հաջողվել լիցենզային պայմանագիր կնքել արտոնագրատիրոջ հետ, կարող է դիմում ներկայացնել ՀՀ Կառավարություն՝ հարկադրական լիցենզիայի համար: Այս դեպքում լիցենզիան կտրվի, պայմանով, որ արտոնագրատիրոջ չի ներկայացնի հարգելի պատճառներ իր գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշը չօգտագործելու կամ ոչ լիարժեք օգտագործելու համար: Հարկադրական լիցենզիայի տրման, վճարների հետ կապված պայմանների վերաբերյալ ցանկացած վեճ լուծվում է դատական կարգով:

186. Հետագայում նա նշեց, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ցանկացած անձի պահանջով և դատարանի որոշմամբ ապրանքային նշանի պահպանությունը կարող է դադարեցվել, եթե ապրանքային նշանը անընդմեջ չի օգտագործվել գրանցման թվականից սկսած 5 տարվա ընթացքում, կամ դիմումի ներկայացման թվականին նախորդող 5 տարվա ընթացքում: Ապրանքային նշանի սեփականատերն իրավունք ունի պաշտպանելու իր ապրանքային նշանի չօգտագործման փաստը և կանխելու սեփականության իրավունքի դադարեցման մասին որոշման ընդունումը, եթե ապրանքային նշանների չօգտագործումը պայմանավորված է սեփականատիրոջից անկախ հանգամանքներով:

Կիրարկում

Քաղաքացիական դատական գործընթացներ և փոխհատուցումներ

187. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ քաղաքացիական դատական գործընթացներով միշտ հնարավոր է եղել ապահովել մտավոր սեփականության իրավական պահպանությունը: Դատարաններն իրավասու են պահանջելու վնասների փոխհատուցում և դատարանի ծախսերի ծածկում: ՄՍԱԿ համաձայնագրում նախատեսված այլ հատուցումները նույնպես որոշում կայացնող մարմինների իրավասության սահմաններում են: Ի պատասխան օտարերկրյա քաղաքացիների իրավունքների վերաբերյալ հարցին, և արդյոք փոխհատուցումները, գործընթացները և տուգանքները համապատասխանում են ՄՍԱԿ համաձայնագրի 42-49-րդ հոդվածներին, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ քաղաքացիական դատարանները լիազորված են միջոցներ կիրառել ՄՍԱԿ-ի վերը նշված հոդվածների համաձայն: Քաղաքացիական միջոցները չեն կարող դիտվել որպես վարչական գործընթացներ: Օտարերկրյա քաղաքացիներն այս դեպքերում ունեն նույն իրավունքները, ինչ ՀՀ քաղաքացիները: Քրեական հանցավորության դեմ ձեռնարկված միջոցները իրականացվում են ՀՀ դատարաններում և պատիժներ կիրառող համակարգերում: Օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ կիրառվում են նույն միջոցները, ինչ ՀՀ քաղաքացիների նկատմամբ: Կառավարությունը վերանայում է գործող օրենսդրության փոփոխությունը և լրացուցիչ օրենսդրության կիրառումը, որը պարունակում է ավելի կոնկրետ պայմաններ՝ մտավոր սեփականության իրավունքների կիրարկման համար: Վերջում Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ բացթողնված դրույթները ներառված են Քրեական դատավարության և Քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, որոնք համապատասխանաբար ընդունվել են 1998թ. հուլիսի 1-ին և 1998թ. հուլիսի 17-ին և ուժի մեջ են մտել 1999թ. հունվարի 12-ին և հունվարի 1-ին:

188. Աշխատանքային խմբի որոշ անդամներ հարցրեցին, թե արդյո՞ք Հայաստանի դատական մարմիններն իրավասություն ունեն մտավոր սեփականության իրավունքների խախտման համար դատական արգելանք կիրառելու կամ նախնական միջոցներ ձեռնարկելու համար, որը ներկայացված է ՄՍԱԿ համաձայնագրի 44-րդ և 50-րդ հոդվածներում, և արդյո՞ք վարչական մարմիններն ունեն նույն իրավասությունը: Ի պատասխան Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ դատական մարմիններն ունեն իրավունք դատական արգելանք կիրառելու կամ նախնական միջոցներ ձեռնարկելու համար: «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ, 16-րդ և 22-րդ հոդվածները նշում են այն դեպքերը, երբ հարցերը կարող են լուծվել դատական կարգով: «Ապրանքային և

սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը, ինչպես նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածը նախատեսում են նմանատիպ դրույթներ ապրանքային նշանների, սպասարկման նշանների, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների համար:

Նախնական միջոցառումներ

189. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ առաջին ատյանի դատարանները նույնպես իրավունք ունեն ձեռնարկելու ՄՍԱԱ համաձայնագրի 50-րդ հոդվածով նախատեսված նախնական միջոցառումները:

Վարչական գործընթացներ և միջոցներ

190. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանում քաղաքացիական միջոցները չեն կարող դիտվել որպես վարչական գործընթացներ:

Հատուկ սահմանային քայլեր

191. Որոշ անդամներ հարցրեցին, թե արդյո՞ք Հայաստանն ունի սահմանային կիրարկման համակարգ, ՄՍԱԱ համաձայնագրի 51-60-րդ հոդվածների համաձայն մտավոր սեփականության իրավունքի խախտման դեմ: Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ դատական մարմինները լիազորված են քայլեր ձեռնարկելու ՄՍԱԱ համաձայնագրի 51-60-րդ հոդվածների համաձայն: Վերջում Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ 2001թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Մաքսային օրենսգրքի՝ Մաքսային մարմինների օժանդակությունը մտավոր սեփականության իրավունքների պահպանության հարցում 14-րդ բաժինն ուժի մեջ մտնելուց սկսած լիովին համաձայնեցվել է ՄՍԱԱ համաձայնագրի 51-60-րդ հոդվածների պահանջներին:

Քրեական դատավարություն

192. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ գործող Քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքների խախտումը, մինչև հայտ ներկայացնելը գյուտի հրապարակումը, գյուտի հեղինակային իրավունքի յուրացումը, ինչպես նաև համահեղինակության պարտադրումը պատժվում է 2 տարի ազատազրկմամբ կամ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից քսանապատիկի չափով տուգանքով: Նույն օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանվում է, որ գևորդներին և հաճախորդներին խաբելը պատժվում է 2 տարի ազատազրկմամբ կամ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից քառասունապատիկի տուգանքով: Բացի դրանից նոր դրույթները ներառվել են Քրեական օրենսգրքում, որն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից: Այդ դրույթները համապատասխանեցված են ՄՍԱԱ համաձայնագրի 3-րդ մասի դրույթներին:

193. Հայաստանի ներկայացուցիչը աշխատանքային խմբին ներկայացրեց Քրեական օրենսգրքին և «Հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքին վերաբերող օրենքի նախագիծը, որն ուղղված է ՄՍԱԱ համաձայնագրի կիրառմանը: Նա նշեց, որ այս օրենսդրությունը կընդունվի մինչև ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցելու մասին Գերագույն խորհրդի որոշման ընդունումը: Աշխատանքային խումբը հաշվի առավ այդ մեկնաբանությունը:

Վերը նշվածին վերաբերող օրենքներ, որոշումներ, կանոնակարգեր և այլ իրավական ակտեր

194. Աշխատանքային խմբի որոշ անդամներ նշեցին, որ սկսած 1992թ. Հայաստանը երկկողմ համաձայնագրեր է ունեցել մտավոր սեփականության իրավունքների պահպանության համար: Այդ անդամները նշեցին, որ Հայաստանը պետք է արագացնի իր օրենսդրական գործընթացները, ԱՀԿ-ին ՀՀ-ի անդամակցության թվականից սկսած ՄՍԱԱ համաձայնագրի լիարժեք կիրառումն ապահովելու համար: Ի լրումն, աշխատանքային խումբը պահանջեց պարզաբանել, թե քննարկման ինչ փուլում է գտնվում Ազգային ժողով ներկայացված «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և արդյոք օրենսդրությունը լիովին համապատասխանում է ՄՍԱԱ համաձայնագրի 15-21-րդ հոդվածներին:

195. Ի պատասխան, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ 1997թ. մայիսին Ազգային ժողովն ընդունել է «Ապրանքային և սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը և «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքը, և որ այդ օրենքների վերջերս փոփոխված տարբերակները լիովին համապատասխանում են ՄՍԱԱ համաձայնագրի 15-21-րդ հոդվածներին, ներառյալ 16-րդ հոդվածում նշված իրավունքները:

Վիճակագրական տվյալներ մտավոր սեփականության իրավունքների հայտերի և դրանցով իրավունքների տրամադրման վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած վիճակագրական տվյալ դրանց կիրարկման մասին

196. Ի պատասխան Հայաստանում ներկայացված արտոնագրերի հայտերի քանակի մասին տեղեկատվության պահանջի, Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ 1993-2001թթ. ընթացքում 16834 հայտ է ներկայացվել արտոնագրային վարչություն: Արտոնագիր է տրվել 1220 հայտերով, 426 հայտի համար արտոնագիրը մերժվել է կամ հայտը հետ է կանչվել և 38 հայտ փորձաքննության փուլում են: 1994-2001թթ. ընթացքում ներկայացվել է արդյունաբերական նմուշի 52 հայտ, որոնցից 34-ը՝ օտարերկրյա քաղաքացիներից, և արտոնագիր տրվել է 42 հայտով: Ինչ վերաբերում է ապրանքային և սպասարկման նշաններին և ծագման տեղանուններին, 1996թ. սեպտեմբերին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 7088 հայտ անցել են նախնական փորձաքննություն և 6506 ապրանքային և սպասարկման նշաններ գրանցվել են Հայաստանի արտոնագրային վարչության կողմից: 1997-2001թթ. ընթացքում Հայաստանի արտոնագրային վարչությունը ներկայացվել է 11 հայտ՝ ծագման տեղանունների վերաբերյալ և գրանցվել է յոթ հայտ: Նոր օրենսդրությամբ, ավելի քան 2000 հեղինակներ, թատրոններ և համերգային կազմակերպություններ պայմանագրեր են կնքել հեղինակային իրավունքի ազգային գործակալության հետ:

197. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ Կառավարությունը ՄՍԱԱ համաձայնագրի դրույթները կկիրառի ոչ ուշ, քան ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության թվականից սկսած, առանց որևէ անցման փուլի խնդրանքի: Նա հաստատեց, որ 2002թ. նոյեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է լրացուցիչ անհրաժեշտ փոփոխություններ ազգային ռեժիմի և նախկինում գոյություն ունեցած ստեղծագործություններին ռետրոակտիվ պահպանությունը ընձեռնելու վերաբերյալ, որն ուժի մեջ կմտնի մինչև Գերագույն խորհրդի կողմից ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության մասին որոշման ընդունումը: Աշխատանքային խումբը հաշվի առավ այս մեկնաբանությունները:

6. Առևտրին առնչվող ծառայությունների կարգ

Ընդհանուր

198. Ի պատասխան հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբի անդամներին, որ Հայաստանի օրենքներն ու կանոնակարգերը և քաղաքականության շրջանակները տարբերություն չեն դնում ապրանքների առևտրի և ծառայությունների առևտրի միջև: Առևտրի իրավունքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում, որ իրականացվել է 1999թ. հունվարի 1-ին: Բոլոր ձեռնարկություններից պահանջվում է գրանցվել, և գրանցման գործընթացը բաց է հասարակական ստուգման համար: Այդ պահանջները կիրառվում են բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ՝ անկախ նրանից, դրանք ինքնագրադ անձինք են (մասնավոր ձեռներեցներ), թե՛ առևտրային ձեռնարկություններ:

199. Ծառայությունների առանձնահատուկ պարտավորությունների Հայաստանի ժամանակացույցը ներկայացված է Անդամակցության արձանագրության Հավելվածի Մաս 2-ում:

Առևտրի Համաձայնագրեր

200. Աշխատանքային խմբի որոշ անդամներ պահանջեցին, որ Հայաստանը տրամադրի մանրամասն տեղեկություններ Ազատ և ապրանքափոխանակային առևտրի Համաձայնագրերի վերաբերյալ, որոնց Հայաստանը միացել է: Այլ անդամներ պահանջեցին տեղեկություններ, որպեսզի Աշխատանքային խումբը ի վիճակի լինի քննելու, արդյոք Ազատ առևտրի մասին Հայաստանի բազմակողմ և երկկողմ համաձայնագրերը համատեղելի են ՄԱՀ-1994-ի 24-րդ հոդվածի հետ:

201. Ի պատասխան այս հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը տեղեկացրեց Աշխատանքային խմբին, որ Հայաստանը մշակել է տարբեր երկրների հետ բազմակողմ և երկկողմ համաձայնագրերի մի ցանց: Պայմանավորվածությունների որոշ քանակը կարճաժամկետ է իր բնույթով՝ նախատեսված է պատասխանելու որոշակի կարիքներին, այլ պայմանավորվածություններ դիտվում են որպես ավելի երկարաժամկետ՝ ներկայացնելով այն ուղղությունների՝ Հայաստանի Կառավարության ընկալումը, որոնցով հետագա առևտրային հարաբերությունները պետք է զարգանան: Որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, Հայաստանը կշարունակի վերանայել իր երկկողմ և տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը՝ ոչ միայն իրավական համապատասխանությունը ապահովելու համար, այլ նաև ապահովելու Հայաստանի առևտրային հարաբերությունների համաձայնեցումը լայն բազմակողմ շրջանակների հետ:

Բազմակողմ կամ տարածաշրջանային համաձայնագրեր

202. Ի պատասխան՝ Հայաստանի առևտրի տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի մասին տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Տնտեսական միության ստեղծման մասին Պայմանագիրը հանդիսանում է 1993թ. Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ինը երկրների ղեկավարների կողմից ստորագրված հիմնարար համաձայնագիր (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստանի Հանրապետություն, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան և Ուզբեկստան): Պայմանագիրը նախատեսում է, որ ստորագրող կողմերը կշարժվեն դեպի մաքսային միության և ԱՊՀ երկրների ընդհանուր շուկայի հաստատում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր կողմ կարող է գործադրել իր սեփական հայեցողությունը՝ ԱՊՀ տնտեսական կառույցների մեջ ինտեգրացման արագության և ժամկետների վրա: ԱՊՀ պայմանագրի այլ տնտեսական և ֆինանսական բաղադրամասեր վերաբերում են վճարման միավորներին, ներդրումների և արդյունաբերական համագործակցության ու մաքսային ընթացակարգերի մասին համաձայնագրին: Պայմանագիրը սահմանում է բավականին հատկորոշ պարտավորություններ այս բնագավառներից շատերում (ինչպես նաև մշակութային, գիտական և կաշտպանության հարցերում), քանի որ պայմանագիրը հանդիսանում է զգալիորեն զարգացող հիմնարար փաստաթուղթ, այն չի «գործնականացնում» այդ պարտավորությունները: Դրա փոխարեն սահմանվում են արտոնյալ առևտրային հարաբերությունների մանրամասները ազատ առևտրի երկկողմ համաձայնագրերում և փոփոխվարկային «քլիրինգային» համաձայնագրերում:

203. Նաև ի պատասխան լրացուցիչ տեղեկությունների վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը բացատրեց, որ Հայաստանը հանդիսանում է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (BSEC) անդամ՝ տաս այլ երկրների հետ մեկտեղ (Ալբանիա, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա): Այս համաձայնագիրը ընդգրկում է մի շարք բնագավառներ, ներառյալ՝ տնտեսական համագործակցությունը և առևտուրը, ներդրումները, գիտական և տեխնիկական համագործակցությունը, BSEC բանկի հաստատումը, և համագործակցությունը տրանսպորտի և հաղորդակցության բնագավառներում: Համաձայնագիրը չի նախատեսում որևէ դրույթ արտոնյալ առևտրի վերաբերյալ, չնայած այն կանխատեսում է ազատ առևտրային գոտիների հնարավորությունը հետագայում: Ավելի ընդհանուր ասած, կազմակերպությունը ձգտում է ամրացնել հարաբերությունները հարևան երկրների միջև համագործակցության միջոցով այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ տրանսպորտը, միջազգային վճարումները և արդյունաբերական զարգացումը:

204. Որոշ անդամներ հարցրեցին, արդյոք Հայաստանը կնքել է տնտեսական համագործակցության համաձայնագիր Եվրոպական Միության հետ: Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ 1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի և Եվրոպական Միության միջև ստորագրվել է Գործընկերության և Համագործակցության համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին: Համաձայնագիրը չի նախատեսում որևէ առևտրային արտոնություն:

Երկկողմ ազատ առևտրի համաձայնագրեր և առևտրի ու տնտեսական համագործակցության համաձայնագրեր ԱՊՀ երկրների հետ

205. Ի պատասխան որոշ անդամների՝ Հայաստանի ԱՊՀ երկրների հետ երկկողմ համաձայնագրերի վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ երկկողմ ազատ առևտրի համաձայնագրեր ստորագրվել են Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ: Վավերացվել են մի շարք երկկողմ ազատ առևտրի համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության (1993), Ղրղզստանի Հանրապետության (1995), Թուրքմենստանի (1995), Վրաստանի (1996), Ուկրաինայի (1996), Ղազախստանի (1999) և Բելառուսի (2000) հետ, որոնք դարձել են իրավական բազային բաղկացուցիչ մաս: Երբ ազատ առևտրի համաձայնագրերը ուժի մեջ են կիրառվել են, սակագները սահմանվել են գրոյական մակարդակի վրա, իսկ ոչ սակագնային սահմանափակումները վերացվել են: Հայաստանի ներկայացուցիչը լրացուցիչ պատասխանեց, որ ազատ առևտրի համաձայնագրերը հանդիսանում են Հայաստանի՝ ԱՊՀ երկրների հետ ստորագրած առևտրային և

տնտեսական համագործակցության համաձայնագրերի արդյունք: Այս սկզբնական համաձայնագրերից շատերի շուրջ բանակցում էին յուրաքանչյուր տարի, դրանք նախատեսում էին ազատ առևտուր և ներառում էին այն ապրանքների ցանկերը, որոնց վերաբերյալ կողմերը համաձայնում էին առևտուր անել միմյանց հետ: Մասնավորապես, 1992թ. հետո ապրանքացուցակները միտում ունեին չափարանակելու գների վերաբերյալ նախնական համաձայնություն և պարտավորությունները կատարվում էին միայն մասամբ: Սկսած 1995թ. ապրանքների վերաբերյալ պարտավորությունների գործելակերպը վերացվել է: Այնուամենայնիվ, Ռուսաստանի Դաշնության հետ ԱՎՀ-ի շրջանակներում յուրաքանչյուր կողմ կարող է կիրառել մաքսատուրքեր և արտահանել քվոտաներին, լիցենզիաներին և արտահանման հարկերին ենթակա ապրանքներ: Քանի որ Հայաստանը չի կիրառում արտահանման որևէ սահմանափակում (բացառությամբ՝ որոնք կիրառվում են հասարակական անվտանգության, առողջության և ապահովության նպատակներով), ապա ազատ առևտրի համաձայնագրի մասով Հայաստանը չի արել որևէ վերապահում: Ռուսաստանը պահում է արտահանման որոշակի սահմանափակումներ, որոնք կարող են ընդգրկվել ԱՎՀ-ի բացառությունների դրույթներով, բայց գործնականում դրանք չեն կիրառվում, որպես արդյունք առևտրային և տնտեսական համաձայնագրերի, որ Հայաստանը նույնպես ստորագրում է Ռուսաստանի հետ յուրաքանչյուր տարի: Առանց մաքսերի առևտրի ոչ մի ուրիշ բացառություն չի դիտարկվում Ռուսաստանի և Հայաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրում: Հայաստանի հետ (1992-1997) Ազատ առևտրի համաձայնագիրը ստորագրելուց հետո եկող ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունը զգալիորեն ազատականացրել է իր արտաքին առևտուրը (վերացրել է քվոտաները, արտահանման հարկերը և այլն): Արտահանման սակագնային և ոչ սակագնային կանոնակարգման օրենքները չեն նախատեսում հատուկ ապրանքների ցանկ: Սա ապահովում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ԱՎՀ-ի համապատասխանությունը ազատ առևտրի ԱՀԿ-ի կանոնների հետ: 1997թ. օգոստոսի 28-ին ստորագրած երկկողմ համաձայնագիրը հաստատում է այն փաստը, որ վերացվել է զգալի շեղումը՝ Հայաստանի և Ռուսաստանի միջև ազատ առևտրի ռեժիմից: Չկան բացառություններ մաքսատուրքերի չկիրառման մոտեցումից՝ Թուրքմենստանի, Ուկրաինայի, Դրոզստանի Հանրապետության և Վրաստանի հետ վավերացված երկկողմ համաձայնագրերում:

Երկկողմ փոխհաշվարկային (քիրինգային) համաձայնություններ

206. Ի պատասխան այլ երկրների հետ Հայաստանի ապրանքափոխանակային առևտրի համաձայնագրերին առնչվող տեղեկությունների վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ ապրանքափոխանակությունը հանդիսանում է Հայաստանի մնացող փոխհաշվարկային համաձայնությունների եռությունը: Կառավարությունը պարտավորվել է վերացնել ապրանքափոխանակային համաձայնությունները հնարավորին չափ շուտ, երբ այդ գործնականում հնարավոր է և ընդունում է դրա դերը որպես առևտրի միջոց կամ առևտրի միջնորդ, որ խոչընդոտում է օտարերկրյա գնորդների հետ անկախ կապերի և հարաբերությունների ստեղծմանը, որը հանդիսանում է եական որոշիչ գործոն արտահանման հաջողության համար:

207. Ի պատասխան ապրանքափոխանակման համաձայնագրերից բխող առևտրային հոսքերի քանակության վերաբերյալ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ 1993թ. փոխհաշվարկային համաձայնությունները ներառել են ընդհանուր արտահանման 74 տոկոսը և ընդհանուր ներմուծման 56 տոկոսը: 1994թ. համապատասխան թվերը կազմել են՝ 46 տոկոս արտահանման համար և 29 տոկոս ներմուծման համար: Քանի որ տրանսպորտային և վճարման խնդիրները լուծվեցին, ապրանքափոխանակման առևտրի կարևորությունը հետզհետե նվազեց, և 1995թ. վերջին փոխադրումները փոխհաշվարկային համաձայնությունների շրջանակներում գործնականորեն դադարեցին: Ի պատասխան գոյություն ունեցող ապրանքափոխանակային առևտրի համաձայնությունների մասին տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ հարցերի, Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ 1996թ. Կառավարությունը հայտարարեց ապրանքափոխանակային առևտուրը դադարեցնելու իր մտադրության մասին, և ապրանքափոխանակային նախկին համաձայնություններից ոչ մեկը չվերսկսվեց: Հայաստանի Կառավարությունը չի նախատեսում ունենալ ապրանքափոխանակային կամ փոխհաշվարկային համաձայնություններ հետագայում:

Առևտրի և համագործակցության երկկողմ համաձայնագրեր

208. Հայաստանի ներկայացուցիչը նաև հաղորդեց, որ առևտրի և համագործակցության համաձայնագրեր կնքվել են նաև մի շարք այլ ոչ ԱՊՀ պետությունների հետ, մասնավորապես՝ Արգենտինայի, Ավստրիայի, Բուլղարիայի, Կանադայի, Չինաստանի, Կիպրոսի, Եվրոպական միության, Հունգարիայի, Հնդկաստանի, Իրանի, Լիբանանի, Լիտվայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սիրիայի, Շվեյցարիայի, Սլովենիայի, Սլովակիայի Հանրապետության, Միացյալ Նահանգների և Վիետնամի: Այդպիսի համաձայնագրեր կնքելու հնարավորությունը մի շարք այլ երկրների հետ գտնվում է գործուն դիտարկման ընթացքում: Այդ համաձայնագրերը նախատեսված են ամրապնդելու տնտեսական կապերը, բայց չեն պարունակում որևէ դրույթ նախապատվային առևտրի վերաբերյալ:

Այլ ոչ առևտրային երկկողմ համաձայնագրեր

209. Հայաստանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանը ստորագրել է նաև մի շարք այլ համաձայնագրեր ներդրումների և մաքսային հարաբերությունների մասին: Փոխադարձ ներդրումների խթանման և պաշտպանության համաձայնագրերը ձգտում են խրախուսել ներդրումները կողմերի միջև, առաջին հերթին՝ երաշխավորելով ազգային և առավել արտոնյալ մոտեցումը, օտարումների բացառումը (օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ) և ներդրումային միջոցների ու ներդրումներից ստացված շահույթների առանց սահմանափակման փոխանցումները, միջազգային միջնորդային գործառնությունների իրականացումը՝ կողմերի միջև ծագած վեճերի դեպքում, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների դիմաց երաշխիքների տրամադրումը:

210. Լրացուցիչ նաև նշեց, որ ներդրումային համաձայնագրեր ստորագրվել են 26 կառավարությունների հետ՝ Արգենտինայի, Ավստրիայի, Բելառուսի, Բելգիա-Լյուքսեմբուրգի, Բուլղարիայի, Կանադայի, Չինաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Վրաստանի, Գերմանիայի, Հունաստանի, Իրանի, Իսրայելի, Շվեյցարիայի, Իտալիայի, Դրոզստանի Հանրապետության, Լիբանանի, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության, Չինական Տայվայի, Թուրքմենստանի, Ուկրաինայի, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և Վիետնամի: Մաքսային հարաբերությունների մասին համաձայնագրերը ձգտում են ապահովելու համագործակցությունը և սահուն աշխատանքային հարաբերությունները մաքսային ծառայությունների և մասնակից կողմերի միջև: Այդպիսի համաձայնագրեր ստորագրվել են նաև Վրաստանի, Իրանի, Տաիվանի և Ուկրաինայի հետ:

211. Ի պատասխան Հայաստանի՝ ԱՊՀ երկրների հետ կնքած ազատ առևտրի համաձայնագրերի՝ ՄԱԳՀ-1994-ի 24-րդ հոդվածի հետ համատեղելիության պարզաբանման վերաբերյալ լրացուցիչ պահանջների,

Հայաստանի ներկայացուցիչը հաղորդեց, որ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրների միջև 1994թ. Ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի բազմակողմ և երկկողմ ազատ առևտրի համաձայնագրերը վերացրել են տուրքերը և այլ սահմանափակող կանոնակարգերը կողմերի միջև տեղի ունեցող գրեթե լրիվ առևտրի վրայից: Հայաստանը համարում է, որ այս միջոցառումները համահունչ են ՄԱԳՀ-1994-ի 24-րդ հոդվածի հետ: Նա նշեց, որ ներկայումս Հայաստանը առևտուր է իրականացնում ոչ բոլոր ԱՊՀ երկրների հետ, իսկ ինչ վերաբերում է այն երկրներին, որոնց հետ Հայաստանը առևտուր է անում, ապրանքների ներմուծումների կամ արտահանումների նկատմամբ չի կիրառում հարկեր և չի ստեղծում խոչընդոտներ: Այս համաձայնագրերը չեն ընդգրկում ծառայությունների մատուցումը:

212. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ իր առևտրի համաձայնագրերում Հայաստանը կհետևի ԱՀԿ Համաձայնագրի դրույթներին, ներառյալ՝ ՄԱԳՀ-1994-ի 24-րդ հոդվածի և ԾԱԳՀ-ի 5-րդ հոդվածի, և որ նա վստահ կլինի, որ նախընտրելի առևտրի համակարգերի, ազատ առևտրի գոտիների ու մաքսային միությունների վերաբերյալ պահանջները, որոնց Հայաստանը անդամակցում է, համապատասխան են ծանուցման, խորհրդատվության և այլ պահանջների վերաբերյալ ԱՀԿ Համաձայնագրի դրույթներին՝ սկսած անդամակցության օրվանից: Նա հաստատեց, որ Հայաստանը անդամ դառնալուց հետո, Տարածաշրջանային առևտրի համաձայնագրերի հանձնախմբին (ՏԱՀՀ) կներկայացնի իր ազատ առևտրի գոտու և մաքսային միության համաձայնագրերի ծանուցումները և պատճենները: Նա լրացուցիչ հաստատեց, որ իր առևտրի համաձայնագրերի շրջանակներում փոփոխման ենթակա որևէ օրենք կամ կանոնակարգ, կմասն ԱՀԿ դրույթներին համապատասխան, և, ցանկացած դեպքում, քննության ընթացքում այդ մասին կծանուցվի ՏԱՀՀ-ին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Բազմակողմ առևտրային համաձայնագրեր

213. Հայաստանի ներկայացուցիչը Աշխատանքային խմբին տեղեկացրեց, որ Հայաստանի Կառավարությունը կմիանա Քաղաքացիական օդաօդանավային առևտրի մասին համաձայնագրին՝ արտացոլելով համապատասխան սակագնային պարտավորությունները իր ապրանքների առևտրի կոնցեսիաների ժամանակացույցում: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Թափանցիկություն, Տեղեկությունների հրապարակում

214. Աշխատանքային խմբի որոշ անդամներ պահանջեցին, որ Հայաստանի Կառավարությունը հաստատի, որ անդամակցության օրվանից սկսած՝ ապրանքների կամ ծառայությունների առևտրի հետ կապված բոլոր օրենքները, կանոնակարգերը, վճիռները, որոշումները կամ այլ միջոցները կիրառարակվեն իր պաշտոնական տեղեկագրում հասարակության ուշադրության համար՝ առնվազն երկու շաբաթ նախքան իրականացումը, եթե համապատասխան ԱՀԿ համաձայնագրով որոշված չէ ավելի երկար ժամանակահատված:

215. Հայաստանի ներկայացուցիչը հաստատեց, որ անդամակցության օրվանից սկսած, բոլոր օրենքները, կանոնակարգերը, որոշումները, ապրանքների առևտրի կամ ծառայությունների մատուցմանը առնչվող այլ միջոցառումները հասարակական քննարկման նպատակով կիրառարակվեն պաշտոնական տեղեկագրում՝ առնվազն երկու շաբաթ առաջ նախքան դրանց կիրառումը, եթե ավելի երկար ժամկետ նախատեսված չի համապատասխան ԱՀԿ Համաձայնագրով, և որ ապրանքների կամ ծառայությունների առևտրին առնչվող ոչ մի օրենք, կանոնակարգ և այլն ուժի մեջ չի մտնի առանց այդպիսի հրապարակման: Նա նաև հաղորդեց, որ Հայաստանը լիովին կիրականացնի ՄԱԳՀ-1994-ի 10-րդ հոդվածը ու ԾԱԳՀ-ի 3-րդ հոդվածը և ծանուցում ու հրապարակում պահանջող ԱՀԿ Համաձայնագրերի թափանցիկության ապահովումը: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Ծանուցումներ

216. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ Հայաստանի Կառավարության 2000թ. հունիսի 17-ի N 321 որոշմամբ հաստատել և այժմ գործում է «Հայաստանի Հանրապետությունում ԱՀԿ ծանուցման գործակալությունը», որի ինտերնետային հասցեն է www.wtonc.am և Գործակալության կապի միջոցների հասցեներն են՝ Էլ-փոստ wtonc@wtonc.am, ֆաքս (374 1) 543 983, հեռ. (374 1) 543 981 և 543 982:

217. Հայաստանի ներկայացուցիչը ասաց, որ մինչև Անդամակցության արձանագրությունը ուժի մեջ մտնելու պահը Հայաստանը կներկայացնի ԱՀԿ Համաձայնագրի բաղկացուցիչ մաս կազմող Համաձայնագրով պահանջվող բոլոր նախնական ծանուցումները: Հետագայում Հայաստանի ընդունած ցանկացած կանոնակարգ, որը գործողության մեջ է դնում ԱՀԿ Համաձայնագրի բաղկացուցիչ մաս կազմող որևէ Համաձայնագիր իրագործելու նպատակով ընդունված օրենքներ, նույնպես կհամապատասխանի այդ Համաձայնագրի պահանջներին: Աշխատանքային խումբը նշում կատարեց այս պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ:

Եզրակացություններ

218. Աշխատանքային խումբը նշում կատարեց Հայաստանի՝ իր արտաքին առևտրին առնչվող բացատրությունների և հայտարարությունների վերաբերյալ: Աշխատանքային խումբը նշում կատարեց այն պարտավորությունների կապակցությամբ, որ Հայաստանը ստանձնել է որոշ առանձնահատուկ հարցերի առնչությամբ, որոնք նշված են սույն Չեկույցի 23, 29, 34, 36, 37, 47, 53, 54, 60, 64, 65, 70, 72, 73, 80, 86, 87, 97, 102, 104, 106, 112, 115, 119, 135, 136, 143, 144, 148, 150, 153, 156, 166, 193, 197, 212, 213, 215 և 217 կետերում: Աշխատանքային խումբը նշում կատարեց, որ այդ պարտավորությունները ընդգրկվել են Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցության Արձանագրության կետ 2-ում:

219. Ունենալով Հայաստանի արտաքին առևտրի կարգի կատարված քննությունը և Հայաստանի ներկայացուցչի կատարած բացատրությունների, պարտավորությունների և կոնցեսիաների լույսի ներքո, Աշխատանքային խումբը հանգեց այն եզրակացությանը, որ Հայաստանը պետք է հրավիրվի միանալու ԱՀԿ-ն հիմնադրող Համաձայնագրին՝ 12-րդ հոդվածի դրույթների համաձայն: Այս նպատակով Աշխատանքային խումբը պատրաստել է Անդամակցության արձանագրությունը և որոշման նախագիծը, որոնք բերված են սույն Չեկույցի Հավելվածում, և նշում է կատարել Ծառայությունների վերաբերյալ առանձնահատուկ պարտավորությունների Հայաստանի ժամանակացույցի (փաստաթուղթ WT/ACC/ARM/23/Add.2) և գյուղատնտեսության ու ապրանքների վերաբերյալ կոնցեսիաների և պարտավորությունների իր ժամանակացույցի վերաբերյալ (փաստաթուղթ WT/ACC/ARM/23/Add.1), որոնք կցված են Անդամակցության արձանագրությանը: Առաջարկվում է, որ այս փաստաթղթերը հաստատվեն Գլխավոր խորհրդի կողմից, երբ այն ընդունի սույն Չեկույցը: Որոշումն ընդունվելուց հետո Անդամակցության արձանագրությունը բաց կլինի Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրելու համար, և նա կդառնա Անդամ՝ արձանագրությունը վավերացնելուց երեսուսու օր հետո: Աշխատանքային խումբը հետևաբար համաձայնեց, որ նա ավարտել է իր աշխատանքը՝ կապված ԱՀԿ-ն

հիմնադրող Համաձայնագրին Հայաստանի անդամակցության համար տարվող բանակցությունների հետ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1
(133-րդ կետի վերաբերյալ)**

Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Կառավարության մայիսի 12-ի N 239 որոշմամբ, լրացումներով հանդերձ՝ ընդունված 2001թ. փետրվարի 17-ի N 110, 2001թ. ապրիլի 12-ի N 297 և 2001թ. սեպտեմբերի 6-ի N 825 որոշումներով:

Նկարագրություն	Ծածկագիր
Տավարի միս, սառեցված	0202
Խոզի միս, սառեցված	020321-020329
Տավարի ու խոզի ուտելի փորոտիքը, սառեցված	020621 000, 020622, 020641
Թռչնի միս և ուտելի փորոտիքը, սառեցված	020712, 020714, 020725, 020727, 020733, 020736
Խոզի ճարպ	020900 110
Միս և ուտելի փորոտիք՝ աղ դրած, աղաջրով, չորացրած, ապխտած	0210
Ձուկ, ձկան միս՝ սառեցված, չորացրած, աղ դրած, ապխտած	0303, 030420, 0305
Կաթ և կաթնամթերք	0401, 0402, 040310, 040510, 040590, 0406
Թռչնի ձվեր	040700
Ոլոռ, սիսեռ, ոսպ	0713-071340
Բանան, արմավ, արքայախնձոր, չամիչ, սեխ, չորացրած մրգեր	080300, 080410 000, 080430 000, 0805, 080620, 0807, 0813
Սուրճ, թեյ	0901, 0902
Բրինձ	1006
Հացահատիկային ալյուր	110100, 1103
Սոյա, գեյթուն, արևածաղկի սերմ, եգիպտացորենի ձեթ	150710 900, 150990 000, 151219 910, 151529 900
Կենդանական և բուսական յուղեր և ձեթեր, մարգարին	1516, 1517
Մսի պատրաստուկներ, ձկներեն կամ խեցգետիններ, կակղամորթներ և ջրային այլ անողնաշարավորներ	1601-1605
Շաքար, քաղցրավենիքներ	1701, 170290, 1703, 1704
Կակաո, կակաո պարունակող պատրաստուկներ	180500 000, 1806
Մանկական սնունդ	190 110 000
Հացահատիկներից պատրաստուկներ, ալյուր, օսլա և կաթ, հրուշակեղեն	1902-1905 (բացառությամբ 190590 300)
Բանջարեղեններից պատրաստուկներ, մրգեր, ընկուզեղեն կամ բուսական այլ մասեր	2001-2009
Չանազան ուտելի պատրաստուկներ, թթխմոր, պաղպաղակ, պանրի ֆոնդյու	2101-2105, 210690 100
Ըմպելիքներ, ոգելից խմիչքներ և քացախ	2201-2209
Թուրուն և թուրունի պատրաստված փոխարինողներ	2401-2403
Սեղանի աղ	250 100 910
Բնական ավազներ՝ գունավորված կամ ոչ գունավորված	2505
Խճաքար՝ բետոնի համար օգտագործվող	251 710 100
Պորտլանդ-ցեմենտ՝ ոչ գունավորված և հրաբխային տուֆից	252321 000, 252390 300
Նավթամթերքներ	2707, 2710, 2711
Պարարտանյութեր	3102-3105
Ներկեր	3208, 3209
Օձանելիք, գեղեցկության կամ շպարման պատրաստուկներ և պատրաստուկներ վարսերի վրա օգտագործման համար, պատրաստուկներ բերանի հիգիենայի համար, սափրման համար, հոտազերծիչներ և քրտնքի դեմ միջոցներ	3303-3306, 330710 000, 330720 000
Օճառ, լվացման և մաքրման միջոցներ	3401, 3402 20, 3402 90
Ջրաշիջանակ արգելակի, հակասառցման հեղուկներ և դրանց ենթանյութեր	381900 000, 382000 000
Առարկաներ պլաստմասսայից՝ փախադրման, փաթեթավորման, ամանեղենի և խոհանոցի պիտույքների համար	392310-392330, 392410 000
Օդաճնշման անվադողեր՝ ավտոմեքենաների, բեռնատարների և ավտոբուսների համար օգտագործվող	401110 000, 401120
Վերանորոգված կամ օգտագործված օդաճնշման անվադողեր	4012
Հակաբեղմնավորիչ միջոցներ, ծծակ մանուկների համար	401410 000, 401490 100
Տնային տնտեսության և սանիտարական առարկաներ թղթից, ցելյուլոզային բամբակից կամ ցելյուլոզային թելի ցանցերից, բամբակ	481810, 481820, 481840, 560110
Տղամարդու, կնոջ կամ երեխաների պիժամներ, ներքնաշորեր՝ տրիկոտաժային կամ գործված	6107-6109, 6207, 6208
Մանկական հագուստ՝ տրիկոտաժային կամ գործված	6111, 6209
Էլեկտրոդներ և դատարկ լարեր գունավոր մետաղից՝ էլեկտրական ճուլման համար	831110 900, 831120 000
Տնային էլեկտրամեխանիկական սարքեր	8509 (բացառությամբ 850990)
Տնային էլեկտրական տաքացման սարքեր, ջրի տաքացուցիչներ, ջրասույզ եռացուցիչներ	8516 (բացառությամբ 851680, 851690)
Էլեկտրական սառոց միացման-անջատման, էլեկտրական շոթաների	

Կաշտնայնության համար, Էլեկտրական շղթաներին կամ նրանց մեջ միացումներ կատարելու համար	853620 100, 853641, 853650, բացառությամբ 8536 50 900) 853661, 853669, 853690
Էլեկտրական լամպեր	853922, 853931
Էլեկտրական կաբելներ և լարեր	8544 20 000, 8544 41 100, 8544 49 200, 854 459 800, 8544 70 000
Ներարկիչներ պլաստմասայից՝ ասեղով և առանց ասեղի	901 831 100
Ռևոլվերներ և ատրճանակներ՝ No. 93.03 or 93.04 վերնագիր ունեցողներից սարքեր	9302 00
Հարթափող միափող սպորտային կամ որսի հրացաններ	Սկսած 9303 20 800 - ից
Հարթափող երկփող սպորտային կամ որսի հրացաններ	Սկսած 9303 20 800 - ից
Բազմանպատակ հրացաններ	Սկսած 9303 20 800 - ից
Ակոսափող սպորտային և որսորդական հրացաններ	Սկսած 93 03 30 000 - ից
Գազային ատրճանակներ և ռևոլվերներ՝ արցունքաբեր կամ գրգռիչ նյութեր օգտագործող	Սկսած 9303 90 000 - ից
Լուսազդանշաններ և այլ լուսային ազդանշանների արձակման այլ սարքեր	Սկսած 9303 90 000 - ից
Սերոգրաֆիայի սարքեր (գազային գլաններ), հեղուկացիոներ՝ լիցքավորված արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով	Սկսած 9304 00 000 - ից
Օդաճնշման և գազային զենքեր, ինչպես նաև վախեցնող զենքեր	Սկսած 9304 00 000 - ից
Գամիչ կամ նմանատիպ գործիքներ կամ կենդանիների արդյունաբերական սպանողի համար նախատեսված ատրճանակից դուրս թռչող փամփուշտներ	Սկսած 9306 10 000 - ից
Կոտորակային հրացանների փամփուշտներ	Սկսած 9306 21 000 - ից
Կոտորակային փամփուշտների պարկուճներ	Սկսած 9306 29 400 - ից
Գնդակներ ադաճնշման զենքերի համար	Սկսած 9306 29 700 - ից
Փամփուշտների խիցեր՝ որսորդական կամ սպորտային զենքերի համար	Սկսած 9306 29 700 - ից
Փոքր գնդակներ, կոտորուք և մանրագնդակ	Սկսած 9306 29 700 - ից
	Սկսած 9306 30 100 - ից
	Սկսած 9306 30 980 - ից
Փամփուշտի գնդակներ ակոսափող և հարթափող զենքերի համար	Սկսած 9306 29 700 - ից
	Սկսած 9306 30 100 - ից
	Սկսած 9306 30 300 - ից
	Սկսած 9306 30 980 - ից
Փամփուշտներ գազային ատրճանակների և ռևոլվերների համար	Սկսած 9306 30 910 - ից
	Սկսած 9306 30 930 - ից
Փամփուշտներ և հրթիռներ ազդանշանային զենքերի համար	Սկսած 9306 30 910 - ից
	Սկսած 9306 30 930 - ից
Թրեր, սուսերներ, սվիններ, նիզակներ ու նման զենքեր և դրանց մասերը, տուփերն ու պատյանները	9307 00 000
Խաղալիքներ	9502, 9503 (բացառությամբ 950291 000, 950299 000)

**ՀԱՎԵԼՎԱԾ 2
(63-րդ կետի վերաբերյալ)**

Ցանկ՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով չհարկվող այն ապրանքների, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում համաձայն 2001թ. հունիսի 29-ին ընդունված «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքի.

Ճածկագիր	Սպրանքների համառոտ նկարագիր
01	Կենդանիներ
040811800	Ձվի փոշի
070110	Կարտոֆիլի սերմացու
100190100	Կոշտ ցորեն աղալու համար
100300100	Գարու սերմ
1005	Եգիպտացորեն
1107	Սծիկ
1108	Ինսուլին
12	Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ, դեղաբույսեր և բույսեր տեխնիկական նպատակների համար, ծղոտ և անասնակեր բացառությամբ
120600	Արևածաղկի հատիկներ
1301	Դոճխեժ՝ բնական չմաքրած բնական ծյուրեր, սոսնձախեժեր և բւեկնախեժ (օրինակ՝ բալասաններ)
151530100	Կաստորային յուղ
1703	Մաթ
1801	Հատիկավոր կակաո, աղացած, չոր կամ բոված
2102	Խմորիչներ՝ ակտիվ և ոչ ակտիվ այլ մեռած միաբջջե մանրէներ (բացառությամբ ապրանքային No 30.02 դիրքի պատվաստանյութերը), հացաթխման պատրաստի փոշիներ
23	Մետաղի արդյունաբերության մնացորդներ և թափոններ, պատրաստի կոմբինացված կեր բացառությամբ՝
230910	Շների և կատուների կեր, մանրածախ առևտրի համար բաժնեծորված
2401	Ծխախոտի հումք և ծխախոտի թափոններ
250100100	Ծովի ջուր և աղ լուծույթների տեսքով
250100510	Աղ (ներառյալ սեղանի և բնափոխված աղ) և նատրիումի մաքուր քլորիդ, ջրի մեջ լուծած կամ չլուծած, ինչպես նաև այնպիսի հավելյալ ազեղանքների պարունակությամբ, որոնք խոչընդոտում են մասնիկների իրար կապելը (որոնք ապահովում են չոր մթերքների սորունությունը և հեղուկների հոսունությունը) թե՛ բնական պրոցեսների և թե՛ արդյունաբերության մեջ, ներառյալ մաքրման պրոցեսը, բացառությամբ պահածոյացման և կենդանիների համար սննդի պատրաստման ոլորտը
250300	Ծծումբ բոլոր տեսակների, բացի սուբլիմացված ծծումբը, նստվածք առաջացրած կամ կողորակալան
250510	Սվազ սիլիցիումային (սիլիկատային) և ավազ կվարցային
250830	Հրակայուն կավ
2512	Ինֆուզորային հողեր [լեռնայուր] սիլիկային (օրինակ՝ կիզելգուր, տրեպել և դիատոմիտ) և համանման սիլիկային հողեր, կալցինացրած կամ չկալցինացրած, թվացյալ տեսակարար կշռով 1 կամ ավելի պակաս

251910	Մագնիսի կարբոնատ՝ մագնեզիտ
251990100	Մագնիսի օքսիդներ, բացառությամբ կալցիացիան բնական մագնիսի կարբոնատի
2520	Գիպս. անհիդրիդ. գիպսի լուսակուճ (իրենից ներկայացնում է կալցիումացիոն գիպս կամ կալցիումի սուլֆատ), չներկած կամ ներկած, ոչ մեծ քանակությամբ արագացուցիչներ կամ դանդաղացուցիչներ պարունակող կամ չպարունակող
252890000	Բորատներ բնական և դրանց խտանահանքերը (կալցիացիան կամ չկալցիացիան), բացի բնական աղալուծույթներից ստացվածը, բնական բորաթթու՝ չոր կյուբի հաշվարկով գանգվածում 85%-ից ոչ ավելի H3BO3 պարունակող
